

Արմեն Այվազյան

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ
4-5 -րդ դարեր

Երկրորդ, լրամշակված հրատարակություն



**Նվիրվում է հայոց
հերոսների անմար հիշատակին**



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

ARMEN AYVAZYAN
THE CODE OF HONOR OF THE
ARMENIAN MILITARY
(4–5th CENTURIES)

Yerevan – 2021

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

АРМЕН АЙВАЗЯН
КОДЕКС ЧЕСТИ
АРМЯНСКОГО ВОИНСТВА
(IV–V ВЕКА)

Ереван – 2021

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ

**ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ
(4-5-րդ դարեր)**

Երկրորդ, լրամշակված հրատարակություն

Երևան – 2021

ՀՏԴ 94(479.25):355

ԳՄԴ 63.3(5Հ)+68.0

Ա 551

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

**Ա 551 Արմեն Այվազյան, Հայ զինվորականության պատվո վար-
քականոնը (4-5-րդ դարեր),** Երևան, Մատենադարան, 2021,
96 էջ, 1 ներդիր:

Ուսումնասիրությունը բացահայտում է հայ զինվորականության
գաղափարական և բարոյահոգեբանական արժեհամակարգը 4-5-րդ
դարերում: Համեմատական քննության են ենթարկվում ասպետական,
սամուրայական և հայ զինվորական պատվո վարքականոնները: Ուր-
վագծվում են հայ ժողովրդի մտայնության և մշակույթի վրա հին հայ-
կական զինվորական դասի թողած ազդեցությունները, ինչպես նաև
հայկական զինուժի թվաքանակը հին և միջին դարերում: Վկայակոչ-
վում ու մեկնաբանվում են օտարների՝ հայոց մարտական հատկանիշ-
ներին տված գնահատականները:

*Առաջին անգամ հրատարակվել է 2000 թ., Երևան, «Մատենադա-
րան» Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ, «Արտագերս»
հրատ., 48 էջ:*

ՀՏԴ 94(479.25):355

ԳՄԴ 63.3(5Հ)+68.0

ISBN 978-9939-9257-6-9

© Արմեն Այվազյան, 2021

© Մաշտոցյան Մատենադարան, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ռազմական պատմություն	
Հոսունմասիրվածությունը	6
Հայ ռազմիկի գաղափարախոսությունը ելակետը	6
Հայ զինվորականությունը պատվո վարքականոնի հիմնադրույթները	9
Զուգահեռներ սամուրայական, ասպետական ու հայ զինվորական վարքականոնների միջև	18
Հայ ռազմիկի բարոյահոգեբանական արժեհամակարգի առանձնահատկություններն ու ճյուղավորումները	28
Պատվո վարքականոնի դրույթները Եղիշեի երկում	33
Հայկական զորաբանակի թվաքանակը	39
Հայերի ռազմական հատկանիշները՝ օտարների գնահատմամբ	50
Վերջաբանի փոխարեն. զինվորական պատվո վարքականոնները արդի ժամանակաշրջանում	55
Ծանոթագրություններ	58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԱԶՄԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՉՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հայկական քաղաքակրթության ավելի քան չորսհազարամյա պատմության ընթացքում ազգային զինված ուժերն ունեցել են կենտրոնական և վճռորոշ դերակատարում, որը, ցավոք, դեռևս ըստ արժանվույն հետազոտված ու գնահատված չէ*։ Տարբեր դարաշրջաններում հայոց զորքերի թիվը, կազմակերպական կառուցվածքը, զենքն ու զինամթերքը, պաշտպանական ամրաշինությունների համակարգը, ռազմարվեստը, ռազմական հայեցակարգն ու տերմինաբանությունը դեռևս կարոտ են խոր և բազմակողմանի ուսումնասիրության։ Հին և միջնադարյան Հայաստանի զինուժը չի դիտարկվել, մասնավորապես, սոցիալական, էթնիկական և ռազմական հոգեբանության տեսանկյուններից, այնինչ այդ ոլորտում հետազոտությունների անցկացումը թելադրվում է ոչ միայն զուտ ակադեմիական-կրթական նպատակներով, այլև կիրառական մեծ նշանակությամբ՝ վերածնված հայկական բանակի ընթացիկ շինարարությունը ազգային հաստատուն և ճիշտ հիմքերի վրա դնելու առումով։

Սույն ուսումնասիրությունը նպատակ ունի բացահայտելու 4-5-րդ դարերի հայ զինվորականության գաղափարական և բարոյահոգեբանական արժեքների համակարգը**։

ՀԱՅ ՈԱԶՄԻԿԻ ԳԱՂԱՓԱՐԱՆՈՍՈՒԹՅԱՆ ԵԼԱԿԵՏԸ

Հայաստանի անկախության ամենաեռանդուն ջատագովն ու պաշտպանը միշտ եղել է հայ զինվորականությունը։ Պատահական չէ, որ, օրինակ, 5-8-րդ դարերում օտար տիրապետության դեմ ազատագրական պատերազմներն առաջնորդել են հայոց զորքի գլխավոր հրամանատարները՝ Մամիկոնյան սպարապետները. 450-451, 481-484, 571-572 թթ.՝ Պարսկաստանի, 538-539 թթ.՝ Բյուզանդիայի¹, 747-753, 772-775 թթ.՝ Արաբական

խալիֆայության դեմ: Հայ մատենագրությունը հարուստ նյութ է պահպանել հայ զինվորականության և հայոց բանակի գաղափարախոսությունը լուսաբանելու համար:

Քննությունն սկսենք այն պատգամ-հրահանգներից, որ սպարապետ Մանվել Մամիկոնյանը (ծն.թ. անհայտ – մահ. 384 թ.) տվել է իր որդի Արտաշիրին՝ «գտէրութիւն իւր և զսպարապետութիւն զօրավարութեանն իւրոյ» նրան հանձնելու պահին.

«Եվ պատվիրեց նրան... «պատերազմի՛ր և անձը քո զոհի՛ր հանուն Հայոց աշխարհի, ինչպես քաջ նախնիներդ են այս աշխարհին սիրահոծաւ զոհաբերել իրենց կյանքը»»²:

Հայոց զորքերի գլխավոր հրամանատարի՝ հանուն հայրենիքի անձնագոհության դիմելու այս պատվիրանը ոչ այլ ինչ էր, քան հայ զինվորականության գաղափարական-բարոյահոգեբանական պրոֆեսիոնալ արժեհամակարգի և գործող պատվովարձականների բաղկացուցիչ մաս³:

Մանվել Մամիկոնյանն ինքը ողջ կյանքի ընթացքում առաջնորդվում էր նույն այդ ուղենիշ-պատվիրանով: Այսպես՝ երբ նա արդեն անհուսալի վիճակում պառկած էր անկողնում, և նրա շուրջն էին հավաքվել թագավորն ու թագուհին, նախարարները, տղամարդ ու կին, Մանվելը մերկանում է և ցույց տալիս Հայաստանի անկախությունը պաշտպանելու համար մղված պատերազմներում իր ստացած բազմաթիվ վերքերը.

«Իրամի մեծության չափ ողջ տեղ չէր մնացել նրա մարմնի վրա, այլ խոցված էր պատերազմների մեջ և ավելի քան ճիւղն ու սպիռնը ստացված վերքերից, նույնիսկ՝ իր առնամաղամի վրա. անգամ այն բանալով՝ ցույց տվեց բոլորին»⁴:

Այս դրվագն ամենևին առասպելական բնույթ չունի, ինչպես կարծում էին մեր բանասեր հայագետները⁵: Հին Հռոմաստանում ու Հին Հռոմում ռազմիկները ևս ի ցույց էին դնում մարտերում իրենց ստացած սպիները, որոնք խորհրդանշում էին անձի հերոսությունն ու անձնավիրությունը: Հին Հռոմում նախկին ռազ-

միկները նույնիսկ դատարանում էին ցուցադրում իրենց սպիները, որպեսզի անցյալում երկրին մատուցած մարտական ծառայությունների միջոցով դրական ազդեցություն գործեն ատենակալների վրա և ապացուցեն իրենց ազնվությունն ու առաքինությունը: Ընդ որում, մարմնի հետևի մակերեսի սպիներն անպատվաբեր էին համարվում, քանի որ շատերը հավատացած էին, թե զինվորը վիրավորվել է փախուստի դիմելիս: Ընդհակառակը, առջևի մասի սպիները մեծապես գնահատվում էին, որովհետև կարծիք կար, թե զինվորը վիրավորվել է հարձակման ժամանակ⁶: Ռազմի դաշտում ստացած սպիները գնահատվել և ուշադրություն են գրավել նաև նոր ժամանակներում: Այսպես, մարշալ Կ. Կ. Ռոկոսսովսկին, պատմելով Ստալինգրադի ճակատամարտի մասին, իմիջիայլոց այսպես էր նկարագրում 4-րդ բանակի հրամանատար գեներալ Վ. Դ. Կրյուչենկինին. «Դա մի լավ, խիզախ սրամարտիկ (рыбака) էր, ով առանձնապես աչքի ընկավ բասմաշների դեմ մղված մարտերում: Ըստ երևույթին, նրան էլ քիչ բաժին չէր ընկել, քանի որ գլուխն ու դեմքը խազմված էին թրի բազմաթիվ հարվածների սպիներով»⁷:

Արդարև, Փավստոսի հաղորդումը Մանվել սպարապետի սպիների մասին միանգամայն հավաստի է: Հատկանշական է, որ 451 թ. սպարապետ Վարդան Մամիկոնյանը նույնպես անթաքույց հպարտությամբ էր հիշատակում իր և իր զինվորների մարտական վերքերը. «Եվ մեզնից ամեն մեկս էլ ահավասիկ շատ վերքեր ու սպիներ ունենք մեր մարմինների վրա»⁸:

Անձը հանուն հայրենիքի զոհելու նույն գաղափարն իր «Հայոց պատմության» ամբողջ շարադրանքում քարոզում է նաև Մովսես Խորենացին, ինչպես, օրինակ՝ հայ ռազմիկ-թագավոր Արամի մասին հետևյալ հատվածում.

«Սա, աշխարհասեր և հայրենասեր մարդ լինելով... լավ էր համարում հայրենիքի համար մեռնել, քան տեսնել, թե ինչպես օտարածիմների ոռդիք ռոմակոխ են անում իր հայրենիքի սահմանները և օտար մարդիկ տիրում են իր արյունակից հարազատների վրա»⁹:

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ՀԻՄՆԱԳՐՈՒՅԹՆԵՐԸ

Հայ զինվորականության պրոֆեսիոնալ արժեհամակարգը դասակարգելու նպատակով ստորև առաջարկվում է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» Հինգերորդ դպրության 20-րդ գլխի պատմական-կառուցվածքային իմաստաբանական վերլուծությունը¹⁰: Պատմիչն ինքն ահա այսպես է ստորակարգել սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի (ծն. թ. անհայտ – մահ. 376 թ.) անձնական առաքինությունները և հայրենիքին մատուցած ծառայությունները (տեքստի իմաստային բաղադրամասերը համարակալել ենք - Ա. Ա.).

«Հայոց Մուշեղ սպարապետի մասին

Հայոց փառազորավարը և սպարապետը (Մուշեղը) իր ամբողջ կյանքում լի էր մեծ եռանդով և նախանձախնդրությամբ,

(1) նա հավատարմությամբ ու արդար վաստակով, ջանասիրությամբ ու մշտապես ծառայում էր Հայոց աշխարհին և թագավորությանը: Նա գորուգիշեր գործի մեջ էր. ջանում ու ճգնում էր պատերազմի ճակատներում և երբեք թույլ չէր տալիս, որ Հայոց աշխարհի սահմաններից գեթ մեկ կորու չափ հող օտարվի¹¹: Նա կյանքն էր դրել իր երկրի համար.

(2) և կմեռներ փառի անվան համար,

(3) իր բնիկ տերերի համար,

(4) իր երկրի բնակիչների համար,

(5) Բրիտանական հավատի համար,

(4.1 և 5.1) Աստծուն հավատացող և Քրիստոսի անունով մկրտված ժողովրդի համար,

(5.2) եկեղեցիների համար,

(5.3) և նրանց արքայան սպասների համար,

(5.4) Քրիստոսի վկայարանների համար,

- (5.5) Աստծու ուխտի համար,
- (6) իր փույրերի և եղբայրների համար,
- (7) իր մերձավոր տոհմակիցների համար,
- (8) հանուն հավատարիմ և առաքինի այն բարեկամների, [որոնք] զորավար Մուշեղի [հետ] մշտապես եղել են հերոսական կոիվների մեջ և կյանքը զոհաբերել հայրենիքի համար¹²:
- (2.1) Եվ մահն արհամարհելով՝
- (3.1) իր կյանքի բոլոր օրերում ծառայում էր իր բնիկ Արշակունի տերերի համար»¹³:

Վերը փաստորեն մեկ առ մեկ թվարկված են հայ զինվորականի՝ Հայաստան պետության և հայ ազգի առջև ստանձնած գլխավոր հանձնառությունները: Հենվելով այս արժեքավոր տվյալների վրա, ըստ Փավստոս Բուզանդի նշած առաջնակարգությամբ, ստորև ներկայացնում ենք 4-5-րդ դարերի հայ զինվորականության պատվո վարձականոնի գլխավոր դրույթները.

1. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն անկախ Հայաստան աշխարհին, երկրին ու թագավորությանը:
2. Ասպետական պատվի և համարումի («քաջի անվան») անբիծ պահպանում, հարկ եղած դեպքում՝ նաև կյանքի գնով:
3. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի պետական համակարգի ամենակարևոր նվիրագործված հաստատությունը՝ Հայաստանի թագավորին (Արշակունի «բնիկ տերերին»):
4. Հավատարմություն և անձնուրաց ծառայություն Հայաստանի ժողովրդին, բոլոր բնակիչներին անխտիր՝ անկախ նրանց սոցիալական ծագումից և դիրքից:
5. Քրիստոնեական հավատի և ազգային եկեղեցու նկատմամբ բարեպաշտ վերաբերմունք և դրանց անձնուրաց պաշտպանություն:

6. Նվիրվածություն ընտանիքին:
7. Նվիրվածություն տոհմակիցներին:
8. Հավատարմություն զինակիցներին:

Այսպիսով՝ Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» Հին-գերորդ դարերի 20-րդ գլուխը բավական ամփոփ և հստակ վկայաբերում է 4-5-րդ դարերի հայ զինվորականության պրոֆեսիոնալ արժեհամակարգը, որը բաղկացած էր Արշակունյաց Հայաստանում արտոնված, քարոզվող ու կենսագործվող պետական գաղափարախոսության ամենակարևոր տարրերից: Այս գաղափարական-բարոյահոգեբանական արժեքները կոչված էին հատկապես սպայակույտի շարքերը համալրող պատանիներին դաստիարակելու հայկական բանակի ելակետային նպատակների և ավանդական վարքուբարքի համաձայն, ինչպես նաև ընդգծելու հայրենիքի և ժողովրդի առջև հայ ռազմիկի ունեցած պարտականությունները:

Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» նշված գլխի ավարտուն բովանդակությունը, կուռ կառուցվածքը, հակիրճ և հատու սահմանումները հնարավորություն են տալիս ենթադրել, որ այդ հատվածը ներկայացնում է նաև 4-5-րդ դդ. Մեծ Հայքի թագավորության բանակում ընդունված երդմնատվության տեքստը մեկ թեթևակի տարբերությամբ՝ առաջին դեմքով արտասանվելու փոխարեն այն շարադրված է երրորդ դեմքով: Իրականում այդ գրավոր կամ բանավոր վավերագրի նախնական ձևն այսպիսին պետք է լիներ. «Ես հավատարմությամբ ու արդար վաստակով, ջանասիրությամբ ու մշտապես ծառայելու եմ Հայոց աշխարհին և թագավորությանը: Զօրուգիշեր գործի մեջ եմ լինելու. կշանամ ու կճգնեմ պատերազմի ճակատներում և երբեք թույլ չեմ տա, որ Հայոց աշխարհի սահմաններից գեթ մեկ կորու չափ հող օտարվի: Կյանքս կդնեմ երկրիս համար...» և այլն:

Փավստոս Բուզանդը պահպանել է նաև իր դարաշրջանի համար հույժ բնութագրական մի հավատարմության երդում, որն

ըստ նրա՝ Պապ թագավորին էր տվել Մուշեղ սպարապետը (սպարապետ Վասակ Մամիկոնյանի որդին)՝ Ներսես Մեծ կաթողիկոսի ներկայությամբ:

«...բռնեց Պապ թագավորի ձեռքը և երդվեց՝ ասելով. «Ես կապրեմ ու կմեռնեմ հանուն քեզ, ինչպես իմ նախնիները՝ հանուն քո նախնիների, ինչպես իմ հայրը՝ հանուն քո հայր Արշակի, նույնպես և ես՝ (կյանքս կտամ) քեզ համար...»¹⁴:

Արժեհամակարգային վերոբերյալ դրույթներն այնքան էին արմատավորված հայ զինվորականության մտայնության և վարքագծի մեջ, որ դարեր անց էլ նույնությամբ պահպանվել և կյանքի են կոչվել բազմաթիվ ազատագրական պատերազմների ժամանակ: Օրինակ, 775 թ. ապրիլի 25-ին, Արձնի գյուղի մոտ, արաբական վեցապատիկ գերակշիռ ուժերի դեմ անհավասար ճակատամարտի մեջ մտնելով, հայ ռազմիկները դարձյալ ոգեկոչում էին իրենց ավանդական պատվո վարքականոնի՝ մեզ արդեն ծանոթ դրույթները: Ղևոնդ պատմիչի վկայությամբ՝ նրանք

«Վաջալերում էին միմյանց այսպիսի խոսքերով՝ «Վաջությամբ մեռնենք հանուն մեր աշխարհի և հանուն մեր ազգի, ու թող մեր աչքերը չտեսնեն մեր սրբաբանների և մեր Աստծու փառավորման վայրերի ոտնակոխ լինելն ու պղծվելը, այլ նախ՝ թշնամյաց սուրը թող մեր դեմ ուղղվի, ապա միայն թող լինի այն, ինչ կկամենան»¹⁵:

Հայոց բարձրագույն զինվորականության՝ սպարապետի և նախարարների՝ հայրենիքի համար զոհաբերվելու նույն պատրաստակամությունը Ղևոնդը հիշում է երկու այլ տեղերում ևս: Ահա.

«[Հայոց նախարարները] նախընտրելով փառությամբ մեռնել, քան դժնդակ կյանք վարել՝ ձեռնամուխ եղան ապստամբության և դուրս եկան իսլամական իշխանության ենթակայությունից»:

«Եվ թեպետ կարող էին անցնել Հումաց երկիր և փրկել իրենց կյանքը հարստահարիչների շարասեր ապիրատությունից, սակայն նախընտրեցին մեռնել, քան տեսնել մեր աշխարհի կորուստը և Քրիստոսի եկեղեցիների անպատվությունը»¹⁶:

Մեկ հազարամյակ անց բառացիորեն նույն դիրքորոշումով օսմանյան զավթիչների դեմ պայքարում հանդես է գալիս Սյունյաց հայոց իշխանապետության հիմնադիր, զորավար Դավիթ-բեկը: Երբ 1725 թ. օսմանյան զորահրամանատարությունը նրան վերջնագիր է ներկայացնում, թե «նա, իրեն ենթակա հայերի հետ միասին, հնազանդություն պետք է հայտնի թուրք սուլթանին ու մտնի թուրքական հպատակության տակ», Դավիթ-բեկն այսպիսի պատասխան է տալիս.

«Ես ձեզ չեմ ենթարկվում, ձեր հպատակության տակ լինել չեմ ուզում և ձեր դեմ պատերազմելու եմ քանի դեռ ողջ եմ: Իսկ երբ մեռնեմ, այն ժամանակ ինձ հաջորդողները թող այնպես վարվեն, ինչպես կկամենան»¹⁷:

Դավիթ-բեկի զորահրամանատարներից մի քանիսին անձամբ ճանաչած մխրթարյան պատմիչ Ղուկաս Սեբաստացու (ծն. 1709 թ. – մահ. 1751 թ.) պատկերավոր բնութագրության համաձայն, Սյունյաց իշխանապետի և նրա մարտիկների գաղափարաբարոյական կերպարն այսպիսին էր.

«Ես իմն Դավթ ազնուական էր, բարեպաշտ, արդարակորով, արիասիրտ, երկայնամիտ խորհրդով, զօրաուր բանիմ եւ գործով, տեղեակ գրոց, նախանձայոյզ բարեաց ազգի, եւ վրէժխնդիր վնասակարաց նորա, սոյնպէս եւ ամենայն հետեւողի իւր... արք՝ որք զանձինս իրեանց եղեալք էին առ ի ազատ լինելոյ ի լծոյ ծառայութեանն այլազգեաց»¹⁸:

Հայ ազատագրական շարժման անզուգական գործիչ, տաղանդավոր զինվորական ու դիվանագետ Հովսեփ Էմինի (ծն. 1726 թ. – մահ. 1809 թ.) արժեհամակարգում ևս առկա էին նույն կետերը, ինչը պարզ երևում է նրա հետևյալ տողերից.

«...ամեն կերպ ջանամք ազատվել այլազգիների և անօրեն բռնակալների հպատակությունից՝ կա՛մ մեռնենք արիաբար հանուն մեր փրկչի անվան, և կա՛մ Աստված մեր առաջադիմական գործին հաջողություն պարգևի: ...ըստ ասույթի՝ որտեղ չկա մահվան վտանգ, այնտեղ չկա փառք ու պատիվ»¹⁹:

Այսպիսով՝ անգամ անկախ հայոց պետության միջանդարյա բացակայությունից հետո ազատագրության դրոշ պարզած հայ ռազմիկների արժեհամակարգում անփոփոխ էր մնացել առանցքային դրույթը՝ մահն օտար հպատակությունից ու պատվազրկությունից գերադասելը:

Իրականում այս գաղափարաբարոյական հիմնադրույթը հայ զինվորականության միջավայրում սկիզբ է առել վաղնջական ժամանակներից՝ հայկական պետության և բանակի ստեղծմանը զուգընթաց: Հին հայկական գրականության մեջ առաջինն այն հնչեցրել ու ձևակերպել է ոչ այլ ոք, քան ինքը Հայկ Նահապետը՝ Տիտանյան Բելի բանակի դեմ դուրս եկած իր սակավաթիվ զորքին դիմելիս.

«Կա՛մ մեռնենք և մեր ժողովուրդը Բելի տիրապետության տակ ընկնի, կա՛մ մեր մատների հաջողությունը նրա վրա ցուցադրենք, որպեսզի [թշնամու] ամբոխը ցրվի և հաղթանակը մեզ հասնի»²⁰:

Փաստորեն, հայկական միջավայրում ռազմաարժեհամակարգային վերոհիշյալ կետերը դարեդար պահպանվել էին գրեթե անփոփոխ վիճակում՝ բառային նույն ձևակերպումներով: Սա բացատրվում է ոչ միայն հայոց ոսկեդարյան պատմագրության հետագայում չընդհատված լայն ընթերցումով, այլև 4-5-րդ դարերում Հայոց եկեղեցու հաստատած հատուկ տոներում հայ զինվորականության պատվո վարքականոնի հիմնական դրույթների հստակ արձանագրումով և շարունակական քարոզումով: Խոսքը Վաչանների և Վարդանանց հիշատակության օրերի մասին է:

338 թ. տեղի ունեցավ հայ-պարսկական հերթական խոշոր պատերազմը, որի ընթացքում երկու կողմերն էլ տվեցին մեծ կորուստներ: Ռազմի դաշտում զոհվեց նաև սպարապետ Վաչե Մամիկոնյանը: Թեև թշնամու հարձակումը կասեցված էր՝ Մեծ Հայքն ընկղմվել էր սգի մեջ: Հենց այդ ժամանակ կաթողիկոս Վրթանես Ա-ը (Գրիգոր Լուսավորչի ավագ որդին) արձագանքելով ստեղծված ծանր իրադրությանը և անշուշտ ունենալով Խոսրով Մեծ Հայոց թագավորի (330-338 թթ.) լիակատար աջակցությանը, արձակեց մի կոնդակ, որով այդուհետ ամեն տարի Հայաստանի համար զոհված ռազմիկների հիշատակը ոգեկոչվելու էր առանձին տոն օրով: Նահատակված հայ զինվորները հավասարեցվում էին Քրիստոսի վկաներին, այլ կերպ ասած՝ սրբացվում էին: Ավելին, շեշտվում էր, որ կոնդակը վերաբերում է ոչ միայն վերջին պատերազմում ընկածներին, այլև բոլոր նրանց, ովքեր ապագայում կզոհվեն հանուն «Հայոց աշխարհի»²¹:

Կոնդակի բովանդակությունն արտացոլված է Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» Երրորդ գլխի 11-րդ գլխում՝ Վրթանես կաթողիկոսի ուղիղ խոսքում: Այդ ճառում դժվար չէ նշմարել հայ զինվորականության պատվո վարքականոնի դրույթները, որոնք ստորև համարակալում ենք՝ ըստ վերն արված դասակարգման.

«Մխիթարվեցե՛ք Քրիստոսով, որովհետև նրանք, որ զոհվեցին,

(1) մեր աշխարհի,

(5) եկեղեցիների և աստվածատուր հավատի համար (զոհվեցին), որպեսզի

(1) մեր աշխարհը չգերվի, ֆարուսանդ չլինի,

(5, 8) սուրբ եկեղեցիները չպղծվեն, նահատակները չանարգվեն, (եկեղեցական) սպասները պիղծ և անհավատ մարդկանց ձեռքը չանցնեն, սուրբ ուխտը չաղավաղվի,

(4) մկրտված ժողովուրդը գերի չգնա ու չմատնվի անհավատների պաշտամունքի զանազան պղծություններին:

(1, 2, 4, 5, 6, 7, 8) Եթե թշնամիները մեր աշխարհը գրավեն, այստեղ կհաստատեն իրենց անօրեն, անհավատ, անաստված կար-

գերը, որ հուսանք, թե երբեք լինելու չէ: Իսկ մեր բարեպաշտ նահատակները այս բանի համար պատերազմ մղեցին և չարիքը մեր աշխարհից հալածելով ու հեռացնելով՝ զոհվեցին, որպեսզի անհավատությունն այս աստվածապաշտ ու աստվածասեր աշխարհը մոտեցնեին չգործի և չարի կամքին ծառա չդարձնի ու շատ հոգիներ, որ ջերմեռանդ, անկեղծ սիրով իրար հետ կապված են, միմյանցից չբաժանի, չփայփայի: Իսկ սրանք մինչ կենդանի էին, արդար ջանքով շարշարվեցին այս բանի համար և մեռնելիս հաստատ պահեցին իրենց հավատարմությունն ու իրենց անձերը զոհեցին աստվածային ճշմարտության համար, եկեղեցիների, նահատակների, կրոնի սուրբ ուխտի, հավատի կարգերի համար, Բաղնայական ուխտի և Քրիստոսի անունով անթիվ նոր մկրտվածների ու (3) (Հայաստան) աշխարհի բնիկ տիրոջ համար:

Եվ նրանք, որ իրենց կյանքը շինալեցին հանուն այս ամենի, պետք է մեծարվեն Քրիստոսի համար նահատակվածների հետ: Ուրեմն նրանց չողբանք, այլ արժանապես պատվենք նահատակների հետ. մշտական կարգ սահմանենք ամբողջ մեր աշխարհում, որ ամեն ով անխափան կատարի սրանց բարի հիշատակը՝ ինչպես Քրիստոսի նահատակների: Իսկ մենք տոն կատարենք և ուրախ լինենք, որ Աստված սրանցով մեզ հետ հաշտ լինի ու այսուհետև խաղաղություն շնորհի»:

Եվ Վրթանես մեծ Բաղնայակետն օրենք սահմանեց՝ երկրում տարեցտարի նրանց հիշատակը կատարել, ինչպես և նրանց, որոնք նույն կերպով երկրի փրկության համար կզոհվեն: Կանոն դրեց՝ սրանց անունները հիշել աստծու սեղանի առաջ պատարագի ժամանակ՝ երբ սրբերի անունները հիշատակվեն, որոնցից հետո՝ սրանցը, իսկ (6) ընկածների հարազատներին հոգ և խնամք տանեն»²²:

Այսպիսի եկեղեցապետական օրենքն աննախադեպ էր հին և վաղ միջնադարյան քրիստոնյա աշխարհում: Այն պարզորեն միտված էր ամրապնդելու Հայաստանի թագավորության միասնականությունն ու հայ ժողովրդի համախմբվածությունն ընդդեմ օտար կայսրությունների զավթողական նկրտումների:



Վաչե Մամիկոնյանին և նրա ընկած զինվորներին՝ Վաչան-
ներին (Վաչեանք) մեծարող տոնն սկզբում՝ 338 թ. ի վեր, նշվում
էր Մակաբայեցիների օրը՝ օգոստոսի 1-ին: 451 թ. մայիսի 26-ին
տեղի ունեցած Ավարարայրի ճակատամարտից հետո Հայոց
եկեղեցին համատեղեց սուրբ Վաչանների և սուրբ Վարդա-

նանց տոները և սկսեց դրանք միասնաբար նշել՝ նույն օգոստոսի 1-ին: 8-րդ դարի սկզբին Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը (717–728 թթ.) որոշեց Վարդանանց տոնն անջատ նշել՝ Բարեկենդանին նախորդող երեքշաբթի օրը՝ առանձնացնելով այն Մակաբայեցիների և Վաչանների տոնից: Իսկ սկսած արդեն XIV դարի առաջին կեսից մինչ օրս Վարդանանց սուրբ նահատակների ոգեկոչման օրն ամեն տարի նշվում է Մեծ պահքի նախորդող հինգշաբթի օրը²³:

Հասկանալի է, որ հարյուրամյակներ շարունակ եկեղեցական համազգային այս տոնակատարություններում հանուն հայրենիքի նահատակված հայ զինվորների տարի առ տարի ոգեկոչումը, նրանց սրբազործված արժեհամակարգային դրույթների հիշատակումն ու թվարկումը պետք է հսկայական ազդեցություն գործեին հայոց իրարահաջորդ սերունդների մտայնության վրա և արթուն պահեին հայ ժողովրդի ռազմական ոգին: Ընդ որում, այն երկարատև դարաշրջաններում, երբ Հայաստանում դեռ գործում էր հայկական զինուժ, զանազան առիթներով, ըստ ամենայնի՝ նաև նույն եկեղեցական արարողություններին կից անցկացվել են զինվորական տարատեսակ հանդիսավոր միջոցառումներ (օրինակ՝ զինվորական երգման ծիսակատարություններ, ձիավարժություններ, մրցամարտեր)՝ էլ ավելի խորացնելով ու հստակեցնելով օրվա խորհուրդը:

ԶՈՒՊԱՅԵՌՆԵՐ ՍԱՍՈՒՐԱՅԱԿԱՆ, ԱՄՊԵՏԱԿԱՆ ՈՒ ՎՅՑ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

Սակայն վերադառնանք հայ զինվորականության պատվո վարքականոնի բաղադրամասերի քննությանը: Վերն առանձնացված 2-րդ, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ դրույթները նկատելիորեն նման են միջնադարյան Եվրոպայի ասպետների և ճապոնական սամուրայների պատվո վարքականոններում եղած տարրերին:

Այսպես՝ 1716 թ. ավարտած իր հռչակավոր «Հագակուրե» (բառացի՝ «Տերևներում թաքնվածը») երկում²⁴, արտահայտելով և մանրագնին մշակելով սամուրայի պատվո վարքականունը՝ Բուսիդոն (բառացի՝ ռազմիկի ճանապարհ), Յամամոտո Յունետոմոն²⁵ (ծն. 1659 թ. – մահ. 1719 թ.) նմանապես շեշտում էր ռազմիկի համար մահն արհամարհելու անհրաժեշտությունը: «Հագակուրե»-ում ասվում է.

«Բուսիդոն՝ ռազմիկի ճանապարհը, նշանակում է մահ: Երբ ընտրություն կատարելու համար ունես ընդամենը երկու ճանապարհ, անմիջապես ընտրիր այն, որը տանում է դեպի մահ: Մի՛ խորհիր: Ուղղիր միտքդ այն ճանապարհի վրա, որին նախապատվություն տվեցիր և գնա՝

Ակամայից հարց է առաջանում. «Ինչո՞ւ ես պետք է մեռնեմ, եթե դա օգտավետ չէ, ինչո՞ւ պետք է կյանքով վնասեմ հանուն ոչնչի»: Մեռնե՞ս ասես մարդկանց սովորական դատողություններ են: Երբ պետք է ընտրություն կատարես, թույլ մի՛ տուր օգուտի մասին մտքերին տատանել խելքդ: Քանի որ մենք բոլորս էլ ապրելը նախընտրում ենք մեռնելուց, այդ նախընտրությունն էլ հենց որոշում է մեր ընտրությունը: Մտածիր ղեզ սպասող անպատվության մասին, երբ դու, ձգտելով օգուտի, հանկարծ կսխալվես: Մտածիր այն մարդու թշվառ նակատագրի մասին, ով իր նպատակին չի հասել և դեռ շարունակում է ապրել...

Հիշի՛ր, մահդ չի գցում քո արժանապատվությունը: Մահը չի պատվագրկում:

...Պարտի կատարումդ պետք է լինի անթերի, իսկ անունդ՝ անբիծ:

...Ռազմիկը յուրացնում է սամուրայի ուղին այն ժամանակ միայն, երբ նա արդեն մշտապես պատրաստ է լինում մահվան:

...Սամուրայը պարտավոր է տալ իր իշխանին իր հոգին և մարմինը: Բացի այդ, նա պետք է լինի իմաստուն, գթասիրտ և բաշ:

...Ուր էլ որ ես գտնվեմ՝ խուլ սարերում թե գետնի տակ, միշտ և ամենուր իմ պարտքը պարտավորեցնում է ինձ պաշտպանել տի-

րոջս շահը: Դա բոլոր նրանց պարտքն է, ովքեր Նաբեսիմայի հպատակն են: Դա մեր կրոնի ողնաշարն է՝ անփոփոխ և հավերժ... Նույնիսկ մեռնելուց հետո ես յոթն անգամ հարություն կառնեմ, որպեսզի դժբախտություններից պաշտպանեմ իմ տիրոջ տունը:

Ես երգվում եմ կատարել չորս պատվիրան.

1. Պարտքը կատարելիս՝ ոչնչի առջև չընկրկել:
2. Օգտակար լինել իմ տիրոջը:
3. Ծնողների հանդեպ լինել հարգալից:
4. Լինել գթասիրտ»²⁶:

Հատկապես ուշագրավ է Արշակունյաց շրջանի հայ զինվորականի և ճապոնական սամուրայի պատվո վարքականոններում առկա այն նույն պահանջը, որը կյանքից վեր էր գնահատում պատիվն ու հավատարիմ ծառայությունը գերակային (սյուզերենին, «տիրոջը»): Այս առթիվ Փավստոս Բուզանդն ունի պերճախոս մի քանի այլ տեղեկություն ևս: Դրանցից մեկը վերաբերում է Պարսկաստանում պատահած մի դեպքի.

«Ապա պատահեց այս օրերից մեկում, որ Հայոց Արշակ թագավորը մտավ Պարսից արքայի ախոռներից մեկը, իսկ Պարսից արքայի ախոռապետը նստած էր ներսը՝ ախոռում: Երբ նա թագավորին տեսավ, ոչ մի մեծարանք կամ ողջույն չտվեց և նրան անուշադրության մատնեց ու դեռ ավելին՝ ծաղրեց և անարգանքի ենթարկեց նրան՝ ասելով. «Այժմ հայերի թագավոր, եկ այս խոտի խուռձի վրա նստիր»:

Երբ այս խոտերը լսեց Մեծ Հայքի գորավար և սպարապետ Վասակը, Մամիկոնյան տոհմից, սաստիկ բարկացավ ու զայրացավ և, փաշելով իր սուրը, որ կախած էր մեջքից, հարվածեց, տեղնուտեղը նույն ախոռի մեջ էլ գլխատեց պարսից արքայի ախոռապետին, որովհետև չկարողացավ լսել ու կոչ տալ իր թագավորի անարգումը. *նա բազում անգամ ավելի լավ էր համարում*

իր անխուսափելի մահը, քան իր տիրոջ հասցեին որևէ վիրավորանք կամ անարգանք լսելը (ընդգծումն իմն է՝ Ա. Ա.)»²⁷:

Ճապոնական «Հագակուրե»-ի սամուրայ հեղինակի՝ մահվանից շերկնչելու և անբիծ քաջի անուն ունենալու մասին կոչերը գրեթե նույնությամբ արտաբերում է Մանվել սպարապետը՝ վերն արդեն մասամբ վկայակոչված իր պատգամում, որն այժմ հարկ է մեջբերել ամբողջապես.



«Եվ պատվիրեց նրան հնազանդ և հպատակ լինել Արշակ Թագավորին, լինել ազնիվ, տփնաջան և աշխատասեր. «Եվ պատերազմի՛ր և անձը քո զոհի՛ր հաճումն Հայոց աշխարհի, ինչպես քաջ նախնիներդ են այս աշխարհին սիրահոծար զոհաբերել իրենց կյանքը: Որովհետև, – ասաց, – դա շատ արդար և Աստծուն ընդունելի գործ է, ու եթե այդպես վարվե՛ք, Աստված ձեզ ամտես չի անի:

Երկրի վրա փառքի անուն թողեմ և արդարությունը երկնքին ընծալեմ: Եվ մահից ամենևին մի վախեցեմ, այլ հույսը դրեմ նրա վրա, ով ամեն ինչ ստեղծել և հաստատել է: Ձեզնից դուրս վանեմ նենգությունը, պղծությունը և չարությունը և Տեր Աստծուն պաշտեցեմ մաքուր սրտով ու հավատարմությամբ: Համարձակ մեռնեմ հանուն աստվածապաշտ [Հայոց] աշխարհի, որովհետև հենց այդ մահն է Աստծու համար, նրա եկեղեցիների և նրա ուխտի, այս աշխարհի բնիկ տերերի՝ Արշակունիների համար»»²⁸:

Այս հատվածը շատ պարզ ցույց է տալիս, թե հայ հրամանատարներն ինչ հմտությամբ ու հավատով են օգտագործել քրիստոնեական ուսմունքն իբրև մարտաշունչ գաղափարախոսություն՝ Հայաստանի ազատության համար մղվող գրեթե անընդմեջ պատերազմներում: «Նայաստանի համար զոհվելը հենց Աստծու համար է». – քարոզում էին Մանվել սպարապետը և, անշուշտ, 4-5-րդ դարերի հայոց մյուս զորագլուխները («ի վերայ աստուածապաշտ [Հայոց] աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է»): Սրանով նրանք ներդաշնակության էին բերում հայ զինվորի՝ շատ ավելի հին շրջանում ձևավորված և անթիվ մարտերի մեջ սրբագործված պատվո վարքականոնը (մասնավորապես, հանուն հայրենիքի կյանքը զոհաբերելու գաղափարական գլխավոր դրույթը)՝ հարաբերականորեն նոր ձեռք բերված քրիստոնեական հավատի և կրոնական զգացմունքների հետ: Հայրենիքի համար մեռնելն աստվածահաճո գործ լինելու հավատով էլ հայ քրիստոնյա ռազմիկը մարտնչեց հետագա բոլոր դարերում:

Մանվել սպարապետից մոտ մեկ դար անց նրա տված «Ձեզնից դուրս վանեք նենգությունը, պղծությունը և չարությունը» պատգամը երկրորդում է նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանը՝ կոչ անելով Ավարայրի դաշտում կենտրոնացած հայոց զորքին հրաժարվել մարզկային մոլորություններից ու որդեգրել առաքինի բարքեր. «Եվ ահա եկել-հասել է ժամանակը, որ ամեն մի կեղտ կոշված բան հեռացնենք մեզանից»»²⁹:

Հայոց սպարապետների վերոբերյալ պատգամները հայ ռազմիկներին՝ որոշակիորեն համընկնում են սամուրայների վարքականոնի հետ: Օրինակ, Տագեդա Նոբուսիգեն (ծն. 1525 – մահ. 1561) իր ժառանգներին թողած կտակ-պատգամում կարգադրում էր. «Տիրոջդ հետ միշտ ազնիվ եղիր: ...եթե տիրոջդ մոտ ծառայության մեջ ես, ապա միշտ փութաջան եղիր»³⁰:

Նույնը պահանջը գտնում ենք նաև «Հագակուրե»-ում.

«Եղեմ ճշմարտասեր զինվորական ծառայության մեջ: Կեղծ մարդիկ երբեք չեն կարող ազնվորեն ծառայել զենքին:

...Մարդու մարզմանը վերջ չկա: Կինում է այնպես, որ սկսում ես քեզ զգալ կատարելության հասած և դադարում ես զբաղվել նրանով, ինչով զբաղվում էիր մինչ այդ: Մինչդեռ նա, ով ուզում է կատարյալ լինել, պետք է միշտ հիշի, որ ինքը դեռ շատ հեռու է դրանից:

...Մարզելով իրեն՝ զինվորը երբեք չպետք է մտածի հանգստի մասին»³¹:

Մեկ ուրիշ սամուրայ, Տակեդա Նոբուսիգեն (ծն. 1525 թ. – մահ. 1561 թ.) ևս սամուրայներից ճշմարտախոսություն էր պահանջում. «Երբեք և որևէ հանգամանքներում չի կարելի ստել: Աստվածների մարգարեություններում ասվում է. «Թեև ճշմարտությունը ոչ միշտ է անմիջապես վարձատրվում, բայց վերջի-վերջո այն կարժանանա աստվածությունների և Բուդդայի հավանությանը»³²: Բարձրաստիճան սամուրայ Տորի Մոտոտադան (ծն. 1539 թ. – մահ. 1600 թ.) էլ շեշտում էր. «Տղամարդու... պարտքի հիմքում ընկած է «ճշմարտություն» բառը»³³:

Նմանապես, իշխանազարմ Ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Շնորհալին (ծն. 1102 թ. – մահ. 1173 թ.) 1166 թ. գրած իր «Թուղթ ընդհանրական»-ի մեջ՝ «Զինվորական դասին» («Առ զինվորաց դասս») գլխում ևս ընդգծում էր զինվորի ճշմարտասիրության կարևորությունը և այն խախտելու պարագայում աստվածային պատժի անխուսափելիությունը.

«իսկ [այն զինվորը], ով խաբեբայություն կանի խոսքով կամ գործով... այդ խաբեբայությամբ Աստծուն է դեմ դուրս գալիս, այլ ոչ մարդուն: Եվ նա Աստծուց էլ ընդունելու է պատիժը որպես իր չարիքների հատուցում»³⁴:

Նկատենք նաև, որ տակավին Ք.ա. 5-րդ դարում ճշմարտասիրությունը ռազմիկի համար պարտադիր հատկանիշ էր համարում չինացի անգերազանցելի ռազմագետ Սուն-Ցզին³⁵: Նույն դարում ապրած հույն պատմագիր Հերոդոտոսն էլ, խոսելով պարսիկների (իրականում՝ պարսից ազատանու) բարքերի և սովորույթների մասին, պնդում էր, որ նրանք «առավել ամոթալի են համարում ստելը», իսկ իրենց արու զավակներին «հինգ տարեկան հասակից մինչև քսանամյա հասակը սովորեցնում են միայն երեք բան՝ ձիավարել, նետաձգություն և ճշմարտախոսություն»³⁶: Հույն աշխարհագրագետ և պատմիչ Ստրաբոնը (ծն. Ք.ա. 63 թ. – մահ. Ք.հ. 24 թ.) փոքր-ինչ խմբագրում է Հերոդոտոսի այս հաղորդումները, գրելով, թե պարսիկ «երեխաները 5 տարեկան հասակից մինչև 24 տարեկանը զբաղվում են նետաձգությամբ, տեգարձակմամբ, ձիավարությամբ և ըմբշամարտով»³⁷:

Ճիշտ նույն ռազմականացված մտայնությունն էլ գերիշխում էր հին և միջնադարյան հայկական ազատանիում, ուր պատանի սերնդի առջև խստագույնս դրված էին և՛ ճշմարտախոսության, և՛ ձիավարության, և՛ զենքի տարբեր տեսակներին լավ տիրապետելու պահանջները: Հայ նախարարական տոհմերի արու զավակների դաստիարակության մասին որոշակի պատկերացում կարելի է կազմել, օրինակ, Վարդան Մամիկոնյանի երեք զարմիկների՝ մարտական պատրաստության գործում արձանագրած առաջանցիկ հաջողություններից: Ըստ Ղազար Փարպեցու՝

«Նետաձգության մեջ նրանք գեղեցկաձիգ էին ու դիպուկ, նաև՝ թեթևաշարժ ու [ախոյանին] կանխող վեռորոշ (մահացու) հար-

ված հասցնող, երկու ձեռքով էլ վարժ ու հաջողակ, ամեն տեսակետից ուղղամիտ ու շնորհալի»³⁸:

Հարձակողական զենքի երեք տեսակներին՝ աղեղին, նիզակին և թրին գերազանց էր տիրապետում նաև տակավին պատանյակ Արտավազդ Մամիկոնյանը, ով չենթարկվելով սպարապետ Մանվել Մամիկոնյանի սաստիկ արգելքին՝ մեծ արդյունավետությամբ մասնակցում է պարսիկների դեմ մղված ճակատամարտերից մեկին³⁹:

Հայոց ռազմական ու ռազմադաստիարակչական այս ավանդույթները ձգվեցին երկար դարեր՝ գրեթե նույնությամբ պահպանվելով անգամ Կիլիկյան Հայաստանի գորաբանակում, որտեղ «ասպետների» կամ «ձիավորների» («հեծելվորներ», «ձիավարժներ») աստիճանին հասնելու համար զինվորականը պետք է հրապարակավ քննություն բռներ ձիավարժությունից, նիզակի գործածությունից, նետաձգությունից և ռազմիկին անհրաժեշտ այլ գիտելիքներից ու հմտություններից: Այդ ամենից հետո հատուկ «ձիավորեցուցանելու» ծիսակատարություններ, որը կատարվում էր նշանավոր տոնահանդեսների ժամանակ, նրան տրվում էր «ձիավորի», «ձիավարժի» կամ «ասպետի» կոչում⁴⁰: Թեև այդ կարգի միջոցառումներում հստակորեն զգացվում է 12-14-րդ դարերում Կիլիկյան հայոց հետ սերտ շփման մեջ մտած խաչակիր ասպետների ազդեցությունը, բայց, ինչպես տեսանք, հայկական ասպետության ավանդույթներն ունեին շատ ավելի հին պատմություն ու ամենևին մոռացված-անհետացած չէին: Կիլիկիայի ձիավոր-ասպետները բուն Հայաստանի հայոց այրուծի լիարժեք ժառանգորդն էին: Կասկածից վեր է, որ նրանք դավանել են հին հայ զինվորականության ավանդական պատվո վարքականոնի գլխավոր դրույթներին՝ դրանք համապատասխանեցնելով աշխարհաքաղաքական նոր իրադրությանն ու հասարակական փոփոխված միջավայրին: Բացի այդ, սկզբունքորեն տարբեր էին հայ ասպետության և խաչակիրների կենսագործունեության ու գաղափարախոսու-

թյան հիմքերը, որոնք ժամանակին ճշգրիտ բնութագրել է Ս. Վ. Բոռնազյանը. «Կիլիկիայի հայ ձիավոր-ասպետները չէին հետապնդում ուրիշի երկրները զավթելու և կողոպտելու նպատակ, ինչպիսիք էին հոգևոր ասպետական օրդենների նպատակները, այլ հայ ձիավորի նպատակն էր պաշտպանել Կիլիկյան հողում վերականգնված հայ պետականությունը և նրա սահմանները, ապահովել ու պաշտպանել թուրք-սելջուկյան և մոնղոլական արշավանքներից ու բարբարոսություններից մազապուրծ ազատված հայ զանգվածների կյանքն ու ունեցվածքը»⁴¹:

Եվրոպայում ասպետները (ֆրանսերեն՝ chevalier, անգլերեն՝ knight, գերմաներեն՝ ritter, որից էլ ռուսերեն՝ рыцарь), որպես առանձին ռազմաավատատիրական խավ, ձևավորվել են 8-րդ դարի վերջերից: Այս խավի գործունեությունն ու սոցիալական նշանակությունն առավել ցայտուն արտահայտվեցին խաչակրաց արշավանքների ժամանակ՝ 11-14-րդ դարերում: Ասպետները մեկ ընդհանուր օրինականացված գրավոր վարքականոն չեն ունեցել⁴², սակայն նրանց աղոթքների և պահպանված զանազան աշխատությունների ու տեքստերի հիման վրա մասնագետներն առանձնացնում են ասպետական վարքագծի հետևյալ պարտադիր պահանջները. հավատարմություն գերակային, անվեհեր քաջություն, վտանգների և դժվարությունների արհամարհում, ինքնազոհողություն, ջերմեռանդ կրոնասիրություն, քրիստոնեական եկեղեցու և նրա պաշտոնյաների պաշտպանություն, օժանդակություն ասպետական տոհմերի որբացած և տկար անդամներին, առատաձեռնություն, Աստծո և մարդկանց առջև անբիծ կյանքի վարում, կանանց հետ բարեկիրթ վարվեցողություն⁴³: Եվրոպացի ասպետը քրիստոնյա հայ զինվորականի պես հավատացած էր, որ հոգին կարելի է փրկել պատերազմելով ու նահատակվելով հանուն արդար նպատակի, օրինակ, անհավատների դեմ կռվում կամ իր տիրոջ շահերը, թուլյին, իր սեփական պատիվն ու ժառանգությունը պաշտպանելիս: Ասպետական վարքականոնի այս նույն միտքը գեղե-

ցիկ է արտահայտել ավելի ուշ շրջանում անգլիացիների դեմ կռված ֆրանսիացի կապիտան և բարոյախրատական գրքի հեղինակ Ժան դը Բյուրն. «Մենք՝ խոնարհ զինվորներս, նույն հաջողությամբ կիրկենք մեր հոգիները զենքի միջոցով, քան եթե ապրեինք՝ մտորելով եղելության արմատների և կարգի մասին»⁴⁴: Ուշագրավ է, որ տակավին 451 թ. Ավարայրի բախտորոշ ճակատամարտից առաջ այս կանխադրույթով էին քաջալերում հայոց զորքին նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանն ու նրա զինակից Ղևոնդ երեցը.

Վարդան Մամիկոնյան. «Զէ՞ որ եթե չափից շատ երկար ապրելով ծերանանք, միևնույն է՝ այս մարմնից պետք է դուրս գանք, որպեսզի մտնենք կենդանի Աստծու մոտ, ումից այլևս երբեք չենք անջատվելու: ...իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով. միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»⁴⁵:

Ղևոնդ երեց. «...եղբայրներ, չքույանանք ու չվհատվենք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք ...թշնամիների վրա...: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք՝ կապրենք և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ»⁴⁶:

Վերոբերյալ պատմական օրինակներին հարկ է ավելացնել ևս մեկ դրվագ: 371 թ. Դավրեժ (Թավրիզ) քաղաքի մոտակայքում տեղի ունեցած ճակատամարտում Հայոց բանակը գերեվարում է պարսից Շապուհ Բ արքայի ամբողջ կանանոցը, այդ թվում՝ «տիկնանց տիկնոջը», սակայն Մուշեղ սպարապետը նրանց բոլորին ազատ է արձակում.

«Բայց Հայոց Մուշեղ զորավարը թույլ չտվեց որևէ կերպ անարգել Պարսից Շապուհ թագավորի կանանց, այլ կարգադրեց բոլորի համար ժանվարներ պատրաստել, նրանց բոլորին ազատ արձակեց և հետ ուղարկեց իրենց ամուսնու՝ Շապուհ թագավորի մոտ»⁴⁷:

Այսպիսի ասպետական վարվելաձևը տրամագծորեն տարբերվում էր դրանից երկու տարի առաջ Հայոց Փառանձեմ թագուհու նկատմամբ Շապուհ արքայի դրսևորած վայրագ վերաբերմունքից⁴⁸:

Հետևապես՝ ասպետների արժեհամակարգը, ինչպես և ճապոնական Բուսիդո-ն, մասամբ համընկնում են 4-5-րդ դարերում հայ զինվորականության ունեցած վարքականոնի հետ⁴⁹: Իսկ անվեհեր քաջության և մահն արհամարհելու արժեհամակարգային դրույթները բնորոշ են առհասարակ բոլոր ժամանակների ռազմիկներին ու զինվորական մշակույթներին⁵⁰:

ՎԱՅ ՈԱՋՄԻԿԻ ԲԱՐՈՅԱՌՈՒԹԵԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՀԱՍՏԱՎԱՐՔԻ ԱՌԱՆՁՆԱՎՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՃՅՈՒՂԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Ամենահետաքրքիրն այն է, որ 4-5-րդ դարերի հայ զինվորականության արժեհամակարգն արտացոլող վերոբերյալ սանդղակի 1-ին և 4-րդ դրույթները շեշտակիորեն տարբերվում են մեզ հայտնի եվրոպական ու ճապոնական ավատատիրական-զինվորական արժեհամակարգերից՝ ներկայացնելով հին և միջնադարյան ժամանակների համար արդարև արտասովոր առաջնակարգություն: Այսպես՝

ա) ըստ 1-ին դրույթի՝ հայ հրամանատարի ստանձնած առաջնային ու գլխավոր հանձնառությունը Հայաստան աշխարհին և թագավորությանը ծառայելն էր,

բ) ըստ 4-րդ դրույթի՝ հայ ազնվական զինվորականն ամբողջ հայ ժողովրդին (հասարակական բոլոր խավերն ու դասերը ներառյալ) ծառայել-պաշտպանելը համարում էր, զարմանալիորեն, ավելի կարևոր ու առաջնային, քան իր պատվո վարքականոնի 5-ից 8-րդ դրույթներով ամրագրված հանձնառություններն ընտանիքի, տոհմի, զինակիցների և նույնիսկ քրիստոնյա հավատի և եկեղեցու հանդեպ: Ավելի ստույգ՝ ընտանիքը, տոհ-

մը, զինակիցները, քրիստոնյա եկեղեցին, որպես առանձին մասնիկներ, բոլորն էլ մտնում էին հայ ազգ-ժողովուրդ հասկացության մեջ: Ավելին՝ Հայաստանի քրիստոնյաներն ու հայ ժողովուրդը նույնն էին և նույնացվում էին, իսկ եկեղեցին ընկալվում էր որպես հայկական ազգային կառույց: Ինչպես ասվեց, ո՛չ ճապոնական սամուրայի, ո՛չ էլ եվրոպական ասպետի արժեհամակարգերն այսպիսի առաջնակարգություն բնավ չեն ճանաչել:

Մեկ այլ պատմական զուգահեռ. Հայաստանի հարևան Բյուզանդիայում հայրենասիրական զգացմունքները և բուն «հայրենիք» բառն առաջ են եկել միայն 10-րդ դարում⁵¹, մինչդեռ 5-րդ դարի հայկական սկզբնաղբյուրները վկայում են, որ հայ իրականության մեջ արդեն այդ ժամանակ ու դրանից էլ շատ ավելի վաղ գոյություն է ունեցել Հայաստան-հայրենիքի հստակ և սուր գիտակցություն: Ավելի հաճախ հայրենիք հասկացությունն արտահայտված է «Հայոց աշխարհ՝ երկիր՝ թագավորություն» եզրերով, բայց և, ինչպես խորենացու վերը մեջբերված հատվածում՝ նաև բուն «հայրենիք» եզրով՝ «Աս այր աշխարհասէր և հայրենասէր եղեալ... լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանէլ զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց» (ընդգծումն իմն է):

Փավստոս Բուզանդի երկում կան հայ զինվորականության արժեհամակարգի դրույթները հաստատող և լրացնող զուգահեռ այլ դրվագներ ևս, սակայն դրանք, ի տարբերություն Մուշեղ Մամիկոնյանին նվիրված առանձին գլխի, ավելի համառոտ են, հպանցիկ և չդաստիարակված⁵²: Ահա այդպիսի մի նմուշ.

«Եվ այդ ժամանակ Վասակ զորավարի ձեռքի տակ գտնվեց գործի պատրաստ վաթսուն հազար ընտիր և կռվաշունչ ռազմիկ, որոնք միակարծիք, միասիրտ ու միաբան էին պատերազմական գործում, տենչում էին մարտնչել իրենց որդիների և կանանց համար, նաև՝ կյանքը զոհել հանուն իրենց հայրենիքի ու նրա բնակեցված գավառների, տենչում էին մարտնչել հանուն իրենց եկե-

ղեցիների, հանուն իրենց սուրբ եկեղեցիների պաշտոնյա դասի, հանուն իրենց հավատի և Աստծու, հանուն իրենց բնիկ Արշակունի տերերի»⁵³:

Հայ ռազմիկի արժեհամակարգի ճորդ կետը՝ նվիրվածությունն ընտանիքին, միահյուսվելով հայրենիքի հետ նրա կապվածությունը, լավ է բացահայտված Փավստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեկ այլ դրվագում: Նկարագրելով Հայաստանից դուրս եկած և Մծբինի մոտ հոռմեական բանակի առջև ճամբար դրած հայկական բանակի հոգեվիճակը՝ Փավստոսը պատմում է, որ ուշացած դաշնակից պարսիկներին սպասելու միջոցին հայ զինվորները խիստ անհամբերություն են ցուցաբերել և հայոց Արշակ թագավորից պատերազմը միայնակ սկսելու թույլտվություն հայցել: Պատմիչը սա պատճառաբանում է նրանով, որ հայ զինվորները «տանջվում էին օտար աշխարհում, նախընտրում էին մեռնել, քան օտար աշխարհում ժամանակ քարշ տալ» [յօտար աշխարհին առաել մղնկէին, զի լաւ հաշուէին զմեռանէլն առաել քան զյամէլն յօտար աշխարհին]⁵⁴:

Քիչ անց, ավելի հստակեցնելով, նա բացատրում է Արշակ թագավորի և ողջ հայկական բանակի այսպիսի վարքագիծը հայերի ազգային բնավորությամբ.

«Իսկ Արշակ թագավորը և ամբողջ իր զորքը տաղտկալի էին համարում այդքան հեռու համապարհ գնալը, որովհետև նրանցից յուրաքանչյուրը, Հայաստանի մարդու բնական սովորությամբ, կարոտել և ցանկանում էր իր տունն ու տեղը»⁵⁵:

Հայ զինվորականության պատվո վարքականոնն ունեցել է այլևայլ ճյուղավորումներ: Նշենք դրանցից երկուսը: Նախ՝ արժեհամակարգի դրույթների խախտումն արժանանում էր դաժան պատժի: Օրինակ, Հայոց թագավորի թիկնապահ «Մատենիկ գնդից» ու բազմահազարանոց աշխարհազորից՝ «Գուգազ»-ից⁵⁶ շտապ կազմված բանակը դավաճանաբար կործանած հրամանատար-նախարար Դատաբեն Բզնունուն ձերբակալելուց հետո՝

«բերեցին հոսորով Մեծ թագավորի»⁵⁷ առջև, փարկոծեցին, փառսպան արին իբրև մի մարդու, ով դավաճանել էր հայրենիքին և իր տիրոջ գնդին ու զինվորներին»⁵⁸:

Այս հակիրճ նկարագրությունն մեջ պարզորեն նշմարվում են դատավարական արարողակարգի տարրեր. նախ, Դատաբենին բերել-կանգնեցրել են թագավորի առջև, ապա բազմությունն ներկայությամբ հստակեցրել ու հրապարակել են նրա եռակի (հայրենիքին, թագավորի գնդին ու զինվորներին) դավաճանության փաստն ու տեղնուտեղն էլ մահապատժի ենթարկել: Միջնադարյան Եվրոպայում ևս ուխտադրուժ ասպետը ենթարկվում էր դաժան մահապատժի՝ արտաքնապես դատավարություն հիշեցնող հատուկ «պատվազրկության» արարողակարգով, որի ժամանակ, ի դեպ, դարձյալ բարձրաձայն թվարկվում և արձանագրվում էին նրա դավաճանությունները⁵⁹:

Ասպետական ու սամուրայական վարքականոնների հետ համընկնող մի այլ դրույթ. հայ զինվորականությունը մահվան իդեալական եղանակ էր համարում կռվի դաշտում զոհվելը: Այսպես՝ մահվան մահճում Մանվել սպարապետը դառնորեն արտասվում և ասում է (այս դրվագում Փավստոս Բուզանդը մեկ անգամ ևս տալիս է հայ զինվորականի հասարակական հանձնառությունների առաջնակարգության սանդղակը, որտեղ անձնվեր ծառայությունը հայրենիքին դարձյալ առաջին տեղում է)։

«Սկսեց լալ և ասել. «Մանկությունից ի վեր պատերազմների մեջ եմ մեծացել և մեծ փառությամբ ամեն տեսակի վերք ստացել մարմնիս»⁶⁰. Ինչո՞ւ մահն ինձ պատերազմում չպատահեց, քան թե այսպես անասունի նման մեռնեի: Որքան լավ կլինեք, եթե պատերազմի մեջ մեռնեի հայրենիքի համար, որպեսզի եկեղեցիներն ու Աստծու ուխտի պաշտոնյաները ռոմակոխ չլինեին: Ո՞ր է թե ինձ վիճակվեք մեռնել մեր երկրի բնիկ Արշակունի տերերի համար, մեր կանանց ու որդիների համար, մեր աստվածապաշտ մարդկանց և եղբայր-քնկերների (այսինքն՝ զինակիցների- Ա. Ա.) և մտերիմ բարեկամների համար: Թեպետ և շատ հանդուգն էի

ինձ պահում, բայց և այնպես ինձ վիճակվեց մեռնել վատթար մահով՝ անկողնում պառկած»⁶¹:

Նույն ցավն ու չիրականացած ցանկությունն է հայտնում նաև Մուշեղ Մամիկոնյանը. «Բայց երանի թե այս մահը ձիու վրա ինձ հասներ» [Բայց իբրեւ եհաս ինձ մահս, թէ ի վերայ ձիոյ դիպեալ էր]⁶²:

Զինակից ընկերների հանդեպ հայ ռազմիկի հոգատարությունն ու նվիրվածությունն ընդգծված են նաև Ղազար Փարպեցու երկում, ուր սպարապետ Վարդան Մամիկոնյանին վերագրված են այսպիսի խոսքեր. «Մենք ոչ միայն մեր հոգիների համար ենք օգուտ հայցում, այլև ուրիշների փրկությանմբ ենք ցնծում... Իսկ թե ինչպես է այս (Մամիկոնյան) տոհմը միշտ իր ընկերոջ շահն իր շահից վեր դասել՝ ընդհուպ յուր անձը զոհելով, այդ էլ դուք, հայեր, ստուգությանմբ գիտեք գրավոր պատմություններից ու ձեր ավագներից լսածից»⁶³:

Վերն արդեն նշվեց, որ հայ ռազմիկի պատվո վարքականոնը գոյություն է ունեցել Փավստոս Բուզանդի պատմած ժամանակից՝ 4-րդ դարից շատ ավելի վաղ շրջանում: Բնական է, եղել են որոշ տարբերություններ, որոնք դեռևս առանձին քննության կարիք ունեն, սակայն այդ վարքականոնի գլխավոր դրույթները, մասնավորապես՝ հայրենիքի, ընտանիքի, գերակայի, սուրբ վայրերի, սրբությունների և հավատի անձնագոհ պաշտպանությունը, ըստ ամենայնի, նույնը պետք է լինեին: Նմանապես, վարքականոնային այդ դրույթները, շնորհիվ նաև ոսկեդարյա մեր պատմագրության մեջ արձանագրված լինելու հանգամանքի, պահպանվել ու ոգեկոչվել են հայոց հետագա բոլոր արդար պատերազմներում՝ ընդհուպ մինչև նոր և նորագույն ժամանակները: Այսպես, 65-ամյա Հովսեփ Էմինը 1791 թ. գրած իր մի նամակում հիշատակում է Մանվել Մամիկոնյանի պատգամը և ռազմիկի իր արժեհամակարգն ուղղակիորեն նույնացնում է 4-րդ դարի հայոց փառահեղ սպարապետի արժեհամակարգին, բխեցնում դրանից.

«Թեպետև ծերացել եմ, սակայն պատրաստ եմ արյունս հեղել [Հայաստանի ազատագրության համար]... որպեսզի չմահանամ անկողնում իբրև փափկասուն մի կողածին, ինչպես ասել է մեծ և փառ հայոց սպարապետ Մանվելը: «Ահա, – ասել է նա, – ազգիս համար ես այսօր վերհեռ եմ ստացել, իսկ այժմ ցավ է ինձ համար, քանի որ մեռնում եմ անկողնում, այլ ոչ ճակատամարտում»»⁶⁴:

Եվ ուրեմն՝ շնորհիվ հայ մատենագիրների և հատկապես Փավստոս Բուզանդի հաղորդած մանրամասն տեղեկությունների՝ հնարավոր է լինում իր հիմնական տարրերով հանդերձ բացահայտել 4–5-րդ դարերի հայ ռազմիկի բարոյահոգեբանական-գաղափարական արժեհամակարգը, որը կանոնակարգված է եղել առանձին պատվո վարքականոնում: Իմիջիայլոց, Փավստոս Բուզանդի սկեռուն ուշադրությունը ռազմական պատմության հարցերի նկատմամբ, նրա քաջատեղյակությունը հայ ռազմիկի պատվո վարքականոնի առանձին դրույթներին ու դրանց առաջնակարգությունը թույլ են տալիս ենթադրել, որ այս հեղինակը հրաշալի ռազմական կրթություն էր ստացել ու տեական ժամանակ իբրև սպա ծառայել հայոց բանակում»⁶⁵:

ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԻ ՊՐՈՒՅԹՆԵՐԸ ԵՂԻՇԵՒ ԵՐԿՈՒՄ

449–451 թթ. հայ-պարսկական պատերազմի մասնակից, պատմագիր Եղիշեն (ծն.թ. 410/415 – մահ. 475/480) նախապես եղել է սպարապետ Վարդան Մամիկոնյանի մերձավոր համհարզներից մեկը, հետևաբար՝ նաև Հայոց բանակի ընտրագույն զրահապատ հեծելազորային»⁶⁶: Որպես այդպիսին նա, վստահաբար, քաջածանոթ էր հայ զինվորականության պատվո վարքականոնին: Այսպես, իր «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» պատմական երկում նա անդրադառնում է «վասն հայրենի աստուածատուր օրինացն» (այն է՝ հանուն ազգային ապրելակերպի հիմքում ընկած հայոց քրիստոնեական դավանու-

թյան և հին հայ իրավական ամբողջ համակարգի)⁶⁷ հայ ռազմիկների ու զինվորացած ժողովրդի՝ մահն արհամարհելու կենսահաստատ հանձնառությունը: Արիության և անձնուրացության շարունակական մեծարումը Եղիշեի շարադրանքում, բնականաբար, զուգորդվում է այդ ժամանակ Հայաստանում բացարձակորեն տիրապետող գաղափարախոսություն՝ քրիստոնեական ուսմունքի հետ⁶⁸: Պատմիչը ոգեկոչում է հայ «Քաջերին... որոնք հոժարակամ հարձակվում են մահվան վրա՝ առաջները տեսնելով հաղթության զորագլխին (իմա՝ Հիսուս Քրիստոսին – Ա. Ա.)»⁶⁹: Նա բարեբանում է աշխարհագորայիններին՝ տղամարդկանց ու հավասարապես կանանց, որոնք «խիզախելով ու դեպի զենքը վազելով՝ նախընտրում էին մեռնել, քան թե ապրել» և «մահը գերադասում էին կյանքից»⁷⁰: Եղիշեն բազմիցս է ընդգծում հայ ռազմիկների ու ժողովրդի՝ ազգային արժեհամակարգի համար ինքնազոհության դիմելու պատրաստակամությունը: Ահավասիկ, մի քանի օրինակ.

- «...լավ է մարդ մահու չափ շարչարանք կրի, քան այդպիսի [իմա՝ հայ ազգային-քրիստոնեական] օրենքներն ուրանա»⁷¹.
- «մենք ոչնչով ավելի լավ չենք մեր նախնիներից, որոնք այս (քրիստոնեական) հավատի համար դրին իրենց գույքն ու ստացվածքը և մարմինները»⁷².
- «...բոլորս պատրաստ ենք այն ամեն հարվածների ու տանջանքների մեկնանքների համար, որ սպառնացիր. ո՛չ միայն շարչարվելու, այլև մեռնելու»⁷³.
- «Իրենց անձերին նայում էին ինչպես մեռած դիակների վրա, և ամեն մեկն իր գերեզմանն ինքն էր փորում. իրենց կյանքը մահ էին համարում, իսկ մահը՝ հավաստի կյանք: Բայց շուտ-շուտ այս խոսքն էր լսվում. «Միայն թե փառությամբ մեռնենք, միայն թե անուն և հոգի ժառանգենք...»⁷⁴.
- «Պատրաստ ենք սպանելու և մեռնելու»⁷⁵ և այլն:

Վերոհիշյալ հաղորդումներում Եղիշեն հավաստում է ինչպես երկրում իշխանությունն իր ձեռքը վերցրած Հայոց բանակի բարոյահոգեբանական պատրաստության բարձրագույն՝ «մահապարտական» մակարդակը, այնպես էլ զենք վերցրած հայ աշխարհազորայիներին, ներառյալ հոգևորականների անընկճելի մարտական ոգին⁷⁶։ Սեփական կյանքի գնով ազգային հիմնարար արժեքների պաշտպանությունն ամփոփիչ կերպով իմաստավորված է Եղիշեի «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն է» հանրաճանաչ ասույթում⁷⁷։

Եղիշեն շատ պատկերավոր է պատմում 449-451 թթ. հայ-պարսկական պատերազմում քրիստոնեական հավատը, ազգային եկեղեցին ու հոգևոր սրբություններն անձնուրացաբար պաշտպանելու համաժողովրդական հաստատակամության մասին.

«...տղամարդիք և կանայք և ամբողջ ռամիկ բազմությունն աղաղակում և ասում էին գոհանալով. «պատրաստ ենք հալածվելու և մեռնելու և ամեն տեսակ նեղություն ու շարշարանք կրելու այն սուրբ եկեղեցիների համար, որ ավանդեցին մեզ մեր նախահայրերը՝ զորությամբ գալստյան մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որով նորից ծնվեցինք մի հավատի հուսով, մկրտվելով Հիսուս Քրիստոսի անունով, նույն նմանությամբ կամենում ենք շարշարանքներով և արյունով նորոգել մեր անձերը»»⁷⁸։

Այս նկարագրության մեջ, ըստ էության, ընդօրինակված է հայ զինվորականության պատվո վարքականոնի բազմաճյուղ 5-րդ դրույթը, որն, ինչպես տեսնում ենք, բանակից ներթափանցել էլ ժողովրդական զանգվածների մեջ։

Մի այլ դրվագում՝ իմաստային առումով տարողունակ մեկ նախադասությամբ Եղիշեն է՛լ ավելի է պարզաբանում հայ զանգվածների հոգևոր փոխակերպման երևույթը. «Եվ [Հայոց] աշխարհի բոլոր տղաները խիզախում էին [հայ քաջահմուտ] զորականների նման» («Եւ ամենայն տղայք աշխարհին իբրեւ զարս պատերազմողս խիզախէին») ⁷⁹։ «Արս պատերազմողս»

եզրույթը բնորոշում է Հայոց բանակի մարտիկներին, ովքեր տարիներ շարունակ հմտացել ու թրծվել էին պատերազմական գործում: Նրանց նման էին «խիզախում» ապստամբության դրոշմ պարզած Վարդանյան Հայաստանի բոլոր պատանիներն ու երիտասարդները՝ անկախ իրենց սոցիալական դիրքից ու ծագումից: «Խիզախելն» էլ այստեղ նշանակում է, որ հայ երիտասարդությունն այդ բախտորոշ ժամանակ որդեգրել, նմանակել ու կարեցածի չափով յուրացրել էր հայ բանակայինների հինավուրց գաղափարաբարոյական արժեհամակարգը:

Եղիշեի «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկը ծայրից ծայր քաջության և հերոսության փառաբանություն է, այն է՝ հայ զինվորականության պատվո վարքականոնի մեզ արդեն ծանոթ 2-րդ դրույթի նպատակասլաց ու զորավոր քարոզ: Ուշագրավ է հատկապես վերն արդեն մեջբերված հետևյալ տողը, որն, ըստ Եղիշեի, աշխարհագորայինների շուրթերից չէր իջնում. «Միայն թե քաջությամբ մեռնենք, միայն թե անուն և հոգի ժառանգենք...» («Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս ևեթ ժառանգեսցուք»): Հայոց զորքի առջև իր ելույթներում «Քաջի (քաջության) անուն ժառանգելու» հանձնառության մասին քանիցս հիշատակում է նաև սպարապետ Վարդան Մամիկոնյանը.

«...Ով [կովի դաշտից] փախչում էր, աշխարհում վատ անուն էր վաստակում..., իսկ ով փառաբար առաջ էր նետվում, իր տոհմի համար քաջի անուն էր ժառանգում»⁸⁰:

«Իսկ արդ՝ երկու-երեք նակատամարտերում իմֆը Տերը մեծ զորությամբ օգնեց մեզ, այնպես որ քաջի անուն ժառանգեսցինք»⁸¹:

«Եվ ձեռքն առնելով Մակաբայեցոց փաշ նկարագիրը՝ կարդում էր, որ բոլորը լսեն...

Թեպետև նրանք նույն պատերազմի մեջ իրենց մահը գտան, բայց իրենց [վաստակած] քաջի անվամբ անմոռաց մնացին մինչև այսօր...»⁸² (ընդծումներն իմն են՝ Ա. Ա.):

Ուշագրավ է, որ նույնպիսի կոչով, ըստ Եղիշեի, իր զորահրամանատարներին էր դիմել նաև պարսից զորավար Մուշկան Նիսալավուրտը. «Ամեն մեկդ հիշեցեք մեծ թագավորի (Հագկերտ Բ-ի) պատվերը և նպատակ դրեք քաջության (քաջի) անուն հանել. մահը գերադասեցեք, քան թե վախկոտ կյանքը»⁸³: Այս դրվագը պարզ ցույց է տալիս, որ քաջությունն ու անձնագոհությունն անպատվաբեր կյանքով ապրելուց գերադասելը պայմանավորված էր նախևառաջ հայ և օտար զինվորականություն միջավայրում ընդունված արժեհամակարգային չափանիշներով: Հիշենք նաև պատմահայր Հերոդոտոսի (ծն. Ք.ա. 484 թ. – մահ. Ք.ա. 425 թ.) հաղորդումը, ըստ որի՝ պարսիկները «քաջ կռվելը մեծագույն առաքինություն» էին համարում⁸⁴:

Հատկանշական է, որ Փավստոս Բուզանդի երկում ևս հայ ռազմիկի այդ կենտրոնական գաղափարական դիրքորոշումը բնութագրվում էր ճիշտ նույն բառերով. սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը պատրաստ էր «մեռնել քաջի անվան համար», իսկ սպարապետ Մանվել Մամիկոնյանը պատվիրում էր իր որդուն (հայոց հաջորդ սպարապետին) «երկրի վրա քաջի անուն թողել»: Այս բառացի համընկնումները միևնույն աղբյուրից քաղված լինելու արդյունք են, այլ ոչ պատահականություն: Հայոց բանակում նախկինում ծառայած պատմիչները՝ Փավստոս Բուզանդն ու Եղիշեն ընդամենն ընդօրինակել են հայ զինվորականություն պատվո վարքականոնի 2-րդ կետ-պահանջը՝ ասպետական պատիվը («քաջի անունը») անբիծ պահելու հանձնառության մասին⁸⁵:

4-5-րդ դարերում հայոց բանակի գործող Պատվո վարքականոնի կետերը սրբագործվել ու քարոզվում էին քրիստոնեական դավանանքի կանխադրույթների միջոցով: Ինչպես վերը տեսանք՝ Մանվել սպարապետը, Փավստոս Բուզանդի փոխանցմամբ, պատվիրում էր հանուն Հայաստանի մղվող պատերազմներում հույսն Աստծո վրա դնել և իսպառ ձեռքագատվել մահվան վախից: Ըստ Եղիշեի՝ Վարդան Մամիկոնյանը ևս կոչ անե-

լով վանել վախի զգացումը, նաև այսպիսի խոսքերով էր գոտեպնդում ու խանդավառում իր բազմահազարանոց զորքին.

«Վախը քերահավատության նշան է. քերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»⁸⁶:

Աստծո սերը բնութագրելով իբրև անվախների հոգևոր զենք ու սպառազինություն՝ Եղիշեն արդեն իր անունից այսպես էր քարոզում.

«Աստծու սերն... այնպես աներկյուղ է դարձնում մարդկանց, ինչպես հրեշտակների ամարմին զորքերը... Այն մարդիկ, որոնք Աստծու սիրով ինչպես զենքով սպառազինված էին, ամենևին չխնայեցին և անարի վատասիրտների նման չվախեցան ո՛չ մահից, ո՛չ գույքի հափշտակությունից, ո՛չ սիրելիների խողխողումից և ո՛չ էլ ընտանիքների գերությունից, հայրենի երկրից դուրս գալուց և օտար երկրում ստրկության մեջ ընկնելուց...

Եվ ուրացությունը մեռելություն էին համարում, Աստծու համար զոհվելը՝ անանց կենդանություն, իսկ հայրենիքին իրենց ծառայությունը՝ ազատ կյանք...»⁸⁷:

Ղազար Փարպեցին էլ, արտահայտելով դարաշրջանի պատմական եղելությունն ու իր ժամանակակիցների տարածված կարծիքը, Վարդան Մամիկոնյանի շուրթերով անվախությունը վերագրում էր Մամիկոնյանների ամբողջ ազգատոհմին. «...սրի երկյուղից... մեր տոհմի մեջ ոչ ոք ոչ մի ժամանակ չի վախեցել»⁸⁸: (Համեմատության կարգով նշենք, որ նույնպիսի հիմնավոր համոզվածությամբ ինքն իր քաջությունն էր բնութագրում սամուրայ Տորի Մոտոտադան. «Ես 62 տարեկան եմ և արդեն մոռացել եմ, թե քանի անգամ եմ եղել մահվան եզրին... Բայց ես երբեք չեմ վախեցել»⁸⁹):

Առհասարակ, հայկական ազնվական բոլոր տոհմերում էլ արու զավակներն ստանում էին երկարամյա ռազմական ուսուցում և դաստիարակություն, որի գլխավոր նպատակը միշտ էլ

մարզումների միջոցով, քաջասրտության և անվեհերության հոգեֆիզիոլոգիական անհրաժեշտ մակարդակի ձեռքբերումն էր:

ՎՅԱԿԱՆ ԶՈՐԱՔԱՆԱԿԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ

Հարկ է դիտարկել, թեկուզ հպանցիկ, նաև Հայաստանի հնագույն, հին և միջնադարյան զորաբանակի թվաքանակի հարցը: Միայն այդ թվաքանակի հիման վրա կարելի է ճիշտ



պատկերացնել հայոց մարտական ավանդույթների շարունակականությունն ու տեականությունը, զուգահեռաբար նաև այն, թե ինչ ազդեցություն են ունեցել հայ զինվորականությունը և սերնդեսերունդ քարոզված նրա արժեհամակարգը հայ ժողովրդի մտայնության, հոգեբանության ու գաղափարաբանության վրա:

Նախ արժարժենք հնագույն շրջանի տվյալները: Հայաստյի թագավորության՝ Ք.ա. 14-13-րդ դարերում խեթական պետության դեմ վարած պատերազմների մասին մի շարք տեղեկություններից կարելի է վստահորեն մակաբերել, որ հայ զինվորների թիվը եղել է մեկ տասնյակ հազարից ոչ պակաս, իսկ հնարավոր է և՛ շատ ավելին⁹⁰: Հայաստում իր ժամանակի առումով արդիական ու կանոնակարգված զինուժի գոյությունը հաստատվում է թեկուզ միայն այն փաստով, որ նրա զորքերը գործածել են մարտակառքեր⁹¹, որոնք նյութական զգալի արժեք էին և սահմանափակ թվով էին առկա նույնիսկ աշխարհակալ Ասորեստանի բանակում⁹²:

Ուրարտուի, այն է՝ հայոց Արարատյան կամ Վանի թագավորության բանակը, թերևս, առաջին անգամ միավորում էր երկրում առկա ամբողջ զինուժը, որը բաղկացած էր առնվազն մի քանի տասնյակ հազար զինվորից⁹³: Այսպես, պահպանված արձանագրություններից մեկը հաղորդում է, որ հյուսիսային ուղղությամբ արշավանքի դիմած Ուրարտուի զորքի կազմում կային 66 մարտակառք, 4.430 ձիավոր և 15.760 հետևակային⁹⁴: Պետք է ենթադրել, որ այս տեղեկությունը վերաբերում է հայոց բանակի մի մասին միայն, քանզի անհավանական է, որ խոշոր ուժերով դեպի հյուսիս արշավելիս սահմանապահ զորամասեր թողնված չլինեին հարավում՝ կանխելու համար Հայաստանի գլխավոր թշնամու՝ Ասորեստանի հնարավոր ներխուժումը: Իրավացիորեն նկատելով, որ ուրարտական զորքի զգալի մասն արշավանքների չի մասնակցել, որովհետև «զբաղվել է թագավորության լայնատարած սահմանների, արքունիքի, բազմաթիվ ամրոցների պաշտպանությամբ», Ն. Վ. Հարությունյանը հանգում է հետևյալ տրամաբանական եզրակացությանը. «Կասկածից վեր է, որ Վանի թագավորության հետագա աչքի ընկնող հաջողությունները, նրա սահմանների զգալի ընդլայնումն ամենից առաջ պետք է բացատրել ուրարտական բանակի հզորության աճով»⁹⁵: Ուրարտուի արքա Սարգուրի Բ-ի (Ք.ա. 764 – Ք.ա. 735) տարեգրության մեջ հիշատակված է այդ թա-

գավորության զինուժի ընդհանուր թիվը՝ ավելի քան 350.000 մարդ: Ըստ Ն. Վ. Հարությունյանի, «հավանական է, որ սա կարող է լինել միայն զենք վերցնելու ընդունակ մարդկանց և ոչ գործող զինվորների թիվ»⁹⁶: Միանգամայն ընդունելի համարելով այս տեսակետը, մեր կողմից անենք երկու կարևոր նկատառում: Նախ, հենվելով Հին և վաղմիջնադարյան Հայաստանին վերաբերող աղբյուրներում եղած որոշ տեղեկությունների վրա, ըստ որոնց՝ սովորաբար զինվորագրվել է 10 հոգուց մեկը⁹⁷, կարելի է հետևեցնել, որ Ուրարտուի բնակչությունը Ք.ա. 8-րդ դարի կեսերին կազմել է մոտավորապես 3.5 միլիոն մարդ, այսինքն՝ փոքր-ինչ պակաս, քան 4-րդ դարի սկզբում Մեծ Հայքի թագավորության ավելի քան 4-միլիոնանոց ազգաբնակչությունն էր⁹⁸: Երկրորդ, այդ 350.000 զինապարտների մեկ հատվածն էլ, բացի Ուրարտուի մշտական («կանոնավոր») բանակից, կազմել են անհրաժեշտության դեպքում հավաքագրվող, որոշակի ռազմական պատրաստություն ունեցող աշխարհագորային ուժերը, որոնք ավելի ուշ՝ Արշակունյաց Հայաստանում հայտնի էին, ինչպես վերը նշվեց, «գուզազ» անվամբ և բաղկացած էին 30-80 հազար մարտիկներից⁹⁹: Հավանական է, ուրեմն, որ Արարատյան թագավորությունում ևս եղել են սովարաթիվ՝ տասնյակ հազարավոր աշխարհագորային ուժեր, որոնք պարբերաբար հավաքագրվել են 350.000 զինապարտների առկա մարդուժից: Քիչ անց մեկ ուրիշ առիթով նորից կանդրադառնանք Սարգսիյան տարեգրությունում հիշատակված այս թվին:

Ինչպես նկատում են արտասահմանցի հետազոտողները, Ուրարտուում ամբողջաշինությունը հասել էր բացառիկ բարձր տեխնիկական մակարդակի, իսկ զինված ուժերը հմտացված անսնագիտացել էին լեռնային պատերազմ վարելու գործում¹⁰⁰:

Արարատյան թագավորության բանակի բարձր աստիճանի հասած զարգացածությունն է փաստում նաև նրա հրամանատարական կազմի աստիճանակարգումը՝ գլխավոր հրամանատարի, նրա առաջին և երկրորդ տեղակալների, գնդապետի, հիսնապետի, սակրավորների հրամանատարների և պետերի

պաշտոնների առաջացումը¹⁰¹: Այս աստիճանակարգումը զարգացել է հետագա դարերում: Այսպես, մեզ առավել լավ հայտնի Արշակունյաց Հայաստանի բանակում առկա էին գլխավոր հրամանատարի՝ սպարապետի, զորավարի, մեծ զորավարի, 10.000-անոց զորամիավորման հրամանատարի՝ բյուրակալ կամ բիրավոր կուսակալի, մեկ հազարանոց գնդի հրամանատարի՝ հազարավորի կամ հազարապետի (պետք չէ շփոթել արքունիքում եղած հազարապետ պաշտոնի հետ)¹⁰², ինչպես նաև այլ զինվորական կոչումներ՝ սալար, գամապետ (գումապետ), համհարգ, սեպուն, ավագ սեպուն, մեծ սեպուն¹⁰³:

Հայոց Երվանդունիների օրոք հայկական զորքը պատկանելի թվաքանակ է ունեցել: Պատմելով Ք.ա. 6-րդ դարի իրադարձությունների մասին, Քսենոփոնի՝ Ք.ա. 365–358 թթ. գրած «Կյուրոպեդիան» հայկական զորքի թիվը նշում է 8.000 հեծելազոր ու 40.000 հետևակ¹⁰⁴:

Ք.հ. 1-ին դարի հռոմեացի հեղինակ Կվինտոս Կուրցիոս Ռուփոսը ևս հաղորդում է, որ Ք.ա. 331 թ. տեղի ունեցած հանրահայտ Գավգամելայի ճակատամարտում Ալեքսանդր Մակեդոնացու դեմ դուրս եկած պարսից Դարեոս Գ արքայի գլխավորած դաշնակից ուժերի աջ թևը կազմում էր 40.000 հետևակ և 7.000 հեծյալ ունեցող Մեծ Հայքի զորաբանակը (որը, ի դեպ, իրեն փայլուն է դրսևորում՝ կռվում է մինչև ուշ երեկո և դիմում կազմակերպված նահանջի միայն այն ժամանակ, երբ պարզ է դառնում, որ կենտրոնում և ձախ թևում պարսիկները ջախջախիչ պարտություն են կրել)¹⁰⁵: Ձախ թևում կռվող Փոքր Հայքի զորաբանակի թիվը Ռուփոսը չի հաղորդում: Ակնհայտ է, որ այս 47.000-անոց զորաբանակը չէր կարող ներկայացնել Մեծ Հայքի ամբողջ զինուժը, քանի որ Գավգամելան գտնվում էր Հայաստանի սահմաններից բավական հեռու և առնվազն նույն քանակության զինուժ էլ պետք է մնացած լիներ երկրի ներսում՝ հատկապես հյուսիսային և հյուսիս-արևելյան մշտապես վտանգավոր սահմանների անվտանգությունն ապահովելու համար: Այս

եզրահանգման օգտին է խոսում նաև Քսենոփոնի հաղորդումն առ այն, որ հայոց զորքերի միայն կեսն է ուղարկվել համաարիական բանակ¹⁰⁶:



Հատկանշական է, որ Ք.ա. 9-րդ դարում Արամ (Արամե) թագավորի բանակի արագաշարժ մասը (կամ այսօրվա եզրով ասած՝ «էքսպեդիցիոն կորպուսը») ևս բաղկացած էր, ինչպես հաղորդում է Խորենացին, «մոտավորապես հիսուն հազար»

զինվորից¹⁰⁷: Դարձյալ՝ սրանց մեջ չպետք է եղած լինեին բերդապահ և սահմանապահ կայազորները կամ գոնե դրանց մի մասը, որ տեղաշարժի չէր ենթարկվել: Հետաքրքիր է, որ այս կորպուսի թվաքանակը համընկնում է Տիգրան Բ Մեծի (95-55 Ք.ա.) հեծելազորի ընդհանուր թվի հետ, որ, ըստ Պլուտարքոսի, 55.000 էր, դրանից 17.000-ը՝ զրահապատ¹⁰⁸: Հետագայում, ամրապնդելով երկրի անվտանգությունը՝ Արամն իր ունեցած զորքին (այսինքն՝ 50.000-ին) գումարում է ևս 40.000 հետևակ և 2.000 հեծելազոր¹⁰⁹ և այդ միացյալ 92.000-անոց բանակով արշավում դեպի արևմուտք՝ Կեսարիա:

Մեծ Հայքի արքա Արտավազդ Բ-ն (Ք.ա. 55-Ք.ա. 34) ևս հռոմեացի զորավար Կրասսոսին խոստանում է օժանդակել, ընդհանուր առմամբ, 46.000-անոց բանակով (16 հազար հեծելազոր, 30 հազար հետևակ)¹¹⁰:

Ինչպես վերոհիշյալ օրինակներից պարզ երևում է՝ հայկական շարժուն և ամենամարտունակ զորամասերի 40-50 հազար թվաքանակը չէր կարող պատահականություն լինել: Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ Հայաստանի արքային անմիջականորեն ենթակա մշտական բանակը (առանց նախարարական/տեղական իշխանավորների զինուժի) սկսած առնվազն Ք.ա. 6-րդ դարից ընդհուպ մինչև Արշակունյաց թագավորության անկումը (428 թ.) բաղկացած է եղել հենց մոտավորապես 40.000 մարտիկներից, որոնք հունահռոմեական աղբյուրներում անվանվում են «մարդեր», իսկ հայկական աղբյուրներում՝ «ոստանիկներ»: Իրենց առնվազն հազարամյա պատմության ընթացքում, բնակվելով արքունական «ոստան»-գավառներում և հանդիսանալով Հին Հայաստանի թագավորության ամենաարտոնյալ ռազմականացված դասը, ոստանիկները շատ վաղ ձևավորվել են որպես հայ ժողովրդի առանձին ենթաէթնիկ մի խումբ (սուբէթնոս)՝ իրենց առասպելական տոհմաբանությունմբ, զինվորական ավանդական արժեհամակարգով և պատվո վարքականոնով: Եթե դիմենք պատմական համանմանությունը, ապա ոստանիկներին կարելի է համեմատել

նախահեղափոխական Ռուսաստանի կազակների կամ ավելի շուտ՝ 10-19-րդ դարերում Ճապոնիայում գործած սամուրայների ռազմաֆեոդալական դասի հետ (չնայած վերջին երկու հանրույթների կազմավորման պատմությունն ու էթնոսոցիալական կառուցվածքը բազմաթիվ առումներով տարբեր էին)։ Հայ ոստանիկ մարտիկների («մարդերի») սոցիալ-մշակութային վառ ինքնատիպությունը ևս նպաստել է նրան, որ հունահռոմեական աղբյուրներում նրանք թյուրիմացաբար ներկայացված են որպես առանձին ցեղախումբ (մեկ կարևոր բացառությամբ, որտեղ նրանք ճիշտ են ներկայացված՝ որպես հայ)¹¹¹։ Հայաստանի թագավորին ամբողջապես հավատարիմ այդ ժառանգական, մանր ազնվական ռազմիկների միջավայրում էլ հենց, ըստ ամենայնի, պետք է նախապես առաջացած ու կանոնակարգված լիներ հայ զինվորականության Պատվո վարքականոնը, որը հետագայում աստիճանաբար ու նպատակայնորեն ներդրվել է նաև շուրջ 120.000-անոց միացյալ Հայկական բանակի՝ «Հայաստան գնդի» կամ «Հայաստան բանակի» (կարճ անվամբ՝ «Հայաստանի») անձնակազմի մեջ¹¹²։

Հայկական զինված ուժերի մարտական բարձր որակը և մշտական պատրաստվածությունն վիճակում գտնվելը հաստատվում են թեկուզև միայն այն փաստով, որ հայկական բանակի շուրջ կեսը (չափազանց բարձր տոկոս նույնիսկ այսօրվա զարգացած երկրների բանակների համար) անհրաժեշտության դեպքում ընդունակ է եղել հեռավոր և սրընթաց արշավանքներ կատարել Հայաստանի սահմաններից դուրս, թեև, ինչպես տեղեկացանք Փավստոսի հաղորդումից, դա բնավ էլ հայ զինվորականների սրտովը չէր։

Վերադառնալով Արարատյան թագավորության 350.000-անոց զինապարտների մասին Սարգսրյան տարեգրության հաղորդմանը՝ այդ մարդուժը պետք է նաև համեմատենք հայոց Տիգրան Մեծ արքայից արքայի՝ սկզբնաղբյուրներում հիշատակվող 300.000-անոց զորքի թվաքանակին¹¹³։ Կարելի է եզրահանգել, որ երկու դեպքում էլ՝ և՛ Արարատյան թագավորու-

թյունում, և՛ նրա ժառանգորդ Մեծ Հայքում 300-350 հազար հետևակայիներն ու հեծելազորայիները ներկայացրել են այդ պետությունների զորահավաքային ընդհանուր ներուժը: Պատահական չէ, որ 4-րդ դարում Մեծ Հայքում հայկական բանակի, ներառյալ աշխարհազորի (գուգազ) ընդհանուր քանակը երբեմն կազմում էր ընդհուպ 150-200 հազար մարտիկ¹¹⁴:

Մեծ Հայքի անկախության համար մղված բազմաթիվ պատերազմներն ու հայոց ազատագրական խոշոր ապստամբությունները հաճախ համաժողովրդական բնույթ են կրել: Ահա մեկ ցայտուն օրինակ. 451 թ. մայիսի 26-ին տեղի ունեցած Ավարայրի ճակատամարտին մասնակցել է Մարզպանական Հայաստանի չափահաս (ռազմունակ տարիքի) արական բնակչության մոտավորապես 10 տոկոսը և հայ ժողովրդի չափահաս տղամարդկանց մոտավորապես 6-7 տոկոսը¹¹⁵: Իսկ 301-302 թթ. Հայոց միացյալ բանակում հիշատկվող 150.000 մարտիկները ներկայացնում էին Մեծ Հայքի թագավորության ազգաբնակչության 3.6%-ը կամ նրա բոլոր տղամարդկանց մոտ 7%-ը (չափահաս արական բնակչության մոտ 12-13%-ը), յուրաքանչյուր 1000 մարդուց հավաքագրված էր 36 զինվոր¹¹⁶:

Օտար զավթիչների դեմ զինված պայքարի տևականությունն ու մասսայականությունն էլ հենց ապահովում էին հայ պրոֆեսիոնալ զինվորականության գլխավոր արժեհամակարգային դրույթների ներթափանցումն ու արմատավորումը նաև ժողովրդական մտայնության մեջ:

Այսպիսով՝ Ք.ա. 2-րդ և 1-ին հազարամյակներում, Հայաստանի, Ուրարտուի և Երվանդունիների թագավորությունների օրոք, հայ զինվորականության թիվը հասնում էր մի քանի տասնյակ հազարի, իսկ Արտաշեսյան, Արշակունյաց և Բագրատունյաց թագավորությունների օրոք, պատմական հստակ տեղեկությունների համաձայն, հայկական կանոնավոր բանակի թվա-կազմը տատանվում էր 100.000-ի և 120.000-ի միջև¹¹⁷: Պատկերացնելու համար հայոց զինուժի տարածաշրջանային կշիռն ու նշանակությունը, կարելի է համեմատել այս թվերը, օրինակ,

այն փաստի հետ, որ աշխարհակալ Հռոմեական կայսրության կանոնավոր բանակը, ըստ տարբեր տեղեկությունների, ուներ 400.000-ից մինչև 600.000 զինվոր¹¹⁸: Ընդ որում՝ Հռոմի հզորության գագաթնակետին Իտալիայից դուրս տեղակայված էին շուրջ 300.000 լեգեոներներ¹¹⁹, որոնցից միայն կեսն էր տեղակայված արևելյան ուղղությամբ: Հետևաբար, տարածաշրջանային առումով Հայոց միացյալ բանակը թվապես շատ չէր զիջում հռոմեականին: Սա նշանակում է, որ միաճակատ պաշտպանական պատերազմ մղելու դեպքում Հայաստանն ընդունակ էր դիմագրավելու հռոմեական ներխուժմանը: Աշխարհակալ ախոյանների միջև Հայաստանի անկախության և ինքնավարության երկարատև պահպանումն ինքնին արդեն վկայում է հայոց զինուժի հզորության մասին:

12-14-րդ դարերում Կիլիկյան հայկական թագավորության բանակի թիվը պատերազմի ժամանակ տատանվում էր 80-100 հազար զինվորի միջև, որոնց մի մասը՝ ավելի քան 60.000-ը (50.000-ը՝ հետևակ, մնացածը՝ հեծելազոր) մասնակցում էր հեռավոր արշավանքներին¹²⁰: Միևնույն ժամանակ բուն Հայաստանում ընդհուպ մինչև 14-րդ դարը, հատկապես Զաքարյանների իշխանության օրոք, նախարարների հրամանատարության տակ դեռևս պահպանվել և գործում էին հայկական խոշոր զորագնդեր:

Պետք է հատուկ ընդգծել, որ նշված թվերը վերաբերում են ոչ թե Հայաստանի արական չափահաս բնակչությանը կամ աշխարհազորին, այլ հայոց «կանոնավոր» կամ մշտական զինուժին: Սրանում համոզվելու համար բավական է մոտավոր պատկերացում ունենալ Հայաստանի պատմական ժողովրդագրության մասին: Ըստ որոշ հետազոտությունների՝ Հայաստանի բնակչության թիվը Ք.ա. 1-ին դարում եղել է 2,5-3 միլիոն, 10-րդ դարում՝ 4-5 միլիոն մարդ, իսկ Կիլիկյան Հայաստանում 13-րդ դարում ապրել է շուրջ 1 միլիոն մարդ (նշված բոլոր դեպքերում էլ հայերը բացարձակ մեծամասնություն էին)¹²¹: Մեր հաշվարկներով, ինչպես վերը նշվեց, 4-րդ դարի սկզբում Մեծ

Հայքի թագավորության բնակչությունը կազմել է շուրջ 4,150,000 մարդ:

Այսպիսով՝ 1-ին դարում հայկական 100-120-հազարանոց բանակը կազմել է Հայաստանի ընդհանուր բնակչության ընդամենը շուրջ 4%-ը, 4-րդ դարում՝ 3.5-4%-ը, 10-րդ դարում՝ մոտ 2-2,5%-ը, իսկ 13-րդ դարի գերազմականացված Կիլիկյան Հայաստանում՝ շուրջ 6%-ը (ըստ բանակի և բնակչության միջին թվերի): Հին և միջնադարյան Հայաստանի զարգացած տնտեսությունն ու ժողովրդագրական այս բարվոք վիճակը միանգամայն թույլ էին տալիս զինել, մարզել և կերակրել այդպիսի պատկառելի մշտական մի զինուժ¹²²:

Հայ զինվորականության ամուր փոխկապվածությունը հայ հասարակության ու նրա տարբեր խավերի հետ պայմանավորված էր նաև նրանով, որ բանակը կազմված էր ոչ միայն նախարարական և ազնվական ծագում ունեցող ազատանիից, այլև հաճախ նրա հետ ուս-ուսի կռվող աշխարհագորից՝ գուգազ-ից, որը բաղկացած էր ազատ շինականներից ու ռամիկներից՝ «ռամիկսպաս»-ից¹²³, ներառյալ հեծելագորից («ռամիկ այրուծիոյն Հայոց»¹²⁴, «յռամիկ հեծելոց»)¹²⁵:

Վերը շարադրվածից կարելի է եզրակացնել, որ հնագույն, հին և միջնադարյան ժամանակներում զինվորականության տեղը, դերը, կշիռն ու նշանակությունը հայկական պետության և հասարակության մեջ եղել են ամենամեծն ու կենտրոնականը: Հետևաբար, հայ զինվորի պատվո վարքականոնը, իր գաղափարական-բարոյահոգեբանական արժեքներով հանդերձ, դարեր շարունակ սերնդեսերունդ փոխանցվելով և ուսուցանվելով՝ իր անանց կնիքն է դրել հայ ժողովրդի ազգային բնավորության, հոգեբանության և աշխարհընկալման վրա:

Սամուրայական էթիկայի սաստիկ ազդեցությունը ժամանակակից ճապոնական հասարակության վրա՝ միջազգայնորեն և գիտականորեն ճանաչված փաստ է: Այսպես, հին չինական ու ճապոնական ռազմական տրակտատների հայտնի թարգմանիչ ու մեկնաբան Թոմաս Քլերին նկատում է. «Նույնիսկ սոցիա-

լական և մշակութային ոլորտներում Ճապոնիան այսօր էլ պահպանում է սամուրայական Բուսիդոյի անջնջելի դրոշմները: Այդպես է ոչ միայն կրթության և արվեստի բնագավառներում, այլև քաղաքական, մասնագիտական և անձնական հարաբերությունների վարքային դիրքորոշումներում և ընկալումներում»¹²⁶: Ամերիկացի պրոֆեսոր Շենոն Ֆրենչի կարծիքով էլ՝ սամուրայների թողած ժառանգությունը մեծ հետք է թողել «Ճապոնիայի քսաներորդ դարում վարած պատերազմների և քսանմեկերորդ դարում ընտրած գործարարական պրակտիկայի վրա: Սամուրայների դարը վաղուց է անցել, բայց և այնպես Ճապոնիան դեռևս ամբողջովին ներծծված է Բուսիդոյի արժեքներով»¹²⁷:

Նույն տեսանկյունից դիտարկվելու դեպքում հայկական մշակույթը բացահայտում է ռազմական ավանդույթների խոր ներթափանցում, որի նախնական հզոր աղբյուրը հին հայկական ստվարաթիվ և գերհեղինակավոր զինվորական դասն է: Հայ ռազմիկների՝ հանուն Հայաստանի անկախության կամ ազատագրության մղած զինյալ պայքարի հսկայածավալ պատմությունն ազդել է հայկական մշակույթի գրեթե բոլոր ոլորտների, հատկապես՝ պատմագրության, գրականության, պոեզիայի, երաժշտության, բանահյուսության, կերպարվեստի, պարարվեստի և ճարտարապետության վրա: Կարելի է պնդել, որ հին հայոց ռազմական արժեհամակարգը հայ ժողովրդի բազմադարյա մշակույթի և մտայնության վրա թողել է ոչ պակաս ուժգին ազդեցություն, ինչպիսին Բուսիդոն՝ ճապոնացի ժողովրդի վրա: Աներկբա է, ուրեմն, որ ոչ միայն ճապոնական, այլև հայկական ազգային հոգեկերտվածքը մեծապես անթափանց կմնա, եթե ուսումնասիրվի առանց դարերով գոյատևած հայկական զինվորական էթիկան հաշվի առնելու:

ՀԱՅԵՐԻ ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ՝ ՕՏԱՐՆԵՐԻ ՊԵՏԱՏՄԱՐ

Հայերի բացառիկ մարտունակությունը նկատել և արձանագրել են նաև օտարները: Բերենք ընդամենը մի քանի օրինակ (հետագայում հարկավոր է օտար աղբյուրների գրանցած համանման բազմաթիվ հաղորդումները հավաքել, խմբավորել և հրատարակել առանձին ուսումնասիրությամբ): Ըստ 6-րդ դարի բյուզանդական պատմագիր Պրոկոպիոս Կեսարացու հաղորդման՝ մինչև 474 թ. հռոմեական կայսրերն իրենց թիկնազորի «ընտրության ժամանակ նկատի ունեին մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը»¹²⁸: Արաբ պատմագիր Քամալ-ադ-դինի վկայությամբ, հայկական ծագում ունեցող Ռոման Գ Արգիրոս կայսեր (ծն. 1028 թ. – մահ. 1034 թ.) թիկնազորը դարձյալ բաղկացած էր հայերից, որոնց էլ նա պարտական էր իր փրկությանը՝ 1030 թ. Հալեպի մոտ կրած պարտությունից ու բյուզանդական զորքի ցաքուցրիվ լինելուց հետո. «...և ճողոպրեց կայսրը՝ շրջապատված իր մոտ եղած հայերով, որոնք իրենց նետերով պաշտպանում էին նրան»¹²⁹: Ֆրանսիացի հայտնի բյուզանդագետ Շարլ Դիլն այսպես է բնութագրել 10-րդ դարի իրավիճակը. «Բյուզանդիան պարտական էր Հայաստանին հրաշալի զինվորներով, քանի որ 10-րդ դարում հայկական զորամասերը բյուզանդական բանակի լավագույն զորամասերն էին համարվում»¹³⁰:

Հայկական ծագում ունեին բյուզանդացի բարձրաստիճան պաշտոնյաներից շատերը, հատկապես զորահրամանատարները: Ճանաչված ամերիկացի բյուզանդագետ, պրոֆեսոր Պիտեր Խառանիսի հաշվարկով, «Պրոկոպիոս Կեսարացին հականեհանվան հիշատակում է ոչ պակաս, քան տասնյոթ հայ հրամանատարների, այդ թվում, իհարկե, մեծն Նարսեսին»: Թեև, ինչպես նշում է Խառանիսը, բյուզանդական բանակում հայկական տարրը կարևոր տեղ էր զբաղեցնում տակավին կայսրեր Հուստինիանոսի (527-565 թթ.) և Տիբերիոս Բ Կոնստանտինի

(574-582 թթ.) բանակներում, «իրադրությունը փոխվեց Մորիկի կառավարման օրոք, հիմնականում Բալկանյան թերակղզի կատարված ավարա-սլավոնական ներխուժումների հետևանքով: Այդ ներխուժումները գործնականում ոչնչացրին Իլլիրիան որպես զինվորագրման աղբյուր և նվազեցրին Թրակիայի հնարավորությունները: Դրանք կտրեցին կապն արևմուտքի հետ և մեծապես բարդացրին այնտեղ զորահավաքների անցկացումը: Իբրև հետևանք, կայսրությունը ստիպված էր զինվորներ հավաքագրել այլուր: Նա շրջվեց դեպի Կովկասի և Հայաստանի շրջանները: Մորիկի բանակներում մենք դեռ հանդիպում ենք որոշ հոների, ինչպես նաև որոշ լանգոբարդների: Հանդիպում ենք նաև բուլղարների: Սակայն գերիշխող տարրն արդեն՝ հայերն էին»¹³¹:

Հաջորդ դարերում հայկական տարրը բյուզանդական բանակում և ռազմաքաղաքական վերնախավում ավելի մեծ աճ և ազդեցություն արձանագրեց¹³²: Անվանի բյուզանդագետ Ռոմիլի Զենկինզն այդ կապակցությամբ գրում էր. «Բյուզանդիայի ռազմական հզորությունը, ռազմական կազմակերպությունը և ռազմական հանճարը՝ այն հուսալի և ամուր հիմքը, որի վրա էր խարսխված կայսրության բովանդակ փայլուն վերնաշենքը, ամբողջովին հայկական էր»¹³³:

Բյուզանդացի մեկ այլ պատմագիր, խոսելով 9-րդ դարի առաջին կեսին կայսրության բանակում ծառայած Մանուիլ անունով մի հայ զորահրամանատարի մասին, գրում է.

«Մանուիլը շատ խիզախ մարդ էր, բոլոր հակառակորդներին փաշ հայտնի, փանզի նա ծնունդով հայ էր»¹³⁴:

Այսպիսով՝ պարզվում է, որ այդ ժամանակաշրջանում հայ տղամարդու կերպարը նույնացվում էր արիասիրտ ռազմիկի բնութագրի հետ, կամ, ինչպես դիպուկ նկատել է այս հետաքրքիր տեղեկությունը հայերեն թարգմանած հայ բյուզանդագետ ակադեմիկոս Հ. Բարթիկյանը, «Բյուզանդիայում հայ և քաջ հասկացությունները հոմանիշ էին»¹³⁵:

Ասվածով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ ինչպես Հռոմեական կայսրությունում, այնպես էլ նրա ժառանգորդ Արևելահռոմեական (Բյուզանդական) կայսրությունում ավանդաբար առկա էին նաև ընդգծված հակահայկական նախապաշարմունքներ¹³⁶: Հատուկենտ դեպքերում այդ նախապաշարմունքները տարածվում էին նաև հայ զինվորների վրա: Այսպես, 10-րդ դարի բյուզանդական ռազմական մի տրակտատում հպանցիկ ասվում է, թե իբր «հայերը բավականին վատ և անփույթ են կատարում պահակային ծառայությունը... հազիվ թե այդ մարդիկ լավ ժամապահություն անեն. չէ՞ որ նրանք, վերջիվերջո, հայ են»¹³⁷: Մեկնաբանելով այս կարծիքը, բյուզանդական ռազմարվեստի ամբրիկացի հետազոտող էդվարդ Լուիվակն իրավացիորեն նկատում է, որ, ընդհակառակը, հայերն «իրենց քաջարիության համար բյուզանդական ռազմական տեքստերում շատ ավելի հաճախ գովաբանության են արժանացել»: Ըստ Լուիվակի՝ այդ տրակտատի հեղինակը, լինելով Հունական ուղղափառ եկեղեցու մոլեռանդ հետևորդ և ծայրաստիճան հունակենտրոն անձ, առաջնորդվել է հայերի դեմ կրոնական, լեզվական և սովորութային անհանդուրժողականությունամբ, քանի որ նրանք այլադավան, այլալեզու և ինքնատիպ ժողովուրդ էին¹³⁸: Բյուզանդիայի ռազմական պատմության խոշոր մասնագետ, Զիկագոյի համալսարանի պրոֆեսոր Վալտեր Քեգին, հանգամանորեն քննելով Հայաստանի աշխարհառաջնավարական դիրքի կարևորությունն ու առանձնահատկությունները, նույնպես բարձր է գնահատում հայկական զինված ուժերի նշանակությունն ու հայ զորահրամանատարների դերակատարումը: Իմիջիայլոց, նա նկատում է հայերի «ընդգծված կերպով հայ մնալու կամքը», նաև այն հանգամանքը, որ «Բյուզանդական կայսրության ոչ մի այլ տարածքում... տեղի բնակիչները չունեին այդքան լավ զինված լինելու ավանդույթ և այդչափ հակված չէին ապավինելու իրենք իրենց և իրենց տոհմական խմբավորումների և ազնվականության վրա», ինչի

պատճառով էլ ինչպես արաբները, այնպես էլ բյուզանդացիներն ստիպված էին հաշվի նստել «հայերի անհողդողդուխության և ուժեղ բնավորության հետ»¹³⁹։

Սասանյան Իրանում ևս հայկական զորքն արժանանում էր հարգանքի և բարձր գնահատանքի։ Ահավասիկ. Փավստոսը հաղորդում է, որ պարսից Շապուհ Բ թագավորը Հայաստանում իր կրած մի խոշոր պարտությունից հետո վերադառնալով Իրան, հիացական գնահատական է տվել հայ ռազմիկների անձնվիրությունը, պատերազմավարությանն ու մարտական բարձր ոգուն։

«Ձարմացել եմ ես, ասում էր նա, իմ տեսածի վրա։ Մանկությունից ի վեր միշտ կռվի ու պատերազմի մեջ եմ եղել, շատ տարի է, որ թագավոր եմ դարձել, և տարի չեմ անցկացրել առանց կռվի, բայց ջերմ կռիվն այս էր, որին այս անգամ պատահեցի։ Որովհետև երբ Հայոց նիզակավորները առաջ էին գալիս, այնպես էին հարձակվում, ինչպես մի բարձր լեռ կամ ինչպես մի հաստ, հզոր և անշարժ աշտարակ, իսկ երբ մենք նրանց փոքր-ինչ վանում էինք, նրանք ապաստանում էին հոռոմների լեզեռնների մեջ, որոնք իրենց կից առ կից վահանները բաց անելով նրանց ներս էին ընդունում, ինչպես մի պարսպապատ ամրոցի մեջ։ Եվ այնտեղ փոքր-ինչ շունչ առնելով՝ նորից դուրս էին գալիս ու կռվում, մինչև որ Արյաց գորբերին ամբողջովին ոչնչացրին։

Մի ուրիշ բանի վրա էլ եմ զարմացած – Հայաստան գնդի¹⁴⁰ միասիրտ հավատարմության և տիրասիրության վրա. որովհետև այսֆան տարի է, որ նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, բայց նրանք նրանով էին փառալերվում պատերազմի ժամանակ։ Երբ իրենց ախոյաններին գլորում էին, միշտ ասում էին. «Արշակի համար», իսկ նա նրանց մեջ չէր, բայց նրանք իրենց սիրուց և տիրասիրությունից, որ ունեին իրենց բնիկ տիրոջ նկատմամբ՝ ամեն մի ախոյանի, որին սպանում էին, նրան էին նվիրում։ Կամ [Հայոց սպարապետ Մամիկոնյան] Մուշեղի այն մոլեգնած գունդը. ինձ այնպես էր թվում, թե այդ գնդից բոց ու կրակ են թափում, և դրոշակներն այնպես էին գնդի մեջ, կարծես հրդեհի բոց է անցնում եղեգների միջով։ Այսֆան ժամանակ է, որ

նրանց տերը՝ Արշակը, կորած է նրանց համար, գտնվում է Անդ-մրշն բերդում, հուժաստան երկրում, բայց նրանք իրենց սիրուց այնպես էին համարում, թե նա իրենց գլուխ է կանգնած իբրև թագավոր, կամ իրենց հետ գնդի մեջ է գտնվում, իբրև պատե-րազմին գլուխ կանգնած և իրենք նրա առաջ նրան են ծառայում: Այո, – ասում էր նա, – երանի՜ նրան, որ Հայոց գնդի տերն է, այն-պիսի տիրասեր, միաբան և հավատարիմ զորքի»¹⁴¹:

Մարտական որոշակի խնդիրներ լուծելու գործում, հատկա-պես՝ իր հեծելազորի մանևրային կարողություններով ու հար-վածային հզորությամբ, հայկական բանակն անգերազանցելի էր: Հայկական այրուձին մեծ հռչակ էր վայելում հին աշխար-հում, այդ իսկ պատճառով էլ Հռոմի, Բյուզանդիայի և Իրանի տիրակալները սիրաշահում էին և աշխատում տարբեր հնարք-ներով իրենց զինված ուժերի կազմի մեջ ընդգրկել հայկական ընտիր զորամիավորումները: Իրանում հայկական զորքի ունե-ցած վարկի մասին կարելի է որոշակի պատկերացում կազմել թեկուզ Եղիշեի հետևյալ հաղորդումից.

«...կարգն այն էր, որ երբ Հայաստանից որևէ պատվավոր զորա-վարի առաջնորդությամբ հեծելազոր էր գնում [Պարսից թագա-վորի] Դուռը, [թագավորը] մարդ էր ուղարկում ընդառաջ և հար-ցնում էր Հայոց աշխարհի ողջությունն ու խաղաղությունը. և եր-կու-երեք անգամ նույնն էր անում. զորահանդեսն էլ [թագավորն] ինքն էր անում և պատերազմ սկսելուց առաջ նրանց իրեն մոտ գալ՝ տեղ հասնելն անգամ մեծ շնորհակալության արժանի էր համարում և իր աթոռակիցների ու բոլոր մեծամեծների առաջ գովասանք էր տալիս ամենիմ, հիշում էր նրանց նախնիների ծառայությունները և պատմում էր նրանցից յուրաքանչյուրի փա-ջությունը»¹⁴²:


Կարելի է հիշել նաև Ավարայրի ճակատամարտի նախաշե-մին պարսիկ զորահրամանատար Մուշկան Նիսալավուրտի խոսքն՝ ուղղված իր զորքին.

«Դուք իմենեղ գիտեք Հայոց աշխարհի փաջությունը, և ամեն մե-կի անվեհերությունը. բուցե պարտություն կրելով՝ կենդանի-կեն-

դանի զրկվե՛ք այն մեծ կյանքից, որ ունենալու ե՛ք: Հիշեցե՛ք ձեռ կանանց և որդիներին, հիշեցե՛ք ձեռ սիրելի բարեկամներին. գուցե ոտնահար լինիք...»¹⁴³:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆՆԵՐԸ ԱՐԴԻ ԺԱՄԱՆԱԿԱՆՐՁԱՆՈՒՄ

Զինվորական պատվո վարքականոնները լուկ խոր անցյալի երևույթ չեն: Ժամանակակից հզոր պետությունների կազետական և սպայական ուսումնարաններն իրենց սաներին և առանձին զորամասերի ու ստորաբաժանումների հրամանատարությունը՝ իրենց մարտիկներին գաղափարապես և բարոյահոգեբանորեն պատրաստելիս, նրանց պրոֆեսիոնալ պատասխա-



նատվություն զգացումն ամրապնդելու նպատակով այսօր էլ օգտագործում են հատուկ մշակված պատվո վարքականոններ¹⁴⁴:

Անհրաժեշտ ենք համարում, որ մենք էլ սկզբում Պաշտպանության նախարարության ռազմական համալսարանում ու ՀՀ ԶՈՒ հատուկ նշանակության ստորաբաժանումներում, ապա և ամբողջ հայկական բանակի բարոյահոգեբանական դաստիարակության համակարգում մշակենք ու ներդնենք այսօրվա հայ ռազմիկի պատվո վարքականոնը՝ հաշվի առնելով ազգային ռազմական դաստիարակության հարուստ և ուրույն հնամենի ավանդույթները: Այդ ուղղությամբ որոշակի նախնական քայլեր արդեն արվել են¹⁴⁵:

Այս կապակցությամբ ուշագրավ են արևմտյան ռազմական հասարակագետների տեսակետները: Զինվորական արժեհամակարգերը բարոյագիտական տեսակետից քննած Շ. Ֆրենչը, նկատի ունենալով նախևառաջ ԱՄՆ զինծառայողներին, կարծում է, որ հին «ռազմիկների վաղեմի ավանդույթները կարող են ժամանակավրեպ թվալ, սակայն այժմ առավել քան երբևէ կարևորվում են իդեալականացված ռազմական ավանդույթի հետ մերօրյա ռազմիկների անկեղծ հուզական կապը, ինչպես նաև նրանց գիտակցումը, որ այդ ժառանգությանը դավաճանելն անթույլատրելի է»¹⁴⁶: Ֆրենչը նաև արդարացի համոզմունք է հայտնում, որ «ժամանակակից ռազմիկները կարող են հիասթափվել մոդեռնիզացիայի կերտել իրենց վարքի համար՝ ընտրելով պատմական և առասպելական ռազմիկների իդեալներից լավագույն հատվածները: ...Մերօրյա որոշ ռազմիկների կարող է նույնիսկ այնպես թվալ, թե իրենք ավելի շատ ընդհանրություններ ունեն Զիգֆրիդի¹⁴⁷ կամ ասպետ Գավեյնի¹⁴⁸ նման առասպելական դեմքերի, քան իրենց քաղաքացիական որոշ իրական գործընկերների հետ»¹⁴⁹: Ամերիկացի հեղինակի այսպիսի հայեցակետը պայմանավորված է նրանով, որ ԱՄՆ զինված ուժերի պատմությունն ու ռազմական ավանդույթները սահմանափակվում են ընդամենը նոր և նորագույն ժամանակներով: Այդ իսկ պատճառով կարիք է առաջանում կատարելատիպ հին հե-

րոտներ փնտրել արևմտյան այլ ժողովուրդների պատմական անցյալում, ընդհուպ նրանց դիցաբանության մեջ: Սրան հակառակ՝ մերօրյա հայ սպաները, զինվորներն ու աշխարհագորայիններն ունեն վաղնջական դարաշրջաններից սկիզբ առնող ազգային ռազմական ավանդույթների սեփական անսպառ շտեմարան, որից կարող են առատորեն քաղել հայրենասիրության, հերոսականության, ազնվության և ջանասիրության հոյակապ իրական տիպարներ և անբասիր օրինակներ: Կարևոր հանգամանք է նաև այն, որ հայկական ռազմական մշակույթն ու ավանդույթները ձևավորվել են հայրենիքի ազատության և անկախության համար մղված արդար՝ պաշտպանական բնույթի բյուրավոր պատերազմներում և ճակատամարտերում:

Հայրենասիրական-քաղաքացիական դաստիարակությունը հասարակական առողջ համախմբվածությանը հասնելու, ասել է թե՛ Հայաստանի ազգային անվտանգությունն ամրապնդելու գլխավոր միջոցներից է: Հայկական բանակը, ինչպես դարեր առաջ, կոչված է լինել Հայաստանին անմնացորդ նվիրված սերունդների պատրաստման դարբնոց:

ՕՍԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

* «Հայ զինվորականության պատվո վարքականոնը (4-5-րդ դարեր)» նախապես լույս է տեսել ՀՀ ՊՆ ռազմագիտական հանդեսում՝ «Հայկական բանակ», 2000, #3 (25), էջ 52-61: Ուսումնասիրության համաձայն ընդարձակ տարբերակը հրատարակվել է առանձին գրքույկով (Երևան, Մաշտոցյան Մատենադարան, «Արտագերս» հրատ., 2000, 48 էջ): Վերջին տարբերակը, առանց գիտական ապարատի, արտատպվել է սպայական և ենթասպայական կազմի համար նախատեսված «Հայրենիք և ծառայություն» ՀՀ ՊՆ հրատարակած դասագրքում (Եր., «Ոսկան Երևանցի».- 2001, էջ 548-562): Լույս են տեսել նաև ռուսերեն և անգլերեն համառոտ տարբերակները (տե՛ս **Айвазян Армен**. Кодекс чести армянского воинства (4-5 вв.). – *Голос Армении*, 1 февраля 2001 г., «Армянский вестник» (Москва), No. 1-2, 2002 г.; **Ayvazyan Armen**, “Armenian Warriors, Japanese Samurai: Military Codes of Honor,” *Yerevan Magazine*, Jul/Aug 2011, pp. 118-121):

** Մի շարք ուսումնասիրություններում քննել ենք 4-5-րդ դարերի հայ ռազմիկի արժեհամակարգին ծնունդ տված Հին Հայաստանի ինչպես արտաքին իրադրությունը, այնպես էլ ներքին միջավայրի՝ լեզվական, ժողովրդագրական, էթնոսոցիալական ու էթնոհոգեբանական որոշ առանձնահատկությունները.

Ա) լեզվական ազգայնականության ու «լեզվաքաղաքականության» մասին տե՛ս **Այվազյան Արմեն**. «Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը. հայկական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն: Երևան. «Արտագերս», 2001:

Բ) Հին Հայաստանի աշխարհառազմավարական յուրահատկությունների, պետական գաղափարախոսության ու հայոց էթնիկական ինքնագիտակցության մասին տե՛ս **Այվազյան Արմեն**. «Հին Հայաստանը որպես «ազգային պետություն».- «Էջմիածին», № 5, 2005, էջ 123-138: (Վերոնշյալ երկու նյութերը փոքր-ինչ լրամշակված վիճակում՝ «Հայ

զինվորականության պատվո վարքականոնի» 2000 թ. հրատարակված տեքստի հետ միասին, վերահրատարակվել են առանձին գրքով **Այվազյան Արմեն**. «Հայկական ինքնության հիմնաքարերը. բանակ, լեզու, պետություն», Երևան, «Լուսակն», 2007): **Айвазян А. М.** Геополитическая детерминанта имперских предрассудков и византийский военный прагматизм (по материалам «Стратегикона» Маврикия). – Вестник Московского университета. Серия 12: политические науки, - 2012. - № 1. - стр. 25-37: **Ayvazyan Armen.** The Armenian Military in the Byzantine Empire: Conflict and Alliance under Justinian and Maurice (2014, 2nd revised and expanded edition), pp. 13-19, 108-126: **Ayvazyan Armen.** “Response to Everett L. Wheeler’s review of *The Armenian Military in the Byzantine Empire: Conflict and Alliance under Justinian and Maurice*”, Armenian Folia Anglistika, № 1-2 (11), 2013, pp. 175–187: **Айвазян Армен.** Армянское войско в эпоху Юстиниана и Маврикия: ответ на псевдокритику. – Учен. зап. Казан. ун-та. Сер. Гуманит. науки. – 2020. – Т. 162, кн. 1. – С. 191–215:

Գ) Հին Հայաստանի պատմական ժողովրդագրության մասին տե՛ս **Айвазян Армен.** Армяно-персидская война 449–451 гг. Кампании и сражения.– Ереван: Воскан Ереванци, 2016; СПб.: Алетея, 2017, с. 91-107, 317:

Հետագայում մտադիր ենք ամբողջացնել ու հրապարակել 1997 թվականից ի վեր «սառեցված» «Հայկական ինքնության և ազգայնականության կազմավորումը» մեր մենագրությունը, որի առանձին գլուխներն էլ հենց կազմում են վերոթվարկյալ նյութերի մեծ մասի հենքը:

- ¹ Հանգամանորեն հիմնավորել ենք, որ 538-539 թթ. ապստամբության ռազմական առաջնորդը եղել է բյուզանդական Հայաստանի մի հատվածում՝ Ներքին (Բարձր) Հայքում 387 թ. ի վեր շարունակաբար պաշտոնավարած հայոց սպարապետներից վերջինը՝ Վասակ Մամիկոնյանը (տե՛ս **Ayvazyan Armen.** The Armenian Military in the

Byzantine Empire: Conflict and Alliance under Justinian and Maurice. 2014, 2nd revised and expanded edition, pp. 54-56):

- ² «Եւ պատուիրէր նմա... տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիր մեռանել» (**Փաւստոս Բուզանդացի**, Պատմութիւն Հայոց ի չորս դպրութիւնս (չորրորդ տպագրութիւն), Վենետիկ, 1933, Դպրութիւն Ե, Գլուխ ԽԴ): Այստեղ Մալխասյանցը զգալիորեն հեռացել է բնագրից և կորցրել Փաւստոսի ասածի նկատմամբ իր հարազատությունը, ահա՝ «Նրան պատվիրեց... Հայոց աշխարհի համար պատերազմել: «Ուրախությամբ հանձն առ մահ աշխարհի համար, ինչպես և քո քաջ նախնիքը» (տե՛ս **Փաւստոս Բուզանդ**, *Հայոց պատմություն*: Թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ստ. Մալխասյանցի: ԵՊՀ հրատ., 1987, էջ 391): Երկու բացառությամբ (էջ 15-16, 53-54, ծնթ. 22, 141), սույն ուսումնասիրության մեջ Փաւստոս Բուզանդից կատարված մեջբերումները տրված են ժամանակակից հայերենով իմ թարգմանությամբ:
- ³ Եվրոպայի ժողովուրդները, իբրև ազգեր, ձևավորվել են հիմնականում 16–19-րդ դարերում, այդ պատճառով էլ՝ հայրենիքի համար գոհաբերվելու գաղափարական դրույթն այն բովանդակությամբ, որով այն արձանագրված է 5-րդ դարի Հայաստանում, հայերեն գրավոր առաջին իսկ աղբյուրներում, Եվրոպայում կյանքի է կոչվել դարձյալ նույն 16-19-րդ դարերում, թեև դրա նախադրյալները կային ավելի վաղ շրջանում (օրինակ, 14-15-րդ դարերում ֆրանսիական հայրենասիրության նմանատիպ տարրերի մասին տե՛ս **Liah Greenfeld**, *Nationalism: Five Roads to Modernity*. Cambridge, Mass.: Harvard University Press, 1992, pp. 96-97): Ազգայնականության հեղինակավոր մասնագետ Լորդ Աքտոնն այս դրույթը բնորոշում է իբրև «իսկական հայրենասիրության մեծ նշան» և «քաղաքական կյանքի արդյունք»։ — **Lord Acton**, "Nationality", in **Omar Dahbour and Micheline R. Ishay**, eds., *The Nationalism Reader* (New Jersey: Humanities Press, 1995), p. 115: Հայ և եվրոպական ազգերի և ազգայնականության առաջացման ժամանակագրությունն ու որոշ կարևոր

հանգամանքները համեմատական քննության են առնված հետևյալ ուսումնասիրություններում՝ **Այվազյան Ա.** «Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը. հայկական և եվրոպական սկզբնաղբյուրների համեմատական քննություն» և «Հին Հայաստանը որպես «ազգային պետություն»:

- ⁴ «...զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի, զի աւելի քան զյիսուն սպի կայր վիրաց, և յառնի յանդամսն, զայն անգամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր». - **Փաւստոս Բուզանդացի**, *Պատմութիւն Հայոց*, Ե, Գլ. ԽԴ (վենետիկյան հրատ.): Այս հատվածում Բ. Պատկանյանի հրատարակության հիմք ձեռագիրը ակնհայտորեն աղավաղված է, ահա. «զի քան զդրամ խայծ ոչ գտանէր ողջ ի մարմնի նորա՝ զոր խոցեալ էր ի պատերազմի, զի յառնի յանդամսն աւելի քան զյիսուն սպի կայր վիրաց, եւ զայն անդամ բացեալ առաջի ամենեցուն ցուցանէր» (տե՛ս *Փաւստոսի Բուզանդացոյ Պատմութիւն Հայոց*. Թիֆլիս, 1912, էջ 385): Մալխասյանցը հիմք է ընդունել հե՛նց այս աղավաղված ընդօրինակումը, թարգմանելով՝ «հենց նրա առնի անդամի վրա հիսուն սպի կար վերքերից», և ծանոթագրելով, թե՛ «Վենետիկյան հրատարակության մի ձեռագիր «յիսուն»-ի փոխարեն ունի «տասն», որ ավելի հավանական է» (**Փաւստոս Բուզանդ**, *Պատմություն հայոց*: Թարգմ., ներած. և ծնթ.՝ Ստ. Մալխասյանցի: Երևան, «Հայաստան», 1968, էջ 293, 340): Փաւստոսը խոսում է Մանվելի ողջ մարմնի վրա եղած հիսուն սպիի մասին, որ, ինչպես վերը տեսանք, արտահայտված է վենետիկյան հրատարակության մեջ: Այս դրվագը ճիշտ է ընթերցված Գևորգյանի ռուսերեն և (հավանաբար՝ վերջինիս ազդեցությամբ) Գարսոնյանի անգլերեն թարգմանություններում (տե՛ս **Фавстос Бузанд**, *История Армении*, Перевод с древнеармянского и комментарии М. А. Геворгяна. Ереван, 1953, с. 197. *The Epic Histories Attributed to Pawstos Buzand (Buzandaran Patmutiwnk)*. Transl. and commentary by Nina Garsoian. Cambridge, Mass.: Harvard University Press, 1989, p. 229):

- 5 Տե՛ս, օրինակ, **Աբեղյան Մանուկ**. Երկեր: Հ. Գ. Երևան. ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1968, էջ 247-249: Սպարապետ Մանվելի մասին պատմող ամբողջական հատվածներն անվանվում են «հերոսական բանաստեղծություն», «Մանվելի վեպ», «պատում», «գրույց» (նույն տեղում, էջ 257-258, 262, 267): Ժամանակին հատուկ հիմնավորել ենք, որ «սխալ է Փավստոս Բուզանդին ներկայացնելն իբրև ընդամենն «խկապես գրագետ մի վիպասան, որ սովորած է եղել շատ գրույցներ և իմացել է բերանացի վիպել շատ պատումներ «Պարսից պատերազմից», ինչպես մի Նախո Բեռի կամ Մոկացի Հովան պատմել են "Սասնա ծռերից"» (Մ. Աբեղյան), իսկ Փավստոսի «Հայոց պատմություն» էլ հասկանալ «իբրև մի ժողովածու ավանդությունների ու գրույցների» (Ստ. Մալխասյանց)» (տե՛ս **Այվազյան Արմեն**. Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ: Երևան. «Արտագերս», 1998, էջ 169-185):
- 6 **Van Lommel, Korneel**. “Heroes and Outcasts: Ambiguous Attitudes Towards Impaired and Disfigured Roman Veterans,” *Classical World*, Volume 109, Number 1, Fall 2015, pp. 91-117: at 94-95, 97, 101: Տե՛ս նաև **Evans R. J.**, “Displaying Honourable Scars a Roman Gimmick,” *Acta Classica* 42 (1999), 77-94; **Rance, Philip**, “Displaying Many Wounds: The Portrayal, Significance and Symbolism of War Wounds in Late Antiquity,” *OIKOS (Late Antiquity and Byzantine Studies)*. Lecture in cooperation with ACASA, University of Amsterdam (26 Nov. 2018):
- 7 **Рокоссовский К. К.** Солдатский долг. Москва: Воениздат, 1968, с. 147. հմմտ. **Ռոկոսովսկի Կ. Կ.** Չինվորի պարտքը: Երևան. «Հայաստան» հրատ., 1970, էջ 195:
- 8 «Եւ մեք իսկ աւասիկ յիւրաքանչիւր մարմինս ունիմք վերս եւ սպիս բազումս» (**Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*: Թարգմ. և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի. Երևան. ԵՊՀ հրատ., 1989, էջ 204-205):

⁹ «Սա այր աշխարհասեր և հայրենասեր եղեալ... լաւ համարէր զմեռանելն ի վերայ հայրենեացն, քան թէ տեսանել զորդիս օտարածնաց կոխելով զսահմանս հայրենեացն և հարազատից արեան նորա տիրել արանց օտարաց» (**Մովսէս Խորենացի**, *Պատմութիւն Հայոց*, Գիրք Ա, Գլ. ԺԳ: Քննական բնագիրը և ներածութիւնը՝ Մ. Արեղեանի և Ս. Յարութիւնեանի, Երևան, 1991 (Տփղիսի 1913 թ. նմանահանութիւն)): Արեղյանը և Հարությունյանը նախընտրել են «աշխատասեր» բառը և, որպէս տարընթերցում, տողատակ են իջեցրել որոշ ձեռագրերում դրա փոխարեն եղած «աշխարհասեր»-ը, որը, մեր համոզմամբ, շատ ավելի է ներդաշնվում այս նախադասության իմաստի և ամբողջ ետնախորքի հետ (նույն տեղում, էջ 43): Որ այս բառի առաջին բաղադրիչը *աշխարհ*-ն է, եւ ո՛չ *աշխատ*-ը, հաստատվում է նաև մի կողմնակի տեղեկությամբ. Գրիգոր Մագիստրոսը, 11-րդ դարի կեսերին, ձեռքի տակ ունենալով Խորենացու «Հայոց պատմության» մեզ չհասած մի ձեռագիր, խնդրո առարկա հատվածը վերաշարադրել է ահա այսպէս՝ «հայրենասեր եւ աշխարհաշէն ըստ մերոյն Արամայ» (տե՛ս *Գրիգոր Մագիստրոսի թղթերը*: Աշխ. Կ. Կոստանեանցի, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 38): «Աշխարհասեր» բառը օգտագործված է նաև ավանդաբար Խորենացուն վերագրվող հետևյալ երկում՝ *Գիրք պիտոյից*: Աշխատասիրությամբ Գոհար Մուրադյանի, Երևան, ԳԱԱ հրատ., 1993, էջ 158, 179, 327:

¹⁰ Ժամանակակից հետկառուցվածքաբանության (պոստ-ստրուկտուրալիզմի) ֆրանսիացի հիմնադիրներից մեկը՝ Ռոլան Բարտը, իր *S/Z* գրքում (Paris, 1970), գրական տեքստի վերլուծության համար առաջարկում է մեր քննությանն արտաքնապես որոշ նմանություն ունեցող տեխնիկա, որը հայտնի է որպէս *կառուցվածքային-իմաստաբանական* վերլուծություն (структурно-смысловой анализ): Սակայն մեր կիրառած հետազոտական եղանակը Բարտի առաջարկածից ամբողջովին տարբեր է, նախ՝ պատմասոցիոլոգիական իր ուղղվածությամբ, ապա՝ զուգահեռ (պատմական) աղբյուրների օգտագործմամբ: Այդ իսկ պատճառով այն ճիշտ կլինի անվանել *պատմա-կառուցվածքաիմաստաբանական* վերլուծություն:

¹¹ Կորին գուգահեռ ակոսներով կտրված ջրովի փոքրիկ ցանքատարածք է: Ա. Մարտիրոսյանը նկատում է, որ մեր օրերում Փավստոսի «ոչ քան գկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել»-ը կարտահայտվեր «թույլ չէր տալիս, որ Հայոց աշխարհի սահմաններից *գեթ մի թիզ հող օտարվի*».- տե՛ս **Ա. Մարտիրոսյան**, «Ազգ» և ազգային որոշիչ.- *Աշտանակ* (հայագիտական պարբերագիրք), Բ, Երևան-«Նաիրի», 1998, էջ 11: Թերևս Ա. Մարտիրոսյանի հետ կարելի է համաձայնել, սակայն մի լուրջ վերապահությամբ, այն է՝ Փավստոսն ունի նաև *թիզ* բառը՝ «[Աստուած] չափեաց գերկինս թգաւ եւ գերկիրս ամենայն քլաւ իւրով» (**Փավստոս Բուզանդ**. *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. Դ, էջ 300):

¹² Այս կետը պարզ բացահայտվում է Փավստոսի շարադրած մեկ այլ դրվագում. Մանվել սպարապետը, թվարկելով հայ ռազմիկի հանձնառությունները, հատուկ վերհիշում է իր զինակիցներին որպես «եղբայրություն ընկերութեան»՝ «Չի լաւ էր ինձ, եթէ ի պատերազմի մեռեալ էի... ի վերայ եղբայրութեան ընկերութեան... **Փավստոս Բուզանդ**. *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. ԽԴ, էջ 392. այս հատվածը, քիչ ավելի ուշ, շարադրանքում մեջբերված է ամբողջովին):

¹³ «Այլ քաջն զօրավարն սպարապետն Հայոց լի էր քինիւ մեծաւ և բազում նախանձու զամենայն աւուրս կենաց իւրոց, և միամտութեամբ և արդար վաստակով ջանայր հանապազ և վաստակէր ի վերայ թագաւորութեանն Հայոց աշխարհին: Չտիւ և զգիշեր կայր յաշխատութեանն. ջանայր և ճգնէր կալ ի ճակատու պատերազմին, և ոչ թողոյր բնաւ ամենեւին և ոչ քան գկորի մի գետին ի սահմանաց երկրին Հայոց ուրեք վտարել. ի վերայ աշխարհին կեալ, և ի մեռանել ի վերայ անուանն քաջութեան, ի վերայ բնակ տերանց, և ի վերայ բնակչաց աշխարհին, ի վերայ քրիստոնէութեանն հաւատոյ, ի վերայ հաւատացեալ յԱստուած և ի Քրիստոս մկրտեալ ժողովրդոց, ի վերայ եկեղեցեաց, և ի վերայ նուիրեալ սպասուց, ի վերայ վկայարանացն Քրիստոսի, ի վերայ ուխտի Աստուծոյ, ի վերայ քերց և եղբարց, ի վերայ մերձաւորաց տոհմին, ի վերայ բարեկաց բարեկիր բարեկամաց

հանապազ կայր զօրավարն Մուշեղ ի նահատակութեան պատերազմին, զանձն փոխանակ առնել աշխարհին. և յանձն իւր անխալէր ի մեռանել, զամենայն աւուրս կենաց իւրոց առաջի իւրոց բնակ տէրանցն Արշակունւոց վաստակէր» (**Փավստոս Բուզանդ**. *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. Ի, էջ 326): Այս գլխի մեր ընթերցումը զգալիորեն տարբերվում է Մալխասյանցի առաջարկած ընթերցումից. հմմտ. **Փավստոս Բուզանդ**, *Պատմություն հայոց*, թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 254:

- ¹⁴ «Սոյնպէս և ի թագաւորին Պապայ ձեռն արկանէր, երդնոյր և ասէր՝ թէ «կեցից և մեռայց ի վերայ քո որպէս նախնիքն իմ ի վերայ նախնեացն քոց, որպէս և հայրն իմ ի վերայ հօրն քո Արշակայ, սոյնպէս և ես ի վերայ քո» (**Փավստոս Բուզանդ**. *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. Դ, էջ 298-299): Հայոց մեջ հնուց մինչև մեր օրերն ընդունված զինվորական երդման մի շարք ուրիշ օրինակներ են բերված ու համադրված հետևյալ գրքույկում՝ **Դևրիկյան Տիգրան**. *Չինվորական երդման խորհուրդը*: Երևան. ՀՀ ՊՆ լրատվության և քառոզչության վարչություն, 2001:
- ¹⁵ «...մարգէին զմիմեանս բանիւք ասելով՝ «քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր և ի վերայ ազգիս մեր, և մի՛ տեսցեն աչք մեր կոխան ոտից լեալ պղծալից արանց զսրբարանս մեր և զտեղի փառատութեան Աստուծոյ մերոյ. այլ նախ՝ ընդդէմ մեր լիցի սուր թշնամեացն. և ապա լիցի զոր կամիցին...» (*Ղեւոնդեայ վարդապետի պատմություն*, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 149):
- ¹⁶ «լաւ համարեալ զմահ քաջութեամբ, քան զկեանս վտանգաւոր՝ ձեռնամուխ եղեն յիս ապստամբութեան եւ ի բաց կացին ի հնազանդութենէն Իսմայելի», «Եւ թէպէտ կարօղ էին մեկնել ի կողմն Յունաց եւ ապրեցուցանել զանձինս ի չարասէր ապիրատութենէ զրպարտողացն՝ սակայն լաւ համարեցան (մեկ այլ ձեռագրում՝ «համարեցան ընտրել»- Ա. Ա.) զմահ անձանց, քան տեսանել զկորուստ աշխարհիս եւ զանպատուութիւն եկեղեցեաց Քրիստոսի» (տե՛ս *Ղեւոնդեայ վարդապետի պատմություն*, էջ 138, 148. հմմտ. **Ղևոնդ**, Պատմություն:

Թարգմ., ներած. և ծնթ.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի: Երևան. «Սովետական գրող», 1982, էջ 111, 118-119):

- ¹⁷ Դավիթ-բեկի այս անվարան դիրքորոշումը պահպանվել է Ռուսաստանի արտաքին քաղաքականության դիվանում պահվող՝ 1725 թ. վերջին հին լուսերենով գրված հետախուզական բնույթի մի գեկուցագրում. «Из Нахчивана турецкой паша посылал к армянам Капанским — к Даутбег баше, чтоб он со своими армянами поклонился турецкому салтану и был бы у турок в подданстве. Но он, Даутбег баша, отказал ему, турецкому паше, и сказал, что я де вас не слушаю, в подданстве у вас быть не хочу и буду де против вас стоять доколе жив буду, а когда умру и что после меня останца, тогда де как хотят, так и делают» (Архив внешней политики России, фонд Сношения России с Персией, оп. 1, 1725, д. 5, л. 335б):

- ¹⁸ Նույն տեղում Դուկաս Սեբաստացին արտահայտչորեն ընդգծում է նաև 1722 թ. Դավիթ-բեկի գլխավորությամբ Վրաստանից դեպի Սյունիք ճանապարհ ընկած 2000 հայ ռազմիկների մարտունակության բարձր աստիճանը. «արք՝ որոց մինն հալածէր զհազարս, և երկուքն՝ զբիւրս» (*Դաւիթ Բէկ կամ «Պատմութիւն Ղափանցոց»*: Աշխ.՝ Սամուել վրդ. Արամյանի, Վենետիկ-Ս. Ղազար, 1978, էջ 149-150): Այսպիսի չափազանցությունը գալիս էր ընդամենն ընդգծելու այդ զինվորների մարտական լավ պատրաստվածությունն ու հարուստ ռազմական փորձը, որը նրանցից շատերը ձեռք էին բերել պարսկական բանակի հայ-վրացական ստորաբաժանումների կազմում, հատկապես հեռավոր աֆղանների դեմ մղված երկարատև պատերազմներում:

- ¹⁹ «...ջանասցուք կերպիւ իւիք ազատիլ ի հպատակութենէ այլազգեաց և անօրէն բռնաւորաց, կամ մեռցուք արիաբար վասն անուան փրկչին մերոյ և կամ յաջողեսցի մեզ Աստուած ի յառաջադիմութիւնս մեր...: ...ըստ ասութեան, ուր ոչ գոյ վտանգ մահու, անդ և ոչ գոյ փառք և պատիւ» (**Գրիգորյան Վ. Ռ.** Հովսեփ Էմինի և Հովսեփ Ար-

դությանի անտիպ նամակները (1791–1792 թթ.)։ – Պատմա-բանասիրական հանդես, 1990, №4, էջ 191)։

²⁰ «...զի կամ մեռցուք, և աղիս մեր ի ծառայություն Բելայ կացցե, կամա զաջողություն մատանց մերոց ի նա ցուցեալ՝ ցցուեսցի ամբոխն, և մեք եղիցուք յաղթություն ստացեալք» (տե՛ս **Մովսէս Խորենացի, Պատմություն Հայոց**։ Գիրք Ա, Գլ. ԺԱ)։

²¹ **Փավստոս Բուզանդ**. *Հայոց պատմություն* (ԵՊՀ հրատ., 1987), Գ, Գլ. ԺԱ, էջ 45-47։

²² «Մխիթարեցարու՛ք ի Քրիստոս. վասն զի մանաւանդ որք մեռանն, նոքա յաղագս աշխարհի եւ եկեղեցեաց եւ աստուածագործ օրինացն տուչութեան, զի մի՛ գերեալ քանդեսցի աշխարհս, եւ սուրբ եկեղեցիքն աւերեսցին, եւ կամ մարտիրոսք անարգեսցին, եւ կամ սուրբ սպասքն ի ձեռս պղծոցն եւ անօրինացն անկցին, եւ սուրբ ուխտն այլայլեսցի, եւ որդիք մկրտութեան գերութեամբ անկցին ի պէսպէս պղծութիւնս անօրէնութեան կարգաց պաշտամանց։ Եւ եթէ զաշխարհս ունիցին արդեւք թշնամիքն, եւ զիւրեանց զանօրէն զանկրօն զանաստուած կրօնիցն զօրէնս աստ արդեւք հաստատէին. որ, զոր խնդրեմքս, քա՛ւ եւ մի՛ յիցի։ Իսկ մեր բարեպաշտութեան նահատակք ի վերայ այսորիկ ճգնեալ պատերազմաւ, զչար պահեալ հեռացուցեալ հալածեալ յաշխարհէ՝ մեռան, զի մի՛ յայսպիսի աստուածապաշտ եւ աստուածասէր աշխարհ անօրէնութիւն մտեալ, չարի կամացն ի ծառայութիւն արկցե, եւ զբազում ոգիս ջերմեռանդն սիրով բնութեանն ի միմեանց քակտեալ քայքայեսցէ։ Իսկ սոքա մինչդեռ կենդանի էին, արդար վաստակօք ի վերայ այսորիկ վաստակեցան. եւ ի մահուն իւրեանց զմիամտութեանն հաստատութեանն զանձինս փոխանակ տալով ընդ ճշմարտութեանն տեսուն, մատուցին ի վերայ եկեղեցեաց, եւ ի վերայ մարտիրոսաց, եւ ի վերայ ուխտին սրբութեան օրինացն, եւ ի վերայ կարգաց հաւատոցն, եւ ի վերայ ուխտին քահանայութեան, եւ ի վերայ անթիւ ի նոր ի Քրիստոս մկրտելոցն, ի վերայ բնակի տեսուն աշխարհիս։ Որք այնմ ամենայնի փոխանակ զանձինս իւրեանց ոչ խնայեցին, ընդ վկայս Քրիստոսի է նոցա հա-

մար պարտուոյ: Արդ մի՛ լացցուք զնոսա, այլ պատուեսցուք ընդ ճշմարտութեանն, առ նահատակսն դիցուք ընդ աշխարհ օրէնս յաւիտեանս յաւիտենից, զի ամենայն որ զսոցա յիշատակ քաջութեան իբրեւ Քրիստոսի նահատակաց անխափան կատարեսցէ: Եւ մեք տօնս արասցուք, եւ ուրախ լիցուք. զի Աստուած այսօրիւք հաճեսցի ընդ մեզ, յայսմ հետէ խաղաղութիւն շնորհեսցէ»: Եւ եղ օրէնս ընդ աշխարհն մեծ քահանայապետն Վրթանէս՝ զնոցա առնել զյիշատակն ամ յամէ. եւ որք փոխանակ աշխարհին փրկութեան մեռանիցին ի նմանութիւն նոցա, եղ կանոն՝ յիշել զսոսա առ սուրբ սեղանն Աստուծոյ ի ժամ պատարագին, յորժամ զանուանս սրբոցն կարգիցեն, եւ ապա զկնի նոցա զնոցայն. եւ մնացելոցն անկելոցն գութ եւ խնամ կալցին» (**նույն տեղում**): Պահպանել ենք Ստ. Մալխասյանցի թարգմանությունը աննշան սրբագրումներով՝ մասնավորապես, «մեռնել» բառը, մեկ բացառությամբ, փոխարինելով ժամանակակից հայերենում այս բովանդակության համար առավել ճշգրիտ «զոհվել» հոմանիշով:

²³ Տե՛ս **Վարդանյան Ռաֆայել, Բաղայան Հասմիկ**. Վարդանանց տոնի կանոնականացումը. – «Ավարայրի խորհուրդը»: Երևան. «Մուղնի» հրատ., 2003, էջ 91-95:

²⁴ Մինչև «Հագակուրե»-ի լույս աշխարհ գալը Ճապոնիայում արդեն շրջանառության մեջ էին դրված նմանատիպ երեք այլ ստեղծագործություններ՝ «Սամուրայական ցեղերի մասին կանոնադրությունը» (1540–ական թթ.), իշխան Թակեդա Մինգենի վարքը և Յուձան Դայդոճիի (ծն. 1639 թ.– մահ. 1730 թ.) գրած «Ռազմական արվեստի հիմունքները»: Սակայն, «Հագակուրե»-ին էր վիճակված դառնալ սամուրայների «սուրբ գիրքը» (տե՛ս **Долин А. А., Попов Г. В. Кемпо – традиция воинских искусств**. Москва: Наука, 1990, с. 186).

²⁵ Ինչպես Եդիշեն էր սկզբում Հայոց բանակի մարտիկ եղել և հետո միայն դարձել քրիստոնյա ճգնավոր վարդապետ, այնպես էլ Յամամոտո Յունետոմոն սկզբում 10 տարի սամուրայ էր եղել, այնուհետև՝ իր տիրոջ մահից հետո բուդդայական վանական դարձել (տե՛ս

Кодекс Бусидо. Хагакуре. Сокрытое в листве. Переводы А. Боченкова, В. Горбатько. Пред. Т. Улищенко. Москва: Изд-во Эксмо, 2006, с. 16):

- ²⁶ **Пронников В. А., Ладанов И. Д.** *Японцы (этнографические очерки)*. Москва: Наука, 1983, с. 239-242; cf. **Yamamoto Tsunetomo**, *Hagakure: The Book of the Samurai*, trans. William S. Wilson (NY: Kodansha International, Ltd., 1979), pp. 17-18, 20-21, 33-34, 66-67:

- ²⁷ «Ապա եղև օր մի յաւուրց, եկն եմուտ թագաւորն Հայոց Արշակ զասպաստանաւ. միով զարքային Պարսից, իսկ ախոռապետն արքային Պարսից նստէր ի ներքս ի տան ասպաստանին: Իբրեւ տեսանէր զթագաւորն, ոչ ինչ առ լուս կալեալ մեծարեաց գնա, եւ ոչ ինչ շուքս դնէր նմա. այլ եւ անարգանս եւս դնէր թշնամանաց, ասելով ի պարսկերէն լեզու, թէ՛ «Այծից Հայոց արքա, եկ նիստ ի խրճան խոտոյ ի վերայ»: Չոր բանս իբրեւ լսէր սպարապետն զօրավարն Հայոց Մեծաց, որում Վասակն կոչէր, ի Մամիկոնեան տոհմէն, մեծաւ բարկութեամբ եւ բազում սրտմտութեամբ բարկանայր. ի վեր առեալ զուսերն, զոր ընդ մէջն ունէր, հարեալ անդէն ի տեղւոջն զախոռապետն արքային Պարսից գլխատէր ի ներքս յասպաստանի անդ: Չի ոչ կարաց լսել եւ ժոյժ ունել զիւրոյ թագաւորին զանարգանս. զիւր մահն առաջի եղեալ լաւ հաշուէր բազում անգամ, քան զտեսաւն իւրոյ լսել զվատթարութեան թշնամանս» (**Փավստոս Բուզանդ.** *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Դ, Գլ. ԺԶ, էջ 196):

- ²⁸ «Եւ պատուիրէր նմա հնազանդ հպատակ կալ արքային Արշակայ, եւ լինել միամիտ, ջանալ եւ վաստակել, եւ տալ պատերազմ փոխանակ աշխարհին Հայոց զանձն քո, որպէս քաջ նախնիքն ի վերայ աշխարհին մտադիւր մեռանել: Չի, ասէ, առ Աստուած այն արդարութիւն մեծ է եւ ընդունելի, եւ ոչ Աստուած թողու ի ձեռաց, յորժամ այնպէս լինիք: Անուն քաջութեան յերկրի թողցուք, եւ զարդարութիւն յերկինս ընծայեցուցանեք. եւ ամենեւին ի մահուանէ մի՛ երկնջիք, այլ յուսասցիք յայն, որ զամենայն արար եւ հաստատեաց: Եւ գնենգութիւն

եւ զպղծութիւն եւ զչարութիւն յանձանց ձերոց ի բաց արարէք, եւ զՏէր Աստուած սրբութեամբ եւ միամտութեամբ պաշտեցէք. եւ ի վերայ աստուածապաշտ աշխարհի համարձակութեամբ մեռարուք, զի այն ինքն մահ վասն Աստուծոյ է, փոխանակ եկեղեցեաց նորա եւ ուխտի նորա, եւ ի վերայ բնակ տէրանց աշխարհիս Արշակունոյ» (**Փափսոսս Բուզանդ. Հայոց պատմություն**, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. ԽԴ, էջ 390):

²⁹ «Եւ ահա եկն եհաս ժամանակ, զի զամենայն զկեղտ անուն ի մենջ ի բաց բարձցուք» (**Եղիշէ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 210-211):

³⁰ Кодекс Бусидо. Хагакуре. Сокрытое в листве, с. 368.

³¹ **В. А. Пронников, И. Д. Ладанов.** *Японцы*, ук. соч. с. 243-244. Չին-վորի՝ ծուլությունից խուսափելու մասին բավական մանրամասն խոսում է նաև Յուձան Դայդոձին (տե՛ս *Книга самурая; Юдзан Дай-додзи, Будосесинсю; Ямамото Цунемото, Хагакуре; Юкио Мисима, Хагакуре Нюмон*, Санкт-Петербург: Евразия, 2000, с. 64-65): Յուձան Դայդոձիի 56-կետանոց պատգամի մանրամասն մի վերլուծություն ներկայացված է հետևյալ մենագրության մեջ՝ **French, Shannon E.** *The Code of the Warrior: Exploring Warrior Values Past and Present*. Foreword by Senator John McCain. Lanham, Md.: Rowman & Littlefield, 2003, pp. 206-224:

³² Кодекс Бусидо. Хагакуре. Сокрытое в листве, с. 369.

³³ Кодекс Бусидо. Хагакуре. Сокрытое в листве, с. 400.

³⁴ «Իսկ որ նենգաւոր գտանիցի բանիւ կամ գործով... Աստուծոյ է այն նենգութիւն եւ ոչ մարդոյ. եւ յԱստուծոյ ընդունելոյ է զվրէժ հատուցման չարեաց իւրոց» (տե՛ս **Ներսէս Ծնորհալի, Թողթ ընդհանրական:** Աշխատասիրությամբ՝ Է. Մ. Բաղդասարյանի, Երևան, ԳԱ հրատ., 1995, էջ 153):

- ³⁵ **Н. И. Конрад**, *Сунь-Цзы*. Трактат о военном искусстве. М.-Л.: Изд. АН СССР, 1950, с. 33, 66-67.
- ³⁶ Իր միտքը շարունակելով՝ Հերոդոտոսը նշում է պարսիկների միջավայրում ամոթալի համարվող հաջորդ երևույթը՝ «պարտք անելը», որովհետև «պարտք վերցնողը, նրանց կարծիքով, ստիպված է լինում ստել» (**Հերոդոտոս**. Պատմություն ինը գրքից: Թարգմ. քնագր. և ծանոթագր.՝ Սիմոն Կրկյաշարյան: Երևան. ԳԱ հրատ., 1986, էջ 59. հմմտ. **Геродот**. История в девяти книгах. Пер. и прим. Г. А. Стра- тановского. Ленинград: Наука, 1972, с. 56):
- ³⁷ **Страбон**. География в 17 книгах. Пер., статья и комм. Г. А. Стра- тановского. Ленинград: Наука, 1964, с. 681: Ստրաբոնը նաև նկա- րագրում է, թե ինչպես են անցկացվել պարսից ավագանու արու զա- վակների մարզանքները, ճամբարումները և որսորդությունը: Մաս- նավորապես, պատանիները բաժանվել են 50-հոգանոց խմբերի, փորձառու և տաղանդաշատ ուսուցիչները նրանց պատմել են առա- սպետական և իրական հերոսների սխրագործությունների մասին, մշակել նրանց խոսքի արվեստը, շնչառությունն ու թոքերը, ինչպես նաև սովորեցրել են «դիմանալ շոգին, ցրտին և անձրևին և անցնել բուռն հոսանքները՝ միաժամանակ չոր պահելով զենքն ու հագուս- տը: Բացի այդ, պարսիկ երիտասարդներին սովորեցնում են անա- սուններ արածեցնել, գիշերները անցկացնել դրսում և ուտել վայրի մրգեր, ինչպիսիք են պիստակը, կադինը և վայրի տանձը... Երիտա- սարդները որսին մասնակցում են ձիերի վրա՝ արձակելով տեղեր, ինչպես նաև աղեղով և պարսատիկով: Երեկոյան նրանք զբաղվում են ծառատունկով, հավաքում են բուժիչ արմատներ, կարգի են բե- րում զենքը, որոգայթներ ու ծուղակներ են պատրաստում» (նույն տեղում):
- ³⁸ «...ի նետաձգութեանն գեղեցկաձիգք և դիպեցուցողք, յորս՝ թեթևա- շարժք և նախասպանք, յերկոցունց ձեռաց աջողակք, և յամենայն կողմանս ուղղակիք և շնորհալիցք» (**Ղազար Փարպեցի**. Պատմու- թիւն Հայոց: Զննական քնագիրը Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխա-

սեանցի: Աշխարհաբար թարգմ.՝ Բ. Ուլուբաբյանի, Երևան. ԵՊՀ հրատ., 1982, էջ 268-269): Բ. Ուլուբաբյանը «նախասպանք»-ը թարգմանել է որպես «առաջինը հարվածող», որն ուղղել ենք «[ախոյանին] կանխող վնոորոշ (մահացու) հարված հասցնող»-ի:

³⁹ Տե՛ս Փավստոս Բուզանդ. *Հայոց պատմություն* (ԵՊՀ հրատ., 1987), Ե, ԳԼ ԽԳ, էջ 384, 386, 388:

⁴⁰ Տե՛ս **Ս. Բոռնազյան**, Հայ ասպետությունը Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում. – *Տեղեկագիր հասարակական գիտությունների*, 1963, № 5, էջ 87: Օտար աղբյուրները Կիլիկիայում ազատների դասին պատկանող հայ ձիավորներին կոչում էին ասպետին համագոր Ֆրանսերեն *chevalier* տերմինով (նույն տեղում):

⁴¹ Նույն տեղում, էջ 100:

⁴² **Richard Barber**, *The Knight and Chivalry*. Revised edition (Woodbridge: The Boydell Press, 1995), p. 6.

⁴³ *Советская историческая энциклопедия*. Главный редактор Е. М. Жуков, Том 12 (Москва: “Советская энциклопедия”, 1969), с. 426; *Энциклопедический словарь*. Издатели Ф. А. Брокгауз, И. А. Ефрон, Том XXVII (С.-Петербург, 1899), с. 458-461: **Broughton, Bradford A.** *Dictionary of Medieval Knighthood and Chivalry: Concepts and Terms* (New York, Westport, and London: Greenwood Press, 1986), p. 108.

⁴⁴ **Maurice Keen**, *Chivalry* (New Haven and London: Yale University Press, 1984), pp. 14, 178.

⁴⁵ «Ապաքեն եթէ կարի շատ յառաջ մատուցեալ ծերացայց, սակայն ելանելոց եմք ի մարմնոյ աստի, զի մտցուք առ Աստուած կենդանի, որ ոչ ևս ելանիցեմք ի նմանէ: ... եւ եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց սուրբ մահուամբ պատերազմիս, ընկալցուք խնդութեամբ սրտիւ. բայց միայն յարութիւնս քաջութեան վատութիւն մի՛ խառնեսցուք» (**Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 204-207,

այս հատվածի առաջին նախադասության աշխարհաբար թարգմ. իմն է՝ Ա. Ա.):

⁴⁶ «...եղբարք, մի՛ թուլութեամբ լքանիցիմք, այլ պնդութեամբ սրտիւ և հաստատուն հաւատովք կամակար յարձակեսցուք ի վերայ թշնամեացն, որ յարուցեալ զան ի վերայ մեր: Մեր յոյսն մեզ կրկին երեւի. եթէ մեռանիմք՝ կեամք, և եթէ մեռուցանեմք՝ մեզ նոյն կեանք առաջի կան» (**Եղիշէ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 222-223):

⁴⁷ «Բայց զկանայսն Շապիոյ թագաւորին Պարսից ոչ ումեք ինչ թոյլ տայր Մուշեղ զօրավարն Հայոց անարգել ինչ զնոսա ումեք. այլ ժանաւարս տայր նոցա կազմել ամենեցուն, և հանեալ արձակէր զամենեսեան զհետ առն նոցա Շապիոյ արքայի» (**Փալստոս Բուզանդ. Հայոց պատմություն**, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. Բ, էջ 290): Վերջերս հայոց սկզբնաղբյուրների նկատմամբ գերքննադատության հին և արատավոր սկզբունքներով գրված մի հոդվածում Դավիթի ճակատամարտի մասին Փալստոս Բուզանդի տեղեկությունն անիրավացիորեն անարժանահավատ է հայտարարվել ու որակվել «չափազանցություն», քանի որ, պարզվում է, «այլ հեղինակներ, նույնիսկ Ամմիանոսը, չեն հիշատակում Շապուհի կանանցը գերելու մասին: Փալստոս Բուզանդի մի շարք հաղորդումներ... չեն հաստատվում օտար աղբյուրներով» (**Վարդանյան Արգիշտի. Մուշեղ Մամիկոնյանի գործունեության գնահատման հարցի շուրջ.** – «Բանբեր Երևանի համալսարանի. Հայագիտություն», 2018, №1 (25), էջ 19): Այս կապակցությամբ, նախ, նկատենք, որ հին, միջնադարյան և նույնիսկ նոր պատմության հազարավոր փաստեր կարելի է անվավեր ճանաչել, եթե առաջնորդվելու լինենք մասին օտար աղբյուրներում չհիշատակվելու զավեշտական սկզբունքով: Շատ ու շատ ճակատամարտեր մեզ հայտնի են դրանց մասնակցած միայն մեկ կողմի աղբյուրներից, օրինակ՝ 6-րդ դարում Բյուզանդական կայսրության ու Սասանյան Իրանի բանակների միջև տեղի ունեցած տասնյակ խոշոր բախումները, որոնց մասին տեղեկությունները մեզ են հասել բացառապես բյուզանդացի մատենագիր Պրոկոպիոս Կեսարացու «Պատերազմ պարսիկների դեմ» պատմական երկից: Մեզանում

տարածում գտած վերոհիշյալ հնամաշ և օտարամուտ տեսակետը ժամանակին հանգամանալից քննադատել ենք՝ մասնավորապես փաստարկելով. «Հունա-հռոմեական պատմագրությունն ամենևին կոչված չէր շարադրելու Հայաստանի պատմությունը: Այդպիսի խնդիր հույն և հռոմեացի պատմիչների առջև դրված չէր: Ավելին՝ Հայաստանում օրօրի փոփոխվող պատերազմական մանրամասնությունների շարադրությունը հունա-հռոմեական պատմագրության մեջ նաև պարզապես անհնար էր, այն էլ՝ հին ժամանակներում: Եթե անգամ, օրինակի համար, վերցնենք մեր՝ կապի և տեղեկատվության զարգացած ժամանակաշրջանը, ապա դարձյալ տեղական դեպքերի հեռվում կատարված արձանագրությունը, այն էլ ոչ-լավատեղյակ օտարի կողմից, որպես կանոն, իր հավաստիությամբ զիջում է տեղում գրանցված ինֆորմացիային: Եթե որևէ մեկը փորձի գրել, օրինակ, 1988–1991 թթ. Ղարաբաղյան շարժման պատմությունը և օգտագործի այդ մասին եղած ոչ թե հայկական, այլ մոսկովյան կամ ամերիկյան մամուլի նյութերը, ապա արդյունքում կունենա իրականության շատ թերի, հաճախ էլ ուղղակի կեղծված պատկեր: Սա առավել ևս ճշմարիտ է, եթե օտար աղբյուրն ունենում է նաև աշխարհաքաղաքական ինչ-ինչ շահեր: Իսկ որ 4-5-րդ դարերում հռոմեական կայսրությունը և նրա շահերը սպասարկող հունա-հռոմեական պատմագրությունը կայսրապետական նկրտումներ ունեին Հայաստանի վերաբերյալ՝ անվիճելի է: *Հետևաբար, բացառությամբ որոշ դեպքերի, իրադարձությունների հավաստիությունը պետք է ճշտել հիմք ընդունելով ոչ թե օտար աղբյուրը, այլ տեղական աղբյուրը*, այն էլ ունենալով այնպիսի հարուստ ու արժեքավոր տեղեկություններ պարունակող տեղական աղբյուր, ինչպիսին Փավստոսի փառահեղ «Պատմություն Հայոցն» է: Ավանդաբար մեզանում առաջնորդվել են ճիշտ հակառակ մեթոդաբանական սկզբունքով՝ բոլոր դեպքերում նախապատվությունն անհիմն կերպով տալով օտար աղբյուրներին» (**Այվազյան Ա.** Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ, էջ 183):

⁴⁸ Տե՛ս նույն տեղում, Դ, Գլ. ԾԵ, էջ 268-269, 438 (ծնթ. 157):

- ⁴⁹ Հին հունական և հռոմեական զինվորականության, վիկինգների, հնդկացիների, չինացի ռազմիկ վանականների, սամուրայների և եվրոպացի ասպետների արժեհամակարգերն առանձին-առանձին վերլուծված են (հիմնականում բարոյագիտության տեսանկյունից) հետևյալ մենագրությունում՝ **French, S. E.** *The Code of the Warrior*, pp. 21-229:
- ⁵⁰ Վաղ Բյուզանդական կայսրությունում ռազմական առաքինությունների, այրականության հատկանիշների և նրանց գրական, մշակութային ու գաղափարական դրսևորումների քննությունը տե՛ս **Stewart, Michael Edward.** *The Soldier's Life: Martial Virtues and Manly Romanitas in the Early Byzantine Empire* (Leeds: Kismet Press, 2016):
- ⁵¹ Տե՛ս **Шарль Диль,** *Основные проблемы византийской истории* (Москва: Госизд. Иностранной Литературы, 1947). Перевод с французского и предисловие Б. Т. Горвянова, с. 85.
- ⁵² Տե՛ս **Փավստոս Բուզանդ.** *Հայոց պատմություն* (ԵՊՀ հրատ., 1987), Դ, Գլ. ԻԴ. Ե, Գլ. ԽԴ:
- ⁵³ «Եւ գտան ի ժամանակին անդ ընդ ձեռամբն զօրավարին Վասակայ արք գործոց իբրեւ վարժուն հազար, ընտիրք և պատերազմողք, որ միամիտք և միասիրտք էին միաբանութեան գործոցն պատերազմին, հասանել մարտնչել ի վերայ որդւոց և կանանց իւրեանց, և ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև ի մահ և ի վերայ աշխարհին գաւառացն բնակութեան, հասանել մարտնչել ի վերայ եկեղեցեացն իւրեանց, ի վերայ ուխտին պաշտամանն սրբոյ եկեղեցեաց իւրեանց, ի վերայ հաւատոց ուխտին անուան Աստուծոյ իւրեանց, փոխանակ բնակ տերանց իւրեանց Արշակունւոց» (**Փավստոս Բուզանդ.** *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. ԽԴ, էջ 222):
- ⁵⁴ Նույն տեղում, Դ, Գլ. Ի, էջ 206:

- ⁵⁵ «Ձի Արշակ և ամենայն զօրք իւր տաղտապէին երթալ զհեռի ճանապարհն, զի ամենայն ոք յանձնիւր տուն յիւրաքանչիւր տեղի զօրէն բարուց Հայաստան մարդկան անձկացեալ էին» (նույն տեղում):
- ⁵⁶ «Գուգագ» տերմինն աղբյուրներում հանդիպում է ընդամենը երկու անգամ և նշանակում է աշխարհագրից բաղկացած անկանոն զորքեր, որոնք հավաքագրվել են և՛ թիկունքային աշխատանքներ կատարելու, և՛ անհրաժեշտության դեպքում մարտական գործողություններին ուղղակիորեն մասնակցելու նպատակով (Փափստոս Բուզանդ. Հայոց պատմություն (ԵՊՀ հրատ., 1987), Գ, Գլ. Է, Ը, Էջ 30, 32, 422, ծնթ. 23. հմմտ. Фавстос Бузанд, История Армении, III.7, 8, с. 30, 32, 422 (прим. 23), The Epic Histories Attributed to Pawstos Buzand, p. 528. մանրամասն քննությունը տե՛ս Айвазян А. Армяно-персидская война 449–451 гг., с. 414-418):
- ⁵⁷ Խոսքը 330-338 թթ. գահակալած Խոսրով Գ Կոտակի մասին է:
- ⁵⁸ «Ածելին գնա առաջի մեծի թագաւորին Խոսրովու, և քարկոծ առնէին գնա քարամբք իբրև զայր, որ աշխարհի և գնդի եւ զօրաց տեառն իւրոյ դաւաճան լեալ իցէ» (նույն տեղում, Գ, Գլ. Ը): Այս դրվագի քննությունն ապացուցում է, որ Մատենիկ գնդի տակ Փափստոս Բուզանդը նկատի ունի արքայական 40-հազարանոց բանակի մայրաքաղաքային գունդը կամ «4-րդ ոստանը», որի պարտականություններից գլխավորը թագավորի պաշտպանությունն էր (տե՛ս Айвазян А. Армяно-персидская война 449–451 гг., с. 414-417): Այդ պատճառով էլ շեշտվում է Դատարենի՝ «իր տիրոջ գնդին» դավաճանելու հանգամանքը:
- ⁵⁹ **Broughton, B. A. Dictionary of Medieval Knighthood and Chivalry**, pp. 156-157.
- ⁶⁰ «Մեծաւ քաջութեամբ զամենայն վերս յանձն իմ առի».- որ *յանձն* իմ արտահայտությունը նկատի ունի մարմնի վրա ստացած վերքերը, երևում է նաև մեկ այլ դրվագում Փափստոսի կիրառած ձևից՝ «քանզի էր Վասակ *անձամբ* փոքրիկ» (Դ, Գլ. ԾԴ): Մալխասյանը թարգմա-

նել է բավական անորոշ՝ «ամեն վերք հանձն եմ առել քաջությամբ» (**Փավստոս Բուզանդ**, *Պատմություն հայոց*, 1968, էջ 293):

- ⁶¹ «Սկսաւ լալ եւ ասել՝ թէ ես ի մանկութենէ համակ սնայ ի պատերազմունս, եւ մեծաւ քաջութեամբ զամենայն վերս յանձն իմ առի. եւ ընդէ՛ր ոչ եհաս ինձ մեռանել ի պատերազմի, քան զօրէն անասնոյ մեռելոյ եղէ: Չի լաւ էր ինձ եթէ ի պատերազմի մեռեալ էի ի վերայ աշխարհի, զի մի՛ գնկեղեցիս եւ մի՛ զուխտ Աստուծոյ առ ոտն կոխիցեն: Սակայն եւ ի վերայ Արշակունեաց բնիկ տերանց աշխարհիս, եւ ի վերայ կանանց եւ ի վերայ որդւոց մերոց, եւ ի վերայ աստուածապաշտ մարդկանս եւ ի վերայ եղբայրութեան ընկերութեան եւ մտերիմ բարեկամութեանն զի՞ էր թէ հասեալ էր ինձ մեռանել. թէպէտ շատ զանձնս յանդուգն վարեցի, զվատթար մահս մահնացս եհաս ինձ մեռանել» (**Փավստոս Բուզանդ**, *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Ե, Գլ. ԽԴ, էջ 392):

- ⁶² Նույն տեղում, Ե, Գլ. ԼԵ, էջ 362:

- ⁶³ «...թէ ո՛րպէս ի վերայ ընկերի բարւոյ առաւել քան յանձին միշտ հոգալով զանձն եղեալ է այսմ տոհմի՝ զայն և ամենայն դուր, Հայք, զիտէք ի պատմութենէ գրոց և ի լսելոյ ձեր յաւագաց» (**Ղազար Փարպեցի**, *Պատմութիւն Հայոց*, ԵՊՀ հրատ., 1982, էջ 136): Բ. Ուլուբաբյանն թերի է ներկայացրել այս հատվածը՝ մասնավորապես, բաց թողնելով «միշտ» բառը և, ամենակարևորը, չնկատելով, որ «ի վերայ ընկերի բարւոյ առաւել քան յանձին միշտ հոգալով զանձն եղեալ է այսմ տոհմի» արտահայտության մեջ խոսվում է գինսկից ընկերներին, նրանց շահն ու պատիվն անգամ կյանքի գնով պաշտպանելու Մամիկոնյանների քաջահոգության մասին: Կարելի է համեմատել Փավստոսի վերոբերյալ մեջբերման հետ. «ի վերայ աշխարհին դնել զանձինս իւրեանց մինչև ի մահ» (**Փավստոս Բուզանդ**, *Պատմութիւն Հայոց*, Դ, Գլ. ԻԴ): Բ. Ուլուբաբյանն թարգմանել է այսպես. «թե ինչպէս ընկերոջ շահի համար առավել քան սեփական շահի մասին է հոգացել՝ իր անձնականը դրած այս տոհմը» (նույն տեղում, էջ 137): Նույն սխալը, հավանաբար, Բ. Ուլուբաբյանի թարգմանության

ազդեցությամբ, թույլ է տվել նաև Ռ. Թոմսոնը (տե՛ս **Elishe**. *History of Vardan and the Armenian War*. Transl. and comm. by Robert W. Thomson. Cambridge, Mass.: Harvard University Press, 1982, pp. 272-273, սույն գրքի 251-327 էջերում անգլերեն է թարգմանված Ղազար Փարպեցու Վարդանանց պատերազմին վերաբերող հատվածը):

- ⁶⁴ «Թեպետ ծերացեալ իսկ եմ, սակայն յօժար եմ հեղուլ զարիւն իմ [Հայաստանի ազատագրության համար]... զի մի ի մահնի մեռանիցիմ իբրև փափկասուն կողածին, ըստ ասելոյ մեծի և քաջ սպարապետին հայոց Մանուէլին: Ահա, ասէ, ի վերայ ազգիս Հայոց այսչափ վերս ընկալեալ է իմ, այժմ ցաւ է ինձ, զի մեռանիմ ի մահնի և ոչ ի պատերազմի» (տե՛ս **Գրիգորյան Վ. Ռ.** Հովսեփի Էմինի և Հովսեփի Արղուրյանի անտիպ նամակները (1791–1792 թթ.), էջ 192): Նույն տեղում Հովսեփի Էմինը դառնությամբ ավելացնում է. «Ուստի վա՛յ է ինձ, զի ոչ նմին մարմնով վիրաւորեցայ, այլև հոգւով և մտօք: Քանզի երևի ինձ զի քրտնաջան աշխատանք իմ երեսնամեայ ի դերև ելանին»:
- ⁶⁵ Փավստոսի հաղորդած մեծածավալ ռազմական տեղեկությունների զգալի մասի կետ առ կետ քննությունը տե՛ս **Այվազյան Ա.** *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 169-185, 193-198, 202-204. **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 364-371, 377-381, 391-395, 400-403, 412, 416 (ծնթ. 899), 419-424, 440-441 (ծնթ. 966), 447, 453-456, 461-463:
- ⁶⁶ Եղիշեի միջնադարյան վարքի համաձայն, նա «...էր զինուորեալ սրբոյն Վարդանայ և սպասաորէր նմա» (տե՛ս Պատմութիւն սրբոյն Եղիշեի վարդապետի. — Սոփերք հայկականք, հ. ԺԱ, Վենետիկ, 1854, էջ 39): Հանգամանալից քննությամբ պարզել ենք, որ «սպասավորները» հայոց արքայի 40-հազարանոց բանակի մայրաքաղաքային կորպուսի՝ «4-րդ ոստանի» (Մատենիկ գնդի) ոստանիկ-զինվորներն էին, թագավորի «պահապանները»՝ «պահապանս դրան արքունի» (Մովսես Խորենացի) կամ, հոմանիշորեն, «զպահապանս դրանն արքունի» («Զօրանամակ») (տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 380-396, 438-457): 4-րդ դարի սկզբից ի վեր

ոստանիկներից բաղկացած շուրջ 40-հազարանոց արքայական բանակը՝ մարդպետական երեք 10-հազարանոց կորպուսներն ու սպասավորների 6-10-հազարանոց կորպուսը, եղել են հայոց սպարապետների ընդհանուր ենթակայության տակ: Այդ ենթակայությունը շարունակվել է նաև 428 թ. Արշակունիների թագավորության կործանումից հետո ու նաև 449-451 թթ. հայ-պարսկական պատերազմի ժամանակ (տե՛ս նույն տեղում, էջ 377-418, 438-457): Փաստորեն, Եղիշեն եղել է հե՛նց մայրաքաղաքային կորպուսի ոստանիկ-զինվորականներից մեկը և միայն 451 թ. հետո է անցել ճգնաժամության՝ հեղինակելով իր «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին» հոչակավոր երկը (տե՛ս նույն տեղում, էջ 21-24. հմմտ. **Նալբանդյան Վ. Ս.** Եղիշեն. — Պատմա-բանասիրական հանդես, 1987, №2, էջ 210-211): Նմանապես, մինչև իր բուռն գիտակրթական գործունեությանն անցնելը Մեսրոպ Մաշտոցը ևս բարձրաստիճան և արհեստավարժ «սպասավոր» է եղել՝ «կացեալ յարքունական դիւանին, լինել *սպասաւոր* արքայատուր հրամանացն... ցանկալի եղեալ զինուորական արուեստիւն իւրոց զօրականացն» (տե՛ս *Կորիւն*. Վարք Ս. Մեսրոպ Մաշտոցի: Աշխ. Ա. Մաթևոսյանի: Երևան. «Հայաստան», 1994, էջ 87. հմմտ. **Айвазян А.** Армяно-персидская война 449—451 гг., с. 23, прим. 23): Ռուսերենով գրված վերջին մենագրությանս մեջ առարկայական բազմաթիվ օրինակներով ապացուցվում է Եղիշեի ռազմական գործին խորապես տիրապետելու հանգամանքը: Եղիշեագետներ Մկրտիչ Փորթուգալը և Վաչե Նալբանդյանը ժամանակին ևս կարծիք են հայտնել, որ Եղիշեն ռազմական խորը գիտելիքներ ու պատրաստություն է ունեցել և զինվորություն արել Հայոց բանակում (տե՛ս **Նալբանդյան Վ. Ս.** Եղիշեն, էջ 210-211. «Եղիշեի Վարդապետի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին և Քննադատություն Միքայել փաշայի Փորթուգալ», Վենետիկ, 1903, էջ 7):

⁶⁷ Եղիշեի «վասն հայրենի աստուածատուր օրինացն» խոսքը (**Եղիշեն, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 206-207) վերաբերում է ինչպես հայոց քրիստոնեական դավանությանը, այնպես էլ հին հայ իրավունքին՝ հոգևոր և աշխարհիկ օրենքներից բաղկացած ազգա-

լին իրավական ամբողջ համակարգին: Այդ տողի ռուսերեն և անգլերեն թարգմանությունները, իմաստային առումով տարբեր լինելով, երկուսն էլ թերի են՝ «унаследованные от отцов богоданные законы» և «our ancestral and divinely bestowed religion» (տե՛ս *Էշիշե*. О Вардане и войне армянской / Перевод с древнеарм. акад. И. А. Орбели, подготовка к изданию, предисловие и примечания К. Н. Юзбашяна. Ереван: изд. АН Арм. ССР, 1971, с. 97; **Elishe**. *History of Vardan and the Armenian War*, p. 154):

- ⁶⁸ Ի դեպ, 4–5-րդ դարերում քրիստոնեական խորհրդանիշներն ու պատկերազրույթունը (*իկոնոգրաֆիա*) աստիճանաբար դարձան նաև հռոմեական ու վաղ բյուզանդական ռազմական գաղափարախոսության բաղկացուցիչ մասը (տե՛ս **Stewart, M. E.** *The Soldier's Life*, pp. 183-188):
- ⁶⁹ «...քաջաց, կամակարությունք յարձակեալ ի վերայ մահուան, յառաջոյ տեսանելով զգորագլուխն յաղթութեան» (**Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 10-11):
- ⁷⁰ «խիզախելով եւ ի զէնս ընթանալով՝ զմահ քան զկեանս ընտրէին», «զմահ քան զկեանս ընտրեն» (*Նույն տեղում*, էջ 118-119):
- ⁷¹ «լաւ իցէ մարդոյ մահու չափ ճգնել՝ քան յայդպիսի օրինաց ուրանալ» (*Նույն տեղում*, էջ 42):
- ⁷² «Չեմք ինչ լաւ մեք քան զառաջինսն, որ յայսր վկայութեան վերայ եղին զինչս և զստացուածս և զմարմինս իւրեանց» (*Նույն տեղում*, էջ 80-81):
- ⁷³ «պատրաստ եմք ամենեքեան առ ամենայն մեքենայս հարուածոցն տանջանաց, զոր սպառնացար. ոչ միայն ի չարչարել, այլ և ի մեռանել» (*Նույն տեղում*, էջ 94-95):
- ⁷⁴ «Տեսանին զանձինս իւրեանց իբրև զմեռեալ դիակունս, և զիւրաքանչիւր գերեզմանս ինքեանք փորէին, և կեանք իւրեանց ի մահ համարեալ էին, և մահք իւրեանց անշուշտ կեանք: Բայց այս բարբառ

ստեպ ստեպ ընթանայր. «Քաջութեամբ միայն մեռցուք, զանուն և զոգիս և եթ ժառանգեսցուք» (*նույն տեղում*, էջ 136-137):

⁷⁵ «պատրաստ եմք ի սպանանել և ի մեռանել» (*նույն տեղում*, էջ 146-147):

⁷⁶ Ռ. Թոմսոնն սկզբունքորեն սխալ եզրակացության է հանգում՝ գրելով, թե իբր Եղիշեի երկում «մահը կյանքից գերադասելը կրկնվող թեմա է» (*Elishe. History of Vardan and the Armenian War*, p. 110, n. 4; 118, n. 1; 125, n. 10)՝ անտեսելով հայոց անձնագոհության դիմելու կենսահաստատ շարժառիթներն ու նպատակները:

⁷⁷ **Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 28-29:

⁷⁸ «աղաղակելին և ասելին գոհանալով արք եւ կանայք և ամենայն ռամիկ բազմութիւնն. «Պատրաստ եմք ի հալածանս և ի մահ և յամենայն նեղութիւնս և ի չարչարանս վասն սուրբ եկեղեցեաց, զոր աւանդեցին հարքն մեր առաջինք՝ զաւրութեամբ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որով վերստին ծնաք ի մի յոյս հաւատոցն մկրտութեամբ ի Քրիստոս Յիսուս. ըստ նմին նմանութեան կամիմք չարչարանօք և արեամբ նորոգել զանձինս» (**Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 134-135): Ե. Տեր-Մինասյանի աշխարհաբար փոխադրության շարահյուսությունը՝ «մեր Տեր Հիսուս Քրիստոսի գալստյան գորությամբ, որով նորից ծնվեցինք» հատվածում իմաստային շփոթ է առաջացնում: Ուստիև այն ուղղել ենք այսպես՝ «գորությամբ գալստյան մեր Տեր Հիսուս Քրիստոսի, որով նորից ծնվեցինք»:

⁷⁹ **Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 140-141: Իր աշխարհաբար փոխադրության մեջ Ե. Տեր-Մինասյանը Եղիշեի «արս պատերազմողս» բառերը բառացի է թարգմանել՝ որպես «պատերազմող տղամարդիկ», իսկ սա մթագնում է նրանց պրոֆեսիոնալ զորական լինելու հանգամանքը, որն էլ հենց նկատի ուներ Եղիշեն:

⁸⁰ «Որ փախչէր, վատանուն յաշխարհի երեւէր, ...իսկ որ քաջութեամբ յառաջ մատչէր, քաջ անուն ազգի ժառանգէր» (**Եղիշե**, *Վարդանի և*

Հայոց պատերազմի մասին, էջ 204): Ե. Տեր-Մինասյանի գրեթե բառացի աշխարհաբար փոխադրումը բաց է թողնում տոհմի («ազգի») մասին հիշատակումը՝ «Ով փախչում էր, վատանուն էր երևում աշխարհում, ...իսկ ով քաջությամբ առաջ էր ընկնում, քաջ անուն էր ժառանգում» (նույն տեղում, էջ 205):

⁸¹ «Իսկ արդ յերկուս եւ յերիս կռիւս Տէր ինքնին մեծաւ զարութեամբ աւգնեաց մեզ, որպէսզի զանուն քաջութեան ժառանգեցաք» (**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 206): Ե. Տեր-Մինասյանն աշխարհաբար փոխադրել է «երկու և երեք կռիվների մեջ» (նույն տեղում, էջ 207), սակայն այս դեպքում ճշգրիտ իմաստը «երկու-երեք ճակատամարտն» է:

⁸² «Չոր և ի ձեռն առեալ զբաջ նկարագիրն Մակարայեցոց՝ ընթեռնոյր ի լսելիս ամենեցուն... Չի թէպէտ եւ ի նմին կատարեցան մահուամբ, սակայն անուն քաջութեան եկաց մինչև ցայսօր ժամանակի» (**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 212): Վերջին բառերը Ե. Տեր-Մինասյանը թարգմանել է այսպես. «բայց նրանց *քաջ անունն անմոռաց մնաց մինչև այսօր*» (էջ 213):

⁸³ Խօսւէր և ընդ մեծամեծսն արքունի հրամանաւ և ասէր. «Յիշեցէ՛ք այր իւրաքանչիւր զպատուէր մեծ թագաւորին, և դի՛ք առաջի զանուն քաջութեան. ընտրեցէ՛ք զմահ քան զկեանս վատութեամբ» (**Եղիշե, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 232-233):

⁸⁴ **Հերոդոտոս**. Պատմություն ինը գրքից, էջ 59. հմմտ. **Геродот**. История в девяти книгах, с. 55:

⁸⁵ Մեր հետազոտության արդյունքների համաձայն, Փափստոս Բուզանդն իր «Հայոց պատմությունը» գրել է 406–428 թթ. միջոցին, այն է՝ հայկական գրերի գյուտից հետո ու մինչև Մեծ Հայքի թագավորության անկումը (տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 394, 411-412), ի դեպ՝ ավելի վաղ, քան իրենց պատմական երկերն են ավարտել Կորյունը, Եղիշեն, Մովսես Խորենացին ու Ղազար Փարպեցին:

⁸⁶ «Երկիւղ՝ թերահաւատութեան է նշանակ. զթերահաւատութիւն մեր ի մէնջ վաղ մերժեցաք, ընդ նմին և երկիւղն փախիցէ ի մտաց եւ ի խորհրդոց մերոց» (**Եղիշէ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 210-211՝ «վաղ» բառը դուրս է մնացել այս հրատարակության գրաբար տեքստից. հմմտ. քննական բնագրի հետ՝ Եղիշէ. «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին»: Ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեագրաց աշխատութեամբ Ե. Տէր Մինասեան, Երևան. ԳԱ հրատ., 1957, էջ 104):

⁸⁷ «Մեծ է սէրն Աստուծոյ քան զամենայն մեծութիւն երկրաւոր. եւ այնպէս աներկեւոս առնէ զմարդիկ՝ իբրեւ զանմարմին զօրս հրեշտակաց, որպէս անդստին ի սկզբանէ է տեսանել զբազումս բազում անգամ ի բազում տեղիս: Մարդիկ, որ սիրովն Աստուծոյ իբրեւ զինու վառեալք էին, ոչ ինչ խնայեցին զանգիտելով իբրեւ զանարի՝ զոլով վատասիրտք, կամ ի մահ անձանց, կամ յափշտակութիւն ընչից, կամ ի խողխողումն սիրելեաց, կամ ի գերութիւն ընտանեաց, ելանել ի հայրենի երկրէն և անկանել ի ստրկութիւն յօտարութեան. առ ոչինչ համարեցան զայս ամենայն անցս չարչարանացն...: Եւ զուրացութիւնն մեռելութիւն վարկանէին, և զմահ վասն Աստուծոյ՝ անանց կենդանութիւն, և ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց...» (**Եղիշէ, Վարդանի և Հայոց պատերազմի մասին**, էջ 198-201): «Ծառայել յերկրի՝ ազատութիւն կենաց իւրեանց» հատվածը Ե. Տէր-Մինասյանն ու, հավանաբար, նրան հետևած Հ. Օրբելին և Ռ. Թոմսոնը թարգմանել են բառացի. «երկրիս վրա ծառայելը՝ իրենց կյանքի ազատություն», «и бытие в рабстве на земле — за свободу своей жизни», «to serve on earth as freedom for their lives» (նույն տեղում, էջ 201. հմմտ. **Եղիշէ**. О Вардане и войне армянской. Перевод с древнеарм. акад. И. А. Орбели, подг. к изд., пред. и прим. К. Н. Юзбашьяна. Ереван: Изд-во АН Арм. ССР, 1971, с. 94. **Elishe**. History of Vardan and the Armenian War, p. 150): Այսպիսի ընթերցումը, մեր կարծիքով, մեխանիկական է և ոչ ստույգ: Իրականում Եղիշեն այս հատվածում իրարահաջորդաբար ներկայացնում է Վարդանանց պատերազմի հետևանքով հայոց կրած տառապանքներն ու

հերոսությունը, իսկ այս դրվագում խոսում է այն մասին, որ Սասանյան տերության դեմ զինված պայքարի դուրս եկած Վարդանանք «ազատ կյանքը հայրենիքին ծառայելու մեջ» էին տեսնում: Հետևաբար, «երկիր» բառն այստեղ ավելի շատ բնորոշում է Հայոց երկիրը, այլ ոչ թե ընդհանրապես ամբողջ աշխարհը: Չի բացառվում, որ Եղիշեն այս ձևակերպման մեջ դիտավորյալ երկիմաստություն մտցրած լինի՝ «երկիր» բառով բնորոշելով և՛ աշխարհը, և՛ Հայաստանը, սակայն իմաստարկվանդակային առաջնահերթությունն ամեն դեպքում տալով վերջինիս: Առհասարակ, հին հայերեն տերմինաբանության չմեկնաբանված պահպանումն ու բառացի վերարտադրումը սխալ մեթոդաբանություն է, որը, ցավոք, չափից շատ է գործածվում մեր սկզբնաղբյուրների աշխարհաբար թարգմանություններում ու լուրջ թյուրիմացությունների տեղիք տալիս: Մի շարք նման օրինակների քննադատությունը տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 92–93, 178 (прим. 385), 393 (прим. 839), 459–460:

⁸⁸ «յերկիւղէ որ ինչ սրոյ... ոչ որ երբեք զանգիտեալ յազգիս մերում, և ոչ երբեք» (**Ղազար Փարպեցի**, Պատմութիւն Հայոց, էջ 136-137)

⁸⁹ Кодекс Бусидо. Хагакуре. Сокрытое в листве, с. 398.

⁹⁰ *Հայ ժողովրդի պատմություն*, Հ. I (Երևան, ԳԱ հրատ., 1971), էջ 200–201:

⁹¹ *Հայ ժողովրդի պատմության քրեատմատիկա*, Հ. I (Երևանի համալսարանի հրատ., 1981), էջ 7-13:

⁹² **Пиотровский Б. Б.** *История и культура Урарту*. Ереван, Изд. Академии Наук Арм. ССР, 1944, с. 114.

⁹³ *Հայ ժողովրդի պատմություն*, Հ. Ա, էջ 351:

⁹⁴ Տե՛ս **Р. Эрнест Дюпюи и Тревор Н. Дюпюи.** *Всемирная история войн*. Книга первая; 3500 год до Р. Х.– 1400 год до Р. Х., Санкт-Петербург, 1997, с. 51-52: Մեկ ուրիշ հրատարակության մեջ նույն արշավանքին մասնակցած ձիավորների թիվը, ըստ արձանագրությունը վերծանողների, թեև հաստատ մի քանի հազար է, բայց թե

ճշգրիտ որքան՝ անհայտ է, որովհետև «հազարավորների քանակը տուժած է ամբողջովին» (տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հ. I, էջ 348, ծնթ. 30):

⁹⁵ Հայ ժողովրդի պատմություն, Հ. I, էջ 350:

⁹⁶ Նույն տեղում:

⁹⁷ **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 105-107.

⁹⁸ Նույն տեղում, էջ 91-100:

⁹⁹ Նույն տեղում, էջ 417:

¹⁰⁰ **Дюпюи Р. Э. и Дюпюи Т. Н.** Всемирная история войн, Кн. 1, с. 50-53:

¹⁰¹ Հայ ժողովրդի պատմություն, Հ. I, էջ 348-351:

¹⁰² Հայ ժողովրդի պատմություն, Հ. III, էջ 276. հմմտ. **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 363-364:

¹⁰³ Մալարը կամ զանապետը (զումապետ) գնդի կամ զումարտակի հրամանատարն էր, *համարգր*՝ նրանց տեղակալը կամ օգնականը, սեպուհն ու ավագ սեպուհը՝ միջին օղակի հրամանատարական տիտղոս էր (տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 155 (прим. 338), 193 (прим. 411), 214, 328 (прим. 699), 455-456, 464, 482):

¹⁰⁴ Հայ ժողովրդի պատմություն. քրեատոմատիա: Հ. 1, էջ 139:

¹⁰⁵ Տե՛ս **Rufus, Quintus Curtius.** *Historiae Alexandri Magni*, Book III, Chapter 2, par. 6; հմմտ. **Shahinian L. P.**, "On the 'Vahe' Mentioned in Movses Khorenatsi's History," *Armenian Review*, Summer 1983, pp. 54-57. հմմտ. Հայ ժողովրդի պատմություն, Հ. I, էջ 494:

¹⁰⁶ Տե՛ս **Մ. Ս. Օհանյան**, Հայաստանը հին աշխարհի գահակարգում.՝ Հայկական բանակ, 1999, No. 4 (22). հղված է **Ксенофонт.** *Κυροπедия*, III, 1 (34, 35).

¹⁰⁷ **Մովսես Խորենացի,** Պատմություն Հայոց, Գիրք Ա, Գլ. ԺԳ:

- ¹⁰⁸ **Плутарх.** *Сравнительные жизнеописания.* В трех томах. Т. 2, Москва, Изд. АН СССР, 1963, с. 194.
- ¹⁰⁹ **Մովսէս Խորենացի,** *Պատմութիւն Հայոց*, Գիրք Ա, Գլ. ԺԴ:
- ¹¹⁰ *Հայ ժողովրդի պատմություն*, Հ. I, էջ 686:
- ¹¹¹ Մանրամասն վերլուծությունը տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 383-413, 438-457: Բացառություն է Տակիտոսի այն հաղորդումը, ըստ որի 59 թ. հռոմեական զորքի վրա հարձակում կատարած «մարդերը»՝ «տարոնցիներին» և «Լեգերդա» բերդում ամրացած «քաջ երիտասարդությանը» զուգահեռ, պարզորեն ներկայացված են որպես հայեր (նույն տեղում, էջ 445-446, 449-451, 456. տե՛ս *Тацит, Корнелий.* *Анналы.* XIV.23–25 / Соч. в двух томах. Том I. «Анналы. Малые произведения» // Пер. и комм. А. С. Бобовича. Общая ред. издания — С. Л. Утченко. Москва: «Ладомир», 1993):
- ¹¹² **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 367-376.
- ¹¹³ Նույն տեղում, էջ 686:
- ¹¹⁴ «Ազաթանգեղայ Պատմութիւն Հայոց»: Աշխ.՝ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց (Թիֆլիս, 1909) և զուգահեռ աշխարհարար թարգմ. ու ծանոթ.՝ Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 464 (§832): **Փավստոս Բուզանդ.** *Հայոց պատմություն*, ԵՊՀ հրատ., 1987, Դ, Գլ. ԻԵ, էջ 226: Այս մասին տե՛ս նաև **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 98-99, 409-410:
- ¹¹⁵ 5-րդ դարի կեսերին Մարգպանական Հայաստանի բնակչությունը 2 միլիոնից մի փոքր ավելի էր, համապատասխանաբար, ռազմունակ հասակի՝ 16-60 տարեկան տղամարդկանց թվաքանակը, կոպիտ հաշվարկով, պետք է կազմեր մոտ 600-700 հազար: Մեծ Հայքի տարածքում բնակվում էր շուրջ 3 միլիոն հայ, իսկ ամբողջ հայ էթնոսի թիվը, հաշվի առնելով Փոքր Հայքի, Ադիարենեի և Հյուսիսային Միջագետքի բնակչությունը, շուրջ 3.5 միլիոն մարդ էր: Ըստ այդմ, հայ

ռազմունակ հասակի տղամարդկանց թվաքանակն, ընդհանուր առմամբ, կազմում էր ավելի քան 1 միլիոն (տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 317-318)։

- ¹¹⁶ Այդ մասին տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 98-99։
- ¹¹⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, Հ. I, էջ 686-688. Հ. II (Երևան, ԳԱ հրատ., 1976), էջ 146. Հ. III (Երևան, ԳԱ հրատ., 1984), էջ 686-689։
- ¹¹⁸ Հռոմեական բանակի թվաքանակի մասին ավելի մանրամասն տե՛ս **Contamine, Philippe.** *War in the Middle Ages.* Translated by Michael Jones (Oxford UK և Cambridge USA: Blackwell, 1998), pp. 7-10; cf. **Connolly, Peter.** *Greece and Rome at War* (London-Hong Kong: Macdonald, 1981), p. 255.
- ¹¹⁹ Տե՛ս **Zbigniew Brzezinski,** *The Grand Chessboard: American Primacy and Its Geostrategic Imperatives* (New York: BasicBooks, 1997), p. 10.
- ¹²⁰ Տե՛ս **Ս. Բոռնազյան,** Հայ ասպետությունը Կիլիկյան հայկական պետությունում XII-XIV դարերում, էջ 87, 93. հմմտ. «*Միջառաջ պատմության տարեգիրք*», Վենետիկ-Ս. Ղազար, 1956, էջ 231. *Recueil des historiens des croisades. Documents arméniens.* T. II, Paris, 1906, p. 170-171։
- ¹²¹ **Նազարյան Խաչիկ, Վալեսյան Լեմվել.** Հայաստանի աշխարհագրություն։ Գիրք առաջին (Հանրակրթական դպրոցի 7-րդ դասարանի դասագիրք)։ Երևան, «Լույս», 1999, էջ 88-89։ **Микаелян Г. Г.** *История киликийского армянского государства,* Е., Изд. АН СССР, 1952, сс. 17-18; Հայ ժողովրդի պատմություն, Հ. III, էջ 672-673։
- ¹²² Կարելի է համեմատություն անցկացնել նաև մեր օրերի հետ։ Պաշտոնական տվյալների համաձայն՝ 1998 թ. դրությամբ Հայաստանի Հանրապետության բանակի կազմում ծառայում էին 53.400 զինվորական, իսկ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում, արտա-

սահմանյան ոչ պաշտոնական հավաստի աղբյուրների գնահատմամբ՝ կարևոր ևս 20–25-հազարանոց հայկական զինուժ.- տե՛ս *The Military Balance*, 1998/99 (London: Oxford University Press, 1998), pp. 74, 76: Այսպիսով՝ 1990-ականների վերջին Հայաստանն (այսինքն՝ ՀՀ և ԼՂՀ միասին վերցրած) ուներ շուրջ 70.000-75.000-անոց բանակ, որը կազմում էր նրա 2.5-3 միլիոնանոց ազգաբնակչության մոտ 2.5 տոկոսը: Չինվորական տարրի տոկոսային այսպիսի հարաբերակցությունը բնակչության ընդհանուր թվի հետ ավելի բարձր էր, քան Ռուսաստանում, Թուրքիայում կամ Եվրոպայի որևէ երկրում, ինչը Հայաստանի ներկա աշխարհաքաղաքական միջավայրում լիովին արդարացված էր: 2020 թ. աշնանային պատերազմից հետո Հայկական բանակի թվաքանակը նվազել է, բայց թե որքան՝ դեռևս հայտնի չէ:

¹²³ **Փավստոս Բուզանդ.** *Հայոց պատմություն* (ԵՊՀ հրատ., 1987), Գ, Գլ. Ի, էջ 82:

¹²⁴ **Ղազար Փարպեցի,** Պատմություն Հայոց, Գ, Գլ. ՀԸ, էջ 350:

¹²⁵ «Կանոնք Դունայ ժողովոյն»: Վաղարշապատ, 1905, էջ 23: Հայոց ոչ կանոնավոր, աշխարհագրային ուժերի հարցի քննությունը և դրանց վերաբերյալ Հ. Մանանդյանի սխալ մեկնաբանության հերքումը տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., մասնավորապես, էջ 417-418 և ծնթ. 903:

¹²⁶ **Cleary, T. F.** *The Japanese Art of War*. Boston, MA: Shambala Press, 1991, p. 2.

¹²⁷ **French, Shannon E.** *The Code of the Warrior*, p. 227.

¹²⁸ Ահա այդ հատվածն ամբողջությամբ.

«Նախկինում պալատի պահպանության համար առանձնացվել էին երեք հազար հինգ հարյուրից ոչ պակաս ստրատիոտներ (զինվորներ), որոնց սխտարիոս էին անվանում: Ի սկզբանե անտի պետությունը սրանց վճարում էր շատ ավելի բարձր ռոճիկ, քան մնացած բոլոր [ստրատիոտներին]: Անցյալում կայսրերը սրանց ընտրության

ժամանակ նկատի էին առնում մարդկանց արժանիքները և հայերին էին տալիս նախապատվությունը: Բայց սկսած Չենոն կայսրից (474-491), [ստրատիոտ] անունը սկսեց տրվել վախկոտ և պատերազմի մասին բոլորովին գաղափար չունեցող մարդկանց...» (տե՛ս **Բյուզանդական աղբյուրներ**, Հտ. Ա, *Պրոկոպիոս Կեսարացի*: Թարգմ. քննադրից, առաջ. և ծնթ.՝ Հրաչ Բարթիկյանի: Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 296. հմմտ. *Պրոկոպիոս Կեսարացի, Գաղտնի պատմություն*: Թարգմ. քննադրից, առաջ. և ծնթ.՝ Հրաչ Բարթիկյանի, Երևանի համալսարանի հրատ., 1987, էջ 114):

¹²⁹ Տե՛ս **Розен В. И.** *Император Василий Болгаробойца*. Санкт-Петербург: 1883, с. 319; ср. **Каждан А. П.** *Армяне в составе господствующего класса Византийской империи в 11-12 вв.* (Ереван: Изд. АН Арм. ССР, 1975), с. 139 (նույն էջում Կաթողանը նշում է, որ մարտական բարձր հատկանիշներով առանձնանում էր նաև Ռոման Դ Դիոգենես կայսեր (1068-1071) բանակում ընդգրկված հայկական հետևակը):

¹³⁰ **Шарль Диль.** *Основные проблемы византийской истории*, с. 141.

¹³¹ **Charanis, Peter.** *The Armenians in the Byzantine Empire* (Lisboa: Livraria Bertrand, 1963), pp. 16-17. Բյուզանդիայի Արևելյան բանակի կորիզը հինգ դար շարունակ հայկական և կապադովկիական զորամասերից բաղկացած լինելու մասին դեռևս 1885 թ. գրում էր հետազայում երևելի ռազմական պատմաբան ու արևելագետ դարձած Չարլզ Օմանը (**Oman, C.W.C.** *The Art of War in the Middle Ages*. Revised and edited by John Beeler, Ithaca & London: Cornell University Press, 1953, p. 55):

¹³² 7–9-րդ դարերի բյուզանդական բանակի կազմում ընդգրկված հայկական զորամասերի, նշանավոր հայ զորահրամանատարների և կայսրերի մասին համառոտաբար տե՛ս **Բյուզանդական աղբյուրներ**, Հ. Բ, Կոնստանդին Ծիրանաձին: Թարգմ. քննադրից, առաջ. և ծնթ.՝ Հրաչ Բարթիկյանի (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970), էջ V-X.

հմմտ. **Հովհաննիսյան Աշոտ**. *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության*. Գիրք Ա (Երևան, ԳԱ հրատ., 1957), էջ 39-40:

- ¹³³ Տե՛ս **Jenkins, R. J. H.** *The Byzantine Empire on the Eve of the Crusades* (London: The Historical Association, 1953), p. 11: Ռ. Ջենկինզի այս տողերը ճշգրտորեն թարգմանել է Հ. Բարթիկյանը (տե՛ս **Բյուզանդական աղբյուրներ**, Հ. Բ, Կոնստանդին Ծիրանածին, էջ X): Այսուամենայնիվ, այստեղ պետք է մեկ կարևոր վերապահում անել. Բյուզանդական կայսրությունում էթնիկ հայկական վերնախավի մի զգալի մասը կրոնական և մշակութային իմաստով գրեթե ամբողջովին հելլենացվել էր և կտրվել ազգային արմատներից: Նրանցից շատերը կայսերական շահերը վեր էին դասում Հայաստանի շահերից: Ընդհանուր առմամբ, այդ ուժացած ենթախումբը միայն անվանականորեն ու շահադիտորեն էր պահպանում կապը իր նախնյաց ազգի հետ՝ նպատակ ունենալով նախևառաջ աջակցություն ստանալ սեփական կարիերայի առաջխաղացման համար կայսրության իշխող շրջանակներում գործող հզոր և ազդեցիկ հայրենակիցներից: Ոմանք էլ ցանկանում էին ճանաչվել որպես ազնվական բարձր ծագում ունեցող անձինք՝ հայկական իշխանական կամ նույնիսկ արքայական (Արշակունիների) տոհմերի շառավիղներ, ինչպես, օրինակ, Բարսեղ Ա կայսրը (867-886), ով կեղծաբար ինքն իրեն Արշակունի հռչակեց: Բնականաբար, նույնը չի կարելի ասել հատկապես հոծ զանգվածներով Հայաստանին կից բյուզանդական նահանգներում և Կիլիկիայում վերաբնակված հայերի, ինչպես նաև Հայաստանից Կ. Պոլիս նորերս տեղափոխված բարձրաստիճան որոշ գործիչների մասին: Վերջիններից ոմանք, ինչպես, օրինակ, Արտավան և Արշակ Արշակունիները, անգամ մահափորձ էին կազմակերպում Հուստինիանոս կայսեր դեմ՝ նրանից վրեժ լուծելու համար Հայաստանի բյուզանդական շրջաններին պատճառված մեծ վնասների համար (տե՛ս **Ayvazyan A.** *The Armenian Military in the Byzantine Empire*, pp. 32-33):

- ¹³⁴ **Բյուզանդական աղբյուրներ**, Հտ. Ե, *Թեոփանեսի շարունակող*: Թարգմ. բնագրից, առաջ. և ծնթ.՝ Հրաչ Բարթիկյանի (Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1990), էջ 65:
- ¹³⁵ Նույն տեղում, էջ 313, ծնթ. 56: Այս դարձվածքը վերցված է պատմական մի երկից, որը գրվել է Կոստանդին Ծիրանածին կայսեր (913-959) կարգադրությամբ (նույն տեղում, էջ VII):
- ¹³⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս **Айвазян А. М.** Геополитическая детерминанта имперских предрассудков и византийский военный прагматизм, с. 25-37: **Ayvazyan Armen.** *The Armenian Military in the Byzantine Empire: Conflict and Alliance under Justinian and Maurice*, pp. 112-120:
- ¹³⁷ Տե՛ս «*De Velitatione Bellica Nicephori Augusti*», in **Dennis G. T., ed. and tr.**, *Three Byzantine Military Treatises*. Washington, D.C.: Dumbarton Oaks, 1985, p. 153:
- ¹³⁸ **Luttwak, Edward N.** *The Grand Strategy of the Byzantine Empire* (Cambridge, Mass.: Harvard University Press, 2009, pp. 341-342.
- ¹³⁹ Տե՛ս **Walter E. Kaegi**, *Byzantium and the Early Islamic Conquests*. Cambridge University Press, 1992, pp. 12, 181-204, etc.: Ի տարբերություն վերոհիշյալ ու բազմաթիվ այլ պատմաբանների, բրիտանացի պրոֆեսոր Ջոն Հալդոնը՝ բյուզանդական բանակի և հասարակության փոխհարաբերություններին նվիրված իր մենագրության մեջ, անտեսելով հունարեն աղբյուրներում հայկական զորամասերի բարձր մարտունակության մասին եղած բազմաթիվ ուղղակի վկայությունները և հենվելով, ըստ ամենայնի, «*De Velitatione*» տրակտատի վերոբերյալ միտումնավոր դատողության վրա, անում է բացահայտորեն անհիմն, ահա այսպիսի ընդհանրացնող եզրակացություն. «հայ զինվորները տխրահամբավ էին (համեմայն դեպս՝ հունարեն աղբյուրների համաձայն), իրենց քմահաճ վարքագծով և անկարգապահությամբ» [Armenian soldiers, notorious (according to the Greek sources at least) for their wayward conduct and indiscipline].-

տե՛ս **John Haldon**, *Warfare, State and Society in the Byzantine World, 565-1204* (London: UCL Press, 1999), p. 236: Նկատենք, որ Հալդոնի ծավալուն գրքում լուրջան է մատնված բյուզանդական բանակի բազմաթիվ զորահրամանատարների, ներառյալ գլխավոր զորահրամանատարների հայ լինելու հանգամանքը, ավելին՝ շրջանցված է հարևան Բագրատունյաց Հայաստանի, ապա և Կիլիկյան Հայաստանի թագավորությունների գոյությունն անգամ (բացառությամբ մեկ-երկու հպանցիկ և կողմնակի հիշատակության. էջ 29-ում նշված է «Հայոց Աշոտ թագավորը», էջ 227-ում՝ «կիլիկեցի հայերի» 1166 թ. տարած ռազմական մի հաղթանակը):

¹⁴⁰ Մալխասյանը թարգմանել է *Հայկական գեղի*, որ սխալ է. այդ մասին տե՛ս **Այվազյան Արմեն**. *Հայաստանի պատմության լուսաբանումը ամերիկյան պատմագրության մեջ*, էջ 202-203: Հայոց բանակի և նրա մարտիկների հատուկ անվանումների տերմինաբանական քննությունը տե՛ս **Айвазян А.** Армяно-персидская война 449–451 гг., с. 360-464:

¹⁴¹ **Փավստոս Բուզանդ**, *Պատմություն հայոց*, թարգմ. Ստ. Մալխասյանցի (1968), էջ 244-245: Այս գնահատականն ակամա հիշեցնում է Կովկասում թուրքական ուժերի գլխավոր հրամանատար Վեհիբ փաշայի՝ 1918 թ. մայիսին Ղարաբաղիսայի համար մղված ճակատամարտի կապակցությամբ ասածը. «Դա բացառիկ ճակատամարտ էր այս պատերազմի պատմության մեջ: Ղարաբաղիսայի տակ հայերը ցույց տվեցին, որ իրենք կարող են աշխարհի լավագույն զինվորները լինել» (տե՛ս **Ե. Ղ. Սարգսյան**, *Թուրքիան և նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918)*: Երևան, «Հայաստան», 1964, էջ 455. հմմտ. *Турция в годы первой мировой войны*. Москва, 1966, с. 188. **И. Х. Баграмян**, *Мои воспоминания*. Ереван: Изд-во «Айастан», 1979, с. 88):

¹⁴² **Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 89: Եղիշեի այս հաղորդումը նկատել և ըստ արժանվույն գնահատել են նաև դանիացի ճանաչված արևելագետ Զրիպթենսենն ու պարսիկ պատմաբան

Ծահրազին (տե՛ս **A. Christensen**, *L'Iran sous les Sassanides*, 2nd ed. Copenhagen, 1944, p. 210; **A. Sh. Shahbazi**, “Army: Pre-Islamic Iran”, *Encyclopaedia Iranica*, Vol. II, Edited by Ehsan Yarshater. London and New York: Routledge. Kegan Paul, 1987, p. 497):

¹⁴³ **Եղիշե**, *Վարդանի և Հայոց պատերազմի մասին*, էջ 232-233: Հայ մատենագրության պարունակած մեծաթիվ և բազմազան հավաստի նյութերը, որոնք վերաբերում են այս հողվածում արծարծված հարցերին, դեռևս սպասում են իրենց հետազոտողներին: Օրինակ, հայ ռազմիկի արժեհամակարգը, թերևս, ամենացայտուն կերպով արտացոլվել է *Սասնա ծռեր* ժողովրդական էպոսում, որը կարոտ է այս տեսանկյունից կատարվելիք հանգամանալից վերլուծության: Այդ ուղղությամբ որոշակի հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ ուշագրավ հողվածում կատարված դիտարկումները, թեև դրանք հաճախ մակերեսայնորեն ու թերի են արտացոլում հին և միջնադարյան Հայաստանի ռազմական պատմությունը (**Gulbekian, Edward**. “The Attitude to War in ‘The Epic of Sasoun’,” *Folklore*, 1984, №1 (Vol. 95), pp. 105-112: at 110):

¹⁴⁴ Պատվո վարքականոններ ունեն, օրինակ, Ֆրանսիական արտասահմանյան լեգեոնը, ԱՄՆ բանակի ռեյնջերները, ԱՄՆ Ռազմական ակադեմիան (Վեսթ Փոյնթ), Վիրջինիայի ռազմական ինստիտուտը, ինչպես նաև ԱՄՆ զինված ուժերի բոլոր մյուս ռազմական ակադեմիաները: Առավել խստապահանջ են հատկապես Վեսթ Փոյնթի ու Ռազմաօդային ուժերի ակադեմիայի վարքականոնները:

¹⁴⁵ Մասամբ սույն ուսումնասիրության առաջին հրատարակության և հետագա առարկայական առաջարկություններին որոշակի արդյունք կարելի է համարել 2012 թ. սեպտեմբերի 20-ի ՀՀ պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հետևյալ (№992) հրամանը՝ «Հայաստանի Հանրապետության Չինված ուժերի սպայի պատվի կանոնները հաստատելու մասին», որի բովանդակությունը հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ:

**«ԿԱՆՈՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՍՊԱՅԻ ՊԱՏՎԻ**

1. Սույնով սահմանվում են «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված Հայաստանի Հանրապետության զինված ուժերի սպայի (այսուհետ՝ սպա) պատվի կանոնները:

2. Սպայի պատվի կանոնները սպայի վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների առանձնահատկությունները կարգավորող նորմեր են, որոնց խախտումը համարվում է կարգապահական խախտում:

3. Սպան պարտավոր է պահպանել սպայի պատվի հետևյալ կանոնները.

- 1) հավատարիմ մնալ զինվորական երդմանը և խստիվ ու ճշգրիտ կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, օրենքների, այլ իրավական ակտերի պահանջները.
- 2) հարգել Հայաստանի Հանրապետության պետական և զինվորական խորհրդանիշները, պաշտոնական լեզուն.
- 3) հավատարիմ մնալ ազգային ավանդույթներին և սովորույթներին, հարգել այլ ժողովուրդների ու ազգերի էթնիկական առանձնահատկությունները, ավանդույթները, սովորույթները.
- 4) դրսևորել դժվարությունները հաղթահարելու վճռականություն, անձնական օրինակով ծառայակիցներին քաջալերելու հաստատականություն, իսկ պատերազմի կամ մարտական գործողությունների ժամանակ՝ ցուցաբերել խիզախություն և համարձակություն.
- 5) բարձր պահել սպայի զինվորական կոչումը և ցուցաբերել հարգալից վերաբերմունք ու պահանջել նման վերաբերմունք զինվորական համազգեստի նկատմամբ.
- 6) արժևորել սեփական խոսքը, խուսափել անհարկի խոստումներից, պահպանել տված խոստումը՝ միաժամանակ գիտակցելով տրված խոստման հնարավոր բացասական հետևանքները.
- 7) գերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս հասցնել զինվորական ծառայության շահերին.

- 8) հարգել պետի (հրամանատարի) և ենթակայի (ստորադասի) պատիվն ու արժանապատվությունը.
- 9) դեկավարվել մարդասիրության, արդարության և ազնվության սկզբունքներով.
- 10) լինել անաչառ, անկողմնակալ, զուսպ, քաղաքավարի և օրինակելի.
- 11) կարևորել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը.
- 12) իր վարքով նպաստել հասարակության այն համոզմունքի ձևավորմանը և պահպանմանը, որ զինվորական ծառայության համակարգը հիմնված է ազնվության, արդարության ու Հայրենիքի պաշտպանության գաղափարի վրա»:

¹⁴⁶ **French, Shannon E.** “When Teaching the Ethics of War Is Not Academic,” *The Chronicle of Higher Education*, March 21, 2003.

¹⁴⁷ Զիգֆրիդը «Նիբելունգների երգը» գերմանական ազգային էպոսի (գրի է առնվել մոտ. 1200 թ.), ինչպես նաև սկանդինավյան դիցաբանության գլխավոր հերոսներից մեկն է:

¹⁴⁸ Ասպետ Գավեյնն արթության առասպելաշարի կարևոր դեմքերից է, Արթուր արքայի զարմիկն ու Կլոր սեղանի ասպետներից մեկը:

¹⁴⁹ **French, S. E.** *The Code of the Warrior*, pp. 231-232.

ԱՐՄԵՆ ԱՅՎԱԶՅԱՆ
ՀԱՅ ԶԻՆՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՎՈ ՎԱՐՔԱԿԱՆՈՆԸ
(4–5-րդ դարեր)



MOUSSALER

Moussaler Printing House LLC
Raffu str. 1, Musaler, 1140, Armavir marz, Armenia
Tel.: +37498 985676 / moussaler@gmail.com
www.moussaler.com

Տպագրության հովանավոր՝ «Մուսալեռ տպագրատուն»
Էջաղրումը և ձևավորումը՝ Անահիտ Խանգաղյանի
Տառատեսակները և կազմը՝ Ռուբեն Թարումյանի

ISBN 978-9939-9257-6-9



9 789939 925769

Տպագրված է «Մուսալեռ տպագրատանը»
Չափսը՝ 60×84 1/16: Տպ. մամուլը՝ 6
Տպաքանակ՝ 1000

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի
հրատարակչական բաժին
ք. Երևան, Մաշտոցի պող. 53
Հեռ. (010) 513033
publishing.matenadaran@gmail.com
www.matenadaran.am